

ՄԻՐԶԱ ԱԴԻԳԵՈՐԱԼ-ԲԷԿ



ՏԱԿՏԻՆԻ ՄԱՐԿԵԿ

ԵՐԵՎԱՆ 2016

9(47.925)

26-19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

h2

ՄԻՐԶԱ ԱԴԻԳԵՈԶԱԼ-ԲԷԿ

ՆԱԲԱԲԱԿ

5009

Աշխատասիրությամբ
ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆԻ

Աիրով՝ ՀՀ ԳԱԱ Արևելագրություն
ինստիտուտի գրադարանին:

Ս. Ասղաբյան



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՄԱՐՎՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
2016

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝
պ. գ. թ. Ա. Մալխասյան

Միրզա Աղիգյոզալ-բեկ
Ա 198 Ղարաբաղ-նամէ/Միրզա Աղիգյոզալ-բեկ;
Աշխատասիրութեամբ Արտակ Մաղալյանի.— Եր.:
«Զանգակ» հրատ., 2016.— 164 էջ:

Գրքում ներկայացված է մահմեդական պատմագիր Միրզա
Աղիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատության XIX դ. հայերեն
թարգմանությունը, որը հրատարակվում է ըստ Երևանի Մատենա-
դարանի N 4463 ձեռագրի: Միրզա Աղիգյոզալ-բեկի աշխատությունը
կարևոր աղբյուր է Արցախ-Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատ-
մության բազմաթիվ հարցերի լուսարանման համար:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, արևելագետների և
ընթերցող լայն հասարակայնության համար:

ՄԻՐԶԱ ԱՂԻԳՅՈՋԱԼ-ԲԵԿԻ
«ՂԱՐԱԲԱՂ-ՆԱՄԷ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ղարաբաղի խանության մահմեդական պատմագիր Միր-
զա Աղիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատության հայե-
րեն թարգմանությունը պահվում է Երևանի Մաշտոցի անվան
Մատենադարանում, 4463 թվահամարի տակ¹: Այս երկը շարա-
դրվել է 1845 թվականին², Ղարաբաղի գավառապետ, փոխ-
գնդապետ Մ. Կոլյուբակինի պատվերով³ և ներկայացվել Կով-
կասի փոխարքա Մ. Վորոնցովին:

Սույն աշխատության հեղինակ Միրզա Աղիգյոզալ-բեկը
ծնվել է XVIII դ. 80-ական թթ. սկզբին Ղարաբաղում: Նախ-
նական կրթությունը ստացել է Շուշիի մեթթեբում: 1795 թ.
ամռանը, երբ Իրանի Աղա Մուհամմադ խանի զորքերը ար-
շավել են Ղարաբաղ, Աղիգյոզալ-բեկը ծնողների հետ գաղթել
է Թիֆլիս: Իսկ երբ արյունարբու խանի հորդանները, չկարողա-
նալով գրավել Շուշին, արշավել են Թիֆլիս, նրանց հաջողվել
է փախչել Ախալքալաքի և Ախալցխայի կողմերը: Հետագա-
յում Աղիգյոզալ-բեկի ընտանիքը միացել է Գյուլիստանի Մե-
լիք-Աբով Մելիք-Բեգլարյանի հպատակներին և բնակություն
հաստատել Բոլնիսում⁴: Հայ մելիքի հովանավորությունն
ազատել է նրանց անվերջ թափառումներից:

1799 թ. վերջին Աղիգյոզալ-բեկը ծառայության է անցել
վրաց արքունիքում Ռուսաստանի նախարար Պ. Կովալենսկու

¹ Մատենադարանի ձեռագրացուցակում սույն ձեռագիրը ներկայացված է այս-
պես. «ԺԹ դ. (1828-ից հետո): Թերթ՝ 60: Թուղթ: 22x18: Միասյուն: Շղագիր:
Տող՝ 20-23: Կազմ՝ սովորաբար» (տես Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան
Մատենադարանի, Կ. Ա. Ե., 1965, էջ 1218): Իրականում 1828 թ. աշխատության
ժամանակագրական վերջին եզրն է, իսկ ձեռագիրը կարող էր կազմված լինել
միայն երկի շարադրման թվականից՝ 1845-ից հետո:

² Мирза Адигезаль-бек, Карабаг-Наме, Баку, 1950, с. 44.

³ Նույն տեղում, էջ 43:

⁴ Նույն տեղում, էջ 131:

մոտ որպես գրագիր-թարգմանիչ և աշխատել մինչև 1800 թ. վերջը: Այդ ընթացքում էլ նրա մոտ ձևավորվել է ռուսական կողմնորոշումը, որին հավատարիմ է մնացել ողջ կյանքում: 1804–1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ եղել է գեներալ-մայոր Դ. Լիսանևիչի քարտուղարը: 1811 թ. նրան շնորհվել է պողպորուչիկի զինվորական կոչում⁵:

Կովկասի կառավարչապետ, գեներալ Ա. Երմոլովի կարգադրությամբ 1816 թ. Միրզա Ադիգյոզալ-բեկը, որպես ռուսական իշխանությունների վստահությունը վայելող անձ, մեկնել է Ղարաբաղ՝ Մեհտի-Ղուլի խանի մոտ և այնտեղ մնացել մինչև վերջինիս փախուստը Իրան (1822 թ.): 1823–1826 թթ. նրան վստահվել է Ղարաբաղի սահմանապահ ուղեկալներից մեկի հրամանատարությունը⁶:

Միրզա Ադիգյոզալ-բեկը մասնակցել է 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին: Ռուսական բանակին մատուցած ծառայությունների համար 1829 թ. նրան շնորհվել է կապիտանի զինվորական կոչում:

1829 թ. վերջին կամ 1830 թ. սկզբին, շուրջ երեսնամյա զինվորական ծառայությունից հետո, գորացրվել է: 1830-ական թթ. Միրզա Ադիգյոզալ-բեկն աշխատել է Ղարաբաղի գավառական դատարանում, ինչը նրան հնարավորություն է տվել առավել մոտիկից ծանոթանալ երկրի պատմությանն ու կյանքին: Այս ժամանակաշրջանում էլ նա, ամենայն հավանականությամբ, նյութեր է հավաքել իր պատմագրական աշխատության համար: Այդ տարիներին նրա ջանքերով վերանորոգվել է պարսիկ մեծ բանաստեղծ Նիզամու կիսավեր դամբարանը⁷: 1845 թ., շուրջ 65 տարեկան հասակում, գրել է իր «Ղարաբաղ-նամէ» աշխատությունը: Միրզա Ադիգյոզալ-բեկը վախճանվել է 1848 թ. սեպտեմբերի 9-ին: Նրա մարմինն ամփոփվել է Գե-

րանբոյի Ռահիմլի գյուղի մոտ գտնվող ընտանեկան դամբարանում⁸:

Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» երկի հայերեն թարգմանությունը վերագրվում է Վարդան Օձնեցուն⁹: Այդ կապակցությամբ պատմաբան Ռ. Տիտանյանը գրում է. «Վարդան Օձնեցու «Պատմութեան» և Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատության այն գլուխների համեմատությունը, որոնք նվիրված են Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքին, ցույց է տալիս, որ Վ. Օձնեցին օգտվել է նշված գործից կամ սուլյնի հայերեն թարգմանությունից, որն ամենայն հավանականությամբ կատարել է ինքը՝ Վ. Օձնեցին, երբ Շուշի և Գանձակ քաղաքներում վարել է հոգևոր տեսչի պաշտոն»¹⁰:

Մենք նկատել ենք ևս մեկ փաստարկ, որը խոսում է այս տեսակետի իրավացիության օգտին: Բանն այն է, որ «Ղարաբաղ-նամէի» հայերեն թարգմանության ձեռագրի տիտղոսաթերթն ունի հետևյալ գրությունը. «Որպիսութիւնք խանացն Գանձակայ և Արձանագրութիւնք Անի քաղաքի, եկեղեցեաց և վանօրէից Շիրակ և Արշարունի գաւառաց՝ գործք արդեան ժամանակի, գրեալք ի ձեռն անյայտ հեղինակաց»¹¹, այսինքն՝ ժամանակին այս երկու աշխատություններն ընդգրկված են եղել միևնույն ձեռագրում: Հետագայում սույն ձեռագիրն ըստ բովանդակության բաժանվել է երկու մասի և դրանում ընդգրկված աշխատություններից յուրաքանչյուրին տրվել է առանձին թվահամար (ՄՄ, ձեռ. NN 4463 և 4464): Ստույգ

⁵ Նույն տեղում, էջ 132:

⁶ АКАК, т. VI, ч. I, Тифлис, 1874, л. 719, с. 516.

⁷ Бакиханов А., Гюлистан-Ирам, Баку, 1926, с. 165.

⁸ Минкевич-Мустафаева Н., Ахмедова С., Мавзолей семейства Мирзы Адигезальбека, «Доклады АН Азерб. ССР», 1948, N 5, с. 220–225.

⁹ Տիտանյան Ռ., Վարդան Օձնեցին պարսիկների 1795–1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքի մասին, «ՊԲԳ», 1965, N 3, էջ 211–212:

¹⁰ Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, աշխ. Ռ. Տիտանյանի, Ե., 1981, էջ 15:

¹¹ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. N 4463, էջ 1ա (այսուհետև սույն ձեռագրի էջերը հղելու ենք շարադրանքում):

Հայտնի է, որ N 4464 ձեռագրի գրիչը Վարդան Օձնեցին է¹², հետևաբար՝ ինքնին ծնվում է ենթադրությունը, որ N 4463 ձեռագրում ընդգրկված «Որպիսուլթիւնք խանացն Գանձակայ» («Ղարաբաղ-նամէ») աշխատության թարգմանիչը ևս նա է:

Հավանաբար Վարդան Օձնեցին այս երկը թարգմանել է իր «Նոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի Մեծի և Փոքու» աշխատությունը¹³ շարադրելու ընթացքում՝ դրանից օգտվելու նպատակով:

Միրզա Աղիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատության հայերեն թարգմանությունն ունի հետևյալ գլխաբաժանումը.

- ա) Որպիսուլթիւնք խանացն Գանձակայ (2ա-3ա),
- բ) Որպիսուլթիւնք խանացն Ղարաբաղու, որոց սկիզբն է խանն Սարուջնալեաց (3ա-7բ),
- գ) Հանգամանք Փանահ խանին ընդ Խամսայ մելիքաց (7բ-9ա),
- դ) Հիմնարկութիւն Շուշի բերդաքաղաքին (9ա-10բ),
- ե) Կալանաւորութիւն Քարիմ խանին, Քազմ խանին, Հէյտար-Ղուլի խանին և ազատութիւն նոցա ի Հաջի Չալապէն (11ա-12բ),
- զ) Գալուստ Աֆշար Ֆաթալի խանին Ուրմեցույ ի վերայ Ղարաբաղայ և պատերազմ նորա (12բ-15ա),
- է) Որպիսուլթիւնք Իբրահիմ խանին (15ա-17ա և 22ա-26ա)¹⁴,

ը) Յաղագս կրկնակի գալստեան Աղայ Մհամմատ շահին ի վերայ Ղարապաղայ և գնալոյ Իբրահիմ խանին ի Բալաքեան (26բ-28բ),

թ) Յաղագս կրկնակի գալստեան գորացն Ռուսաց յայսկոյս Կովկասու (29ա-35ա),

ժ) Յաղագս գնալոյ կնեազ Յիցիանովն ի կողմն Երևանու զկնի պատերազմի յաղթող լինելոյն և վերադառնալոյն առանց առնլոյ գերեան (35բ-39ա և 42ա)¹⁵,

ժա) Յաղագս խաղաղութեան կնեազ Յիցիանովին ընդ Իբրահիմ և Սալիմ խանացն (42բ-47ա),

ժբ) Յաղագս կրկնակի թշնամութեան Պարսից ընդ Ռուսաց և զրգուլթեան պատերազմի (47ա-51ա),

ժգ) Պատմութիւն այսր դիպուածոյ է յետագայս (51ա-58ա):

Առ այսօր «Ղարաբաղ-նամէ» աշխատության հայերեն թարգմանությունից լույս են տեսել միայն 7-րդ և 8-րդ գլուխները՝ Ռ. Տիտանյանի կազմած «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին» գրքում¹⁶: Իսկ 2011 թ. Վիեննայի Մխիթարյան միաբանության «Հանդէս ամսօրեայ» հայագիտական պարբերականում մենք հրատարակել ենք «Ղարաբաղ-նամէ» աշխատության հայերեն թարգմանության առաջին երեք գլուխները, որոնք չափազանց ուշադրավ տեղեկություններ են հաղորդում Արցախի մելիքությունների մասին¹⁷:

* * *

Միրզա Աղիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատությունը սկսվում է 1736 թ. Մուղանի դաշտում գումարված

¹² ՄՄ, ձեռ. N 4464, էջ 3ա, Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1218:
¹³ ՄՄ, ձեռ. N 4331:
¹⁴ Ձեռագրի 17բ-21բ էջերը չգրված են:

¹⁵ Ձեռագրի 39բ-41բ էջերը չգրված են:
¹⁶ Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 164-174:
¹⁷ Մաղալեան Ա., Միրզա Աղիգեօզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատության տեղեկություններն Արցախի մելիքությունների մասին, «Հանդէս ամսօրեայ», փետր-երևան, 2011, թիւ 1-12, էջ 375-408:

«կուռուլթայի» (ավագանու ժողով) նկարագրությամբ, որի ժամանակ Նազիրը տիրանում է Իրանի գահին: Այնուհետև վերջինս իր գահակալմանը դեմ արտահայտված Գանձակի խանի իշխանությունը թուլացնելու նպատակով՝ նրան հպատակվող ջևանշիր, օթուզիքի և քյաբիրու ցեղերին գաղթեցնում է Խորասան: Այստեղ չափազանց կարևոր նշանակություն ունի հեղինակի այն հաղորդումը, ըստ որի Նազիր շահը Խամսայի մելիքներին հանում է Գանձակի Զիադօղլի խաների ենթակայությունից և վերցնում իր ենթակայության տակ: «Եւ Խամսայ մէլիքաց ևս ետ հրաման, — գրում է Միրզա Ադիգոզալ-բեկը, — զի ամենևին չհնազանդելով խանացն Գանձակայ՝ զինքեանս ազատ գիտասցին և զհարկաւորեալ խնդիրս, առանց հաղորդութեան ուրուք, ինքեանք առաջի արասցեն շահին» (3ա): Փաստորեն, մահմեդական պատմագիրը վկայում է Նազիր շահի կողմից Գանձակի բեկլարբեկությունից անկախ հայկական ինքնավար իշխանության կազմավորման մասին:

Այս տեղեկության իսկությունը հաստատվում է նաև Խամսայի մելիքությունների գահերեց Դիզակի Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությամբ, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Ես չթողեցի, որ Հայաստանից գերի գնան: Արաղից շահ Նազիր գորեղ թագավորը իր գորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց»¹⁸: Միրզա Ադիգոզալ-բեկի վերոնշյալ տեղեկությունն ունի կարևոր նշանակություն հատկապես ազրբեջանցի ժամանակակից պատմաշինարարների կեղծիքներին իրենցը համարվող սկզբնաղբյուրի միջոցով հակադարձելու համար:

¹⁸ Փափագյան Գ., Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «ԼԳ», 1985, N 5, էջ 77:

Հաջորդ գլխում հեղինակը խոսում է Փանահ խանի ազգաբանություն, նրա հզորացման, Իրանի Ադիլ շահից (1747–1748) խանություն ռաղամ (շահական հրովարտակ) կորզելու և Վարանդայի Մելիք-Շահնազարի թողտվությամբ Արցախում հաստատվելու մասին: Այդպիսով, Նազիր շահի կողմից գլխատման դատապարտված քոչվոր ցեղապետը նրա եղբորորդի Ադիլ շահի կողմից բարձրացվեց խանի աստիճանի: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ Ղարաբաղի խանության հիմնադիր հորջորջվող Փանահը խանի տիտղոս ստանալու պահին դեռևս Խամսայում չէր գտնվում, այնտեղ ոչ մի իշխանություն չուներ: Այդ պահին Փանահի խանի տիտղոսը ձև էր առանց բովանդակության¹⁹:

Իր նորահաստատ իշխանությունն ամրապնդելու նպատակով Փանահը որոշում է անցնել նստակեցության և 1748 թ. Քյաբիրուի մահալում կառուցում է Բայաթ բերդը²⁰, որի տեղի ընտրության գործում կարևոր դեր էր խաղացել քյաբիրուի ցեղապետի դստեր հետ Փանահի ամուսնությունը: «Քյաբիրուն մեծ աջակցություն էր ցույց տալիս նրան, — գրում է Լեոն, — և նա արագ կերպով ավագակապետի դիրքից անցնում է տիրապետողի դիրքին, իրեն հպատակեցնելով Ղարաբաղի տափարակներում թափառող ցեղերը: Ինքն էլ մի թափառական՝ իշխանություն ձեռք բերելուց հետո նա հասկանում է նստակեցության անհրաժեշտությունը»²¹: Նստակյաց կյանքի անցնելու անհրաժեշտության գիտակցումը հեղաբեկում էր քոչվորական աշխարհընկալման մեջ:

Խամսայի մելիքները, զգալով իրենց մերձակայքում այս նոր ուժի երևան գալը, միանում են Շիրվանի կառավարիչ

¹⁹ Магалаян А., Арцахские меликства и возникновение Карабахского ханства, «Русский сборник», т. VIII, М., 2010, с. 16.

²⁰ Բայաթ ավերակ ամրոցը գտնվում է Կարկառ գետի ձախ կողմում, Աղջաբեղուց 26 կմ դեպի արևմուտք:

²¹ Լեոն, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, էջ 265:

«կուռուլթայի» (ավագանու ժողով) նկարագրությունը, որի ժամանակ Նազիրը տիրանում է Իրանի գահին: Այնուհետև վերջինս իր գահակալմանը դեմ արտահայտված Գանձակի խանի իշխանությունը թուլացնելու նպատակով՝ նրան հպատակվող ջեհանշիր, օթուզիքի և քյաբիրուլ ցեղերին գաղթեցնում է Խորասան: Այստեղ չափազանց կարևոր նշանակություն ունի հեղինակի այն հաղորդումը, ըստ որի Նազիր շահը Խամսայի մելիքներին հանում է Գանձակի Զիադօղլի խաների ենթակայությունից և վերցնում իր ենթակայության տակ: «Եւ Խամսայ մէլիքաց ևս ետ հրաման, — գրում է Միրզա Աղիբոյալ-բեկը, — զի ամենևին չհնազանդելով խանացն Գանձակայ՝ զինքեանս ազատ գիտասցին և զհարկաւորեալ խնդիրս, առանց հաղորդութեան ուրուք, ինքեանք առաջի արասցեն շահին» (3ա): Փաստորեն, մահմեդական պատմագիրը վկայում է Նազիր շահի կողմից Գանձակի բեկլարբեկությունից անկախ հայկական ինքնավար իշխանության կազմավորման մասին:

Այս տեղեկության իսկությունը հաստատվում է նաև Խամսայի մելիքությունների գահերեց Դիզակի Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությամբ, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Ես չթողեցի, որ Հայաստանից գերի գնան: Արաղից շահ Նազիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիգի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց»¹⁸: Միրզա Աղիբոյալ-բեկի վերոնշյալ տեղեկությունն ունի կարևոր նշանակություն հատկապես ազրբեջանցի ժամանակակից պատմաշինարարների կեղծիքներին իրենցը համարվող սկզբնաղբյուրի միջոցով հակադարձելու համար:

¹⁸ Փափազյան Գ., Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «ԼԳ», 1985, N 5, էջ 77:

Հաջորդ գլխում հեղինակը խոսում է Փանահ խանի ազգաբանություն, նրա հզորացման, Իրանի Աղիլ շահից (1747–1748) խանության ուղամ (չահական հրովարտակ) կորզելու և Վարանդայի Մելիք-Շահնազարի թողտվությամբ Արցախում հաստատվելու մասին: Այդպիսով, Նազիր շահի կողմից գրված խատման դատապարտված քոչվոր ցեղապետը նրա եղբորորդի Աղիլ շահի կողմից բարձրացվեց խանի աստիճանի: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ Ղարաբաղի խանության հիմնադիր հորջորջվող Փանահը խանի տիտղոս ստանալու պահին դեռևս Խամսայում չէր գտնվում, այնտեղ ոչ մի իշխանություն չուներ: Այդ պահին Փանահի խանի տիտղոսը ձև էր առանց բովանդակության¹⁹:

Իր նորահաստատ իշխանությունն ամրապնդելու նպատակով Փանահը որոշում է անցնել նստակեցության և 1748 թ. Քյաբիրուլի մահալում կառուցում է Բայաթ բերդը²⁰, որի տեղի ընտրության գործում կարևոր դեր էր խաղացել քյաբիրուլի ցեղապետի դստեր հետ Փանահի ամուսնությունը: «Քյաբիրուլն մեծ աջակցություն էր ցույց տալիս նրան, — գրում է Լեոն, — և նա արագ կերպով ավագակապետի դիրքից անցնում է տիրապետողի դիրքին, իրեն հպատակեցնելով Ղարաբաղի տափարակներում թափառող ցեղերը: Ինքն էլ մի թափառական՝ իշխանություն ձեռք բերելուց հետո նա հասկանում է նստակեցության անհրաժեշտությունը»²¹: Նստակյաց կյանքի անցնելու անհրաժեշտության գիտակցումը հեղաբեկում էր քոչվորական աշխարհընկալման մեջ:

Խամսայի մելիքները, զգալով իրենց մերձակայքում այս նոր ուժի երևան գալը, միանում են Շիրվանի կառավարիչ

¹⁹ Магалян А., Арцахские меликства и возникновение Карабахского ханства, «Русский сборник», т. VIII, М., 2010, с. 16.

²⁰ Բայաթ ավերակ ամրոցը գտնվում է Կարկառ գետի ձախ կողմում, Աղջաբեղուց 26 կմ դեպի արևմուտք:

²¹ Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, էջ 265:

Հաջի Չելեբիի հետ և արշավում Բայաթի վրա: Փանահ խանն իր ցեղակիցներով ամրանում է Բայաթում և սկսում պաշտպանվել: Ամրոցի պաշարումը որևէ արդյունքի չի հանգեցնում և դաշնակիցները վերադառնում են իրենց տեղերը, անշո՛ւշտ, հաջորդ տարի արշավանքը կրկնելու պայմանով: Նահանջի ճանապարհին Հաջի Չելեբին ասում է. «Փանահ խանն մինչ ցայդ էր որպէս դրամ ինչ անգիր (առանց սիքքայի), մեք եկաք և տուաք նմա զքանդակ» (5ա): Այդ արտահայտությունը ժողովրդի մեջ վերածվում է առածի:

Փանահ խանն, իր հերթին, գալիս է այն եզրակացություն, որ հարթավայրում գտնվող Բայաթ ամրոցը չի կարող հուսալի ապաստարան լինել թշնամիների հետագա արշավանքների դեպքում: Նման պայմաններում անգործությունը հավասարագոր էր կործանման: Եվ նա, առանց ժամանակ կորցնելու, «իրեն հակառակ ցեղերի և հայ մելիքների դեմ հաջողությամբ կռվելու համար մի նոր բերդ հիմնեց Թարնակյուտ անունով տեղում, Շահբուլազ մեծ աղբյուրի վրա, որ համարյա Խաչենի սահմանագլուխն էր կազմում: Այդ նոր բերդի մեջ էլ նա շուկա ու մզկիթ կառուցեց և 1749 թվին հաստատվելով այնտեղ՝ սկսեց ընդհարումներ Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքների հետ, աշխատելով քանդել մելիքների միությունը»²²: Բերդի տեղի ընտրության գործում կարևոր դեր է խաղացել նաև հորդառատ աղբյուրի առկայությունը, որի շնորհիվ լուծվել է ամրոցի ջրամատակարարման խնդիրը: Այդ աղբյուրի անունով էլ բերդը կոչվել է Շահբուլազ: Այդ ժամանակ Փանահը նույնիսկ չէր էլ կարող ենթադրել, որ իրեն երբևէ բախտ կվիճակվի բնավորվել Արցախի սրտում:

Այդ առիթը ներկայացավ այն ժամանակ, երբ Վարանդայի տիրահազակ Մելիք-Շահնազարը իր հետ թշնամացած Արցախի մյուս չորս մելիքությունների տիրակալներին դիմա-

դրելու համար դաշնակցեց Փանահի հետ՝ նրան տրամադրելով իր մելիքության տարածքում գտնվող Շուշի բերդը: Այս կապակցությամբ ուսև նշանավոր գործավար Ա. Սուվորովը իրավացիորեն նկատել է. «Իր հայրենիքի այս դավաճանը կանչել է Փանահ խանին..., տվել նրա ձեռքը իր ամուր բերդը՝ Շուշի դալան և սղնախով հանդերձ հպատակվել նրան»²³:

Այդ մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև Միրզա Ադիգյուզալ-բեկը. «Մելիք-Շահնազարն, տեսնալ զտկարություն իւր, ի հոգս անկաւ զհետևանաց գործոյն և եկն առ գերաստիջան խանն, որում և ծառայէր հաւատարմութեամբ, որպէս և զտեղին, ուր հիմնեցաւ Շուշի բերդաքաղաքն, եցոյց յիշեալ խանին» (6ա): Այս տեղեկությունը չափազանց հստակ ցույց է տալիս տիրահազակ Մելիք-Շահնազարի իրական դերակատարությունը նորաթուխ խանի՝ Արցախում հաստատվելու գործում: Մորթապաշտ դավաճանից հետին թվով «դիվանագետի» ստեղծումը ոչ այլ ինչ է, եթե ոչ պարզունակ պատմաշինարարություն, որն այս անգամ արդեն իրականացվում է առանձին հայ հեղինակների կողմից²⁴: Փաստերը ցույց են տալիս, որ Մելիք-Շահնազարի «դիվանագիտական» ծրագրերը չէին անցնում սեփական կաշին հայ մելիքների վրիժառույթունից փրկելու ցանկությունից անդին, որի համար չի խորչել անգամ դավաճանությունից: Իսկ անթաքույց դավաճանությունը որպես քողարկված «դիվանագիտություն» ներկայացնելը սպառնում է նորանոր «դիվանագիտական» դավաճանու-

²³ Нерсисян М., А. В. Суворов и русско-армянские отношения в 1770–1780-х годах, Ереван, 1981, с. 136.

²⁴ Նկատի ունենք Մելիք-Շահնազարի շտապիղ, լրագրող Ա. Մելիք-Շահնազարովի, քաղաքագետ Ռ. Բարսյանի և պատմաբան Պ. Չորանյանի հրապարակումները (տե՛ս Բաբայան Ը., Политическая история Карабахского ханства в контексте арцахской дипломатии XVIII века, Ереван, 2007; Կոբանյան Ս., Проблема легитимности Карабахских ханов в контексте политической истории Шуши. – «Рабочие тетради». Приложение к военно-научному журналу «Айкакан банак», 2013, N 1–2, с. 10–29):

²² Լեոն, մշվ. աշխ., էջ 265:

թյուններով: Եվ, վերջապես, Մելիք-Շահնազարի նորօրյա «փաստաբանները» թող պատասխանեն մեր այն հարցին, թե բազում վնասներից բացի ի՞նչ են շահել Խամսայի մելիքություններն ու արցախահայությունը նրա «դիվանագիտությունից»:

Մելիք-Շահնազարի հայրենադավ գործունեությունը չափազանց ծանր ազդեցություն ունեցավ Արցախի հայկական իշխանությունների վրա: Նրա գործունեությունը գնահատելիս միշտ պետք է նկատի ունենալ այդ հանգամանքը: Այս խորապատկերում, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Մելիք-Շահնազարի բացասական կերպարի հեղինակը ոչ թե Ադիգյոզալ-բեկն է, Բաֆֆին կամ մեկ այլ ուսուցիչսիրող, այլ հենց ինքը՝ Մելիք-Շահնազարը, իր ազգադավ գործերով²⁵:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ նաև պատմաբան Պ. Չորանյանի՝ վերջերս առաջ քաշած հիմնովին անընդունելի այն վարկածին, թե իբր իր երկում Միրզա Ադիգյոզալ-բեկն արտահայտել է Ղարաբաղի վերջին խան «Մեհտի-Ղուլիի մերկանտիլ շահերը»²⁶: Սկզբից ևեթ նշենք, որ իրականում Ադիգյոզալ-բեկի երկում Մեհտի-Ղուլի խանին հատկացված է երկրորդական դեր, նրա անունը հիշատակվում է ընդամենը մի քանի անգամ և այն էլ հիմնականում բացասական գծերով: Ինչպես արդեն նշվել է, Ադիգյոզալ-բեկն իր աշխատությունը գրել է Մեհտի-Ղուլի խանի մահվան տարում՝ 1845 թ., ուսսական իշխանությունների պատվերով, Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին ներկայացնելու նպատակով: Ակնհայտ է, որ նման պայմաններում ուսսական իշխանությունների կողմից վերացված խանության վախճանված տիրակալի անորոշ «շահերի» արտացոլումը կարող էր սպառնալ հեղինակի միանգամայն որոշակի բարեկեցությանը:

²⁵ Այդ մասին տես Մաղալյան Ա., Արցախի մելիքությունների պատմության մի քանի հարցերի շուրջ, «ՊԲԳ», 2014, N 1, էջ 183-195:

²⁶ Чобанян П., указ. соч., с. 29.

Ադիգյոզալ-բեկի երկում Մեհտի-Ղուլի խանի անունն առաջին անգամ հիշատակվում է մի հակառուսական խռովության առնչությամբ, երբ Կովկասի կառավարչապետ մարկիզ Պատուլուչչին գալով Ղարաբաղ՝ «զայրացուցեալ դառնագինս ոմանց ի բնակչացն՝ զՄեհտի-Ղուլի խանն արգել ի բանտի օր մի (այս և հետագա ընդգծումները մերն են — Ա. Մ.)» (46ա): Ինչպես դժվար է համոզվել, առաջին իսկ հիշատակումն անբարենպաստ լույսի ներքո է ներկայացնում Մեհտի-Ղուլի խանին: Այնուհետև հեղինակը հիշատակում է Մեհտի-Ղուլի խանի փախուստը Պարսկաստան. «Ի սմին ժամանակի խանք Ղարաբաղայ և Շիրվանու՝ ղեներալ-մայեօր Մեհտի-Ղուլի խանն և ղեներալ-լէյտենանտ Մուստաֆայ խանն, ի փախուստ գնացին յերկիրն Պարսից» (46բ): Այս հաղորդումը լիովին համահունչ է ուսս ուղմական պատմաբան Վ. Պոտտոյի հայտնի աշխատության տեղեկություններին²⁷:

Երկի նախավերջին գլխում հեղինակը ներկայացնում է Մեհտի-Ղուլի խանի սերտ գործակցությունը 1826 թ. հուլիսին ուսսական սահմանները ներխուժած պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզայի զորքերի հետ, ինչն ակնհայտ դավաճանական քայլ էր Ռուսաստանի հանդեպ: «Զօրք պարսից ընդ զանազան տեղիս սկիզբն արարին սպրդիլ ի սահմանս Ռուսաց, — գրում է Ադիգյոզալ-բեկը, — այն է՝ Հիւսէին խան սարտարն և Հասան խան ընդ կողմն Երեւանայ ի Ղարաքիլիսայ և ի Շուրակէլ, Ամիր խան սարտարն և Մեհտի-Ղուլի խանն ընդ կողմն Նախիջևանայ, Ղարաբաբայի և Սիսիանայ ի վերայ Շուշույ բերդին» (47բ): Այնուհետև Ադիգյոզալ-բեկն առանց որևէ բան սքողելու ներկայացնում է Մեհտի-Ղուլի խանի եղբոր և այլ ազգականների բացահայտ ապստամբությունը ուսսական իշխանությունների դեմ. «Եղբայր Մէհտի-Ղուլի խանին Սիւլէյման բէկն, ի միասին ընդ այլ ազգականաց, որք բնակեալ էին ի Վարանդայ գաւառակին ապստամբեալ՝ յայտնեաց զեննդու-

²⁷ Потто В., Кавказская война. Т. 2. Ермоловское время, М., 2007, с. 519.

թիւն թշնամութեան» (48բ): Մեկ այլ տեղում հեղինակը գրում է. «Բայց բազումք ի բնակչաց Ղարաբաղայ, բացի քաղաքացւոց, բէկք և սուլթանք, ի պատճառս Մէհտի-Ղուլի խանին գնացեալ էին առ Աբբաս-Միրզայն և առ յիշեալ խանն, զորոց և զհրամանս կատարէին՝ ստանալով ի կողմանէ շահգատային զթանգազին ընծայս և զպարգևս» (49ա):

Իսկ երկի վերջին գլխում Ադիգոզալ-բեկը ներկայացնում է Մեհտի-Ղուլի խանի առնետավազքը խորտակվող պարսկական բանակից դեպի ռուսական սահմանները. «Յայսմ միջոցի նախնի կառավարն Ղարաբաղու՝ դեներալ-մայիօր Մէհտի Ղուլի խանն, որ ի կողմանէ տէրութեանն Իրանայ բնակէր ի Տարալակեագ, որ է գաւառակ Նախիջևանայ յերևան կոյս, երթեկեկութիւն առ կուսակալն Պասկեվիչ առնելով՝ կամէր ապստամբիլ ի տէրութենէն Իրանայ և գալ դարձեալ մտանել ընդ Հպատակութեամբ և Հնազանդութեամբ այսր մեծի տէրութեան (Ռուսաստանի – Ա. Մ.)» (55ա): Հավելենք, որ վերադարձից հետո Մեհտի-Ղուլի խանը չէր վայելում ռուսական իշխանությունների վստահությունը և գտնվել է նրանց հսկողության ներքո²⁸:

Ահա սրանք էին Միրզա Ադիգոզալ-բեկի երկում Մեհտի-Ղուլի խանին վերաբերող հիմնական տեղեկությունները: Ինչպես տեսնում ենք, դրանցում խոսք անգամ չկա Մեհտի-Ղուլի խանի «մերկանտիլ» շահերի մասին:

Փանահ խանի Շուշիում Հաստատվելուց հետո նորաստեղծ խանության կազմի մեջ էին մտնում Դաշտային Ղարաբաղի մի մասը և Շուշին: Սակայն, Շուշին էր, որ կենսունակություն հաղորդեց տափարակներում անխուսափելի կործանման դատապարտված խանությանը՝ ձևը վերածելով բովանդակության:

Երկի 3-րդ գլխում ներկայացված է Փանահ խանի Համառպայքարը Խամսայի մելիքություններն իրեն հպատակեցնելու և Արցախում գերիշխանություն ձեռք բերելու համար: Խամսայի մելիքները ստիպված էին նոր մարտահրավերների դիմակայելու Արցախում քոչվոր ջեանշիր ցեղի սարըջալու ճյուղի ցեղապետ Փանահի հայտնվելուց հետո: Հենց Փանահի ժամանակներից սկսվեց այլացեղ և այլակրոն էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ: «Գունդն Քեանկեարուլուի, որ հպատակ միոյ հազարապետիս էին, ի ժողովրդենէն Նախիջևանայ, – գրում է Ադիգոզալ-բեկը, – և Տամուրչի-Հասանլուեցիք, որ ի Վրաստան եղեալ Տամուրչի-Հասանլուեցւոյն են՝ ժողովուրդ ճոխ, միում հազարապետի հպատակ էին, և ժողովուրդն Զինլուի, որ հպատակ էին հազարապետի միում, և էին յերևելի Հասարակութեանց Վրաստանու, սեպական յօժարութեամբ իւրեանց դառնալով ի Հպատակութիւն և ի ծառայութիւն խանին՝ բնակեցան յերկրին Ղարաբաղու և մտերմութեամբ ծառայէին նմա» (10ա–10բ):

Վերոնշյալ ցեղերի թվին կարող ենք ավելացնել թուրք-թաթարական և քրդական քոչվոր ու կիսավայրենի այնպիսի ցեղախմբերի, ինչպիսիք են ջեանշիրցիները, սարըջալուները, օթուզիքիները, քյաբիբուները, քուլանիները, իգիրմիդորթները և այլք, որոնց բնակեցումը Ղարաբաղի տարածքում իսկական չարիք դարձավ արցախահայության համար: Այդպիսով, Արցախում բնակվող միատարր ու միաձույլ հայության մեջ մտավ օտարասեռ էթնիկ տարրը՝ իր հետ բերելով մտքի և մշակույթի ահավոր հետամնացություն²⁹: Խաշնարած ցեղերի՝ Արցախ ներթափանցելուց հետո ընկած ողջ ժամանակաշրջանը հազեցած է եղել բնիկ հայերի և եկվոր էթնիկ տարրերի հակամարտությամբ: Բերված ցեղախմբերը, առաջին հերթին, Փանահ խանի համար հուսալի դաշնակիցներ էին Արցախի՝ իրեն

²⁸ Потто В., Кавказская война. Т. 3. Персидская война 1826–1828 гг., М., 2007, с. 293.

²⁹ Ալյան Վ., Շուշի, Ե., 1991, էջ 31:

չենթարկվող հայկական մելիքությունների դեմ պայքարի ժամանակ³⁰ :

Հեղինակն իր շարադրանքը սկսում է Փանահ խանի և Դիզակի Մելիք-Եսայու ընդհարումների նկարագրությամբ: Նա մասնավորապես գրում է. «Յառաջին երևման Փանահ խանին մելիք Դիզակայ՝ սերունդ Մելիք-Եկանայ, թշնամացեալ ընդ նմա՝ ի ժամանակս ժամանակս պատերազմ գրգռեցին ընդդէմ նորա՝ յաղթելով նմա երբեմն ևս» (7բ–8ա): Այս տեղեկության իսկությունը հաստատում է նաև հայ պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովը (Հովսեփ Ներսիսյանց), որը գրում է. «Փանահի խանության սկզբնական շրջանում Դիզակի Մելիք-Եսային, որը հայտնի էր իր քաջությամբ, նրա դեմ բազում կռիվներ է մղում: Որոշ ժամանակ (յոթ տարի – Ա. Մ.) նրանց միջև թե՛ մարտեր էին տեղի ունենում: Եվ մի անգամ Մելիք-Եսային Փանահ խանի զորքը այնպես է ջախջախում ու ցաքուցրիվ անում, որ նա, Բայաթի կողմը փախչելով, մեկ ամիս անտառներում է անցկացնում՝ չհամարձակվելով այնտեղից դուրս գալ»³¹:

Սակայն, Միրզա Աղիբյուզալ-բեկի այն հաղորդումը, թե «ի վերջոյ Փանահ խանն յօժանդակութենէ բարձրելոյն յաղթող գտեալ՝ զոմանս ի նոցանէ սպան և զոմանս տուժեաց անխնայ» (8ա), չի համապատասխանում իրականությանը: Հայտնի է, որ Փանահ խանի մահից հետո Մելիք-Եսային դեռ երկար շարունակում էր պայքարել նրա որդու՝ Իբրահիմ խանի դեմ: Վերջինիս կարգադրությամբ էլ դավադրաբար «ի 1230 (1781) թուին Դողու Մալիք Սային սպանեցին»³²: Այդ կապակցությամբ ռուս զորավար Ա. Սուվորովը 1781-ին իշխան Գ. Պոտյոմկինին ուղղած զեկուլցում գրում է. «Շուշիի Իբրահիմ խանը

³⁰ Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Ե., 2007, էջ 182:

³¹ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Ե., 2000, էջ 50:

³² ՄՄ, ձեռ. N 3881, էջ 86բ:

նր չարություն գործադրելով՝ որոշ գումար է պահանջել Դիզակի Մելիք-Եսայուց և չարչարելով էլ սպանել նրան»³³: Մելիք-Եսայու մահվան թվականը հաստատվում է նաև նրա տապանաքարի արձանագրությամբ. «Այս է տապան մեծին Մելիք Եկանի որդի Մելիք Եսայուն, և էր սա իշխան կարգեալ Նատիր շահէն: ԼԳ (33) ամ տիրեաց երկիրս Դիզակու և արար բազում քաջութիւն և յաղթութիւն ընդ անօրէնսն. և էր ինքն պարթև և յոյժ զօրաւոր քան զառաջինսն իւր. և թիւ կենաց նորա ԿԱ (61) ամաց, վախճանեցաւ թվին ՌՄԼ (1781), հոկտեմբերի Բ (2)-ին երեքշաբթի. որ ընթեռնուք, մեկ Հայր մեղայ ասացէք. ամէն»³⁴:

1749 թ. Փանահ խանը ուխտադրժորեն ձերբակալեց հայ մելիքների կողմից իր մոտ բանակցությունների եկած Զրաբերդի Ալլահղուլի սուլթանին և, Նախիջևանի կառավարիչ Հեյդար-Ղուլի խանի դրդմամբ, հրամայեց զլիսատել նրան³⁵: Փանահն այդպես էր վարձահատույց լինում իր կյանքը Նադիր շահի դահիճների ձեռքից փրկած Զրաբերդի մելիքին: Ալլահղուլի սուլթանին հաջորդել է եղբայրը՝ Մելիք-Աղամը (Հաթամ):

Փանահի հաջորդ գոհը դարձավ Խաչեն գավառի տիրակալ Մելիք-Ալլահվերդի Հասան-Ջալալյանը, որը դավադրաբար սպանվեց 1755 թվականին: Դրանով անդառնալի հարված էր հասցվում Հասան-Ջալալյանների աշխարհիկ իշխանությանը: Այնուհետև, Մելիք-Ալլահվերդուն դավելու համար, Փանահ խանը Խաչենի մելիք է նշանակում Խնձրիստան գյուղի

³³ Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, Ереван, 1990, с. 172; Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, т. I, составитель Ю. Барсегов, М., 2008, с. 79.

³⁴ Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Ե., 1999, էջ 199, Դիվան հայ վիճագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1982, էջ 179:

³⁵ Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1951, էջ 396:

տանուտեր Միրզախան Մելիք-Միրզախանյանին: Այսպիսով, Արցախի հինգ մելիքություններից երկուսը՝ Վարանդան և Խաչենը, այլևս անվնաս էին Փանահի համար, իսկ Գյուլիստանի, Զրաբերդի և Դիզակի մելիքությունների վրա նրա իշխանությունը էջր տարածվում:

Զրաբերդի Մելիք-Աղամը և Գյուլիստանի Մելիք-Հովսեփը (Մելիք-Յուսուբ), «միաբանեալ թշնամանօք ընդդէմ խանին և ի բերդն Զերմկայ (Զրաբերդի – Ա. Մ.) ամրացեալ» (ՏԲ), երկար ժամանակ հաջողութամբ մարտնչում էին նրա դեմ: «Փանահ խանն ևս ո՛չ սակաւ եցոյց ընդդէմ նոցա զբազմապիսի յարձակմունս, – գրում է Միրզա Ազիզյոզալ-բեկը, – բայց ի պատճառս ամրութեան բերդի նոցա թէև դարձաւ առանց հասանելոյ ի նպատակ իւր, սակայն զարտորայս նոցա, որ ի ստորոտ լերինն, ոտնկոխ արարեալ հեծելագօրաց իւրոց՝ բոլորովիմբ ապականեաց զայնս: Եւ զանցս ճանապարհաց ի չորից կողմանց խափանեաց, և այսպէս զամս չորս նեղութեամբ և դառն վշտօք ընդդէմ նորա մնացին ի բերդի անդ յանշարժութեան: Եւ յայնմ ընդ երկար միջոցի բազումք թշնամացան ընդ խանին և յամենայն ժամ, ըստ օրինակի օտար թշնամեաց, հասուցանէին յիշեալ խանին ի պատերազմի վնասս բազումս» (ՏԲ–9ա):

Հետագայում այդ մելիքները նահանջում և ամրանում են Գյուլիստանի բերդում: Այնտեղ Փանահ խանի դեմ նրանց մղած հաղթական կռիվներից մեկի վերաբերյալ հետևյալ ուշագրավ տեղեկություններն է հաղորդում կապիտան Օթար Թումանովը 1754 թ. դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային հղած զեկուցագրում. «Հայերը գտնվում էին Սղնախում՝ Գյուլիստանի բերդում: Նրանց գլխավորները մելիք Յուսուբ և մելիք Աթամ են կոչվում: Սրանք մինչ 1500 [զինված] մարդ ունին: Այս հայերի վրա հարձակվել է Փանախանը, հայերը հաղթել են, Փանախանի մարդկանցից 300-ի չափ սպանել են: Այս պատերազմը եղավ 1754 թվի օգոստոսի

26-ին»³⁶: Դիմադրությունը շարունակվել է նաև հաջորդ տարի, ինչպես տեղեկանում ենք Օթար Թումանովի 1755 թ. մարտի 21-ի զեկուցագրից. «Սղնախի հայերը մեկուսացած են իրենց տեղում, ներկայումս Փանախանին և թուրքերին չեն ծառայում»³⁷: Իսկ նույն թվականի նոյեմբերի 20-ի զեկուցագրով Օթար Թումանովը հաղորդում է Ղզլարի պարես Իվան Ֆոն Ֆրաուենդորֆին. «Սղնախի հայոց մելիք Յուսուբը այստեղ (Վրաստան – Ա. Մ.) թագավորների մոտ եկավ իր ընտանիքով՝ 60-ի չափ մարդկանց ուղեկցությամբ: Սղնախը դատարկվել է: Իրոք հացի թանկություն է եղել այնտեղ... Գյուղացի-ռայաթը Փանախանին է մնացել: Մելիք Աղամն իր ընտանիքը Գյանջա է ուղարկել, ինքը դեռևս իր բերդումն է գտնվում, սակայն ներկայումս ոչ մի տեղից օգնություն չի երևում»³⁸: Այսպիսով, չզիմանալով Փանահ խանի հարածուն ճնշմանը՝ մելիքներն իրենց զորքի և ժողովրդի մի մասի հետ հեռանում են իրենց տիրույթներից և ապաստանում Գանձակի Շահվերդի խանի մոտ, սպասելով հարմար առիթի՝ Փանահի դեմ իրենց արյունոտ գոտեմարտը շարունակելու համար: Յոթ տարի մելիքները մնում են Շամխորում:

Լսելով Փանահ խանի հզորացման մասին, 1757 թ. մեծաքանակ զորքով Շուշիի վրա է արշավում Մաղանդարանի կառավարիչ Մուհամմադ Հասան խան Ղաջարը՝ Իրանի ապագա շահ Աղա Մուհամմադ խանի հայրը: Նրա բանակը կանգ է առնում Շուշիի մերձակայքում գտնվող Խաթուն-Արխ վայրում: Սակայն, շուրջ մեկ ամիս տևած պաշարումը որևէ արդյունքի չի հանգեցնում, և Մուհամմադ Հասան խանը՝ լսելով Բերիմ

³⁶ Մելիքսեթ-բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Կ. Գ, Ե., 1955, էջ 107, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в. Документы подобрал, подготовил к печати и предпослал им исследование В. Гамрекели, Тбилиси, 1968, с. 140:

³⁷ Մելիքսեթ-բեկ Լ., նշվ. աշխ., էջ 108:

³⁸ Նույն տեղում, էջ 109, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., с. 296.

խան Զենդի ուժեղացման ու դեպի Արաղ շարժվելու մասին, հապշտապ հետ է վերադառնում: Շտապելու պատճառով նա Խաթուն-Արխում է թողնում անգամ Թեհրանից բերած երկու թնդանոթները: Փանահ խանը դրանք տանում է Շուշի, որի բերդապարիսպները քանդելու համար նախատեսված թնդանոթները սկսում են պաշտպանել քաղաքը:

Մուհամմադ Հասան խանի ձեռնունայն վերադարձից հետո 1761 թ. մեծաքանակ բանակով Ղարաբաղ է արշավում Ուրմիայի կառավարիչ Ֆաթալի խան Աֆշարը, որը Նադիր շահի առաջապահ զորագնդի հրամանատարն էր եղել: Նա, ինչպես կարդում ենք Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում, «ի ՌՄԺ (1761) ամի թուականութեանս մերում, ժողովեալ զբազում զօրս ի վերայ իւր, չոգաւ ի վերայ մեծ և անուանի դղեկին Շօշ կոհեցեալ ամրագունեց բերդին՝ անել զնա ի ձեռն, և զիշխօղն նորին զՓանահ խանն, որ ի Զիւանշիր յազգէ»³⁹: Ֆաթալի խանի բանակը կանգ է առնում Ասկերանի մոտ գտնվող մի դաշտում, որտեղ ամրություն է կառուցում և ձմեռում: «Ի սմին ժամանակի, — գրում է Միրզա Ադիգյոզալ-բեկը, — մելիքք Զրաբերդ և Թալիշ գաւառակաց՝ հայազգի Մելիք-Աղամն և Մելիք-Ուսուբն, ևս կառուցին ի միոյ կողմանէ բանակի խանին զամրոցս ընդդէմ Փանահ խանին» (12բ–13ա): Վեց ամիս այնտեղ մնալուց հետո կողմերը հաշտության բանակցություններ են սկսում, և «Փանահ խանն արտաքուստ հնազանդություն է հայտնում նրան ու պատանդ է տալիս իր որդի Իբրահիմ-Խալիլ աղային»⁴⁰: Այդպիսով, Փանահ խանն ընդունում է իր կախվածությունը Ֆաթալի խանից:

Որդուն ազատելու նպատակով Փանահը դաշնակցում է հետզհետե հզորացող վեբլի Բերիմ խան Զենդի հետ, որը Ֆաթալի խանի ռիսերիմ թշնամին էր: Նրանց բանակը 1763 թ. Ուր-

միայում պարտության է մատնում Ֆաթալի խանին⁴¹: Ազատելով պատանդի կարգավիճակով Ուրմիայում գտնվող Իբրահիմ-Խալիլ աղային՝ Բերիմ խան Զենդը 1763 թ. խանի տիտղոս է շնորհում նրան և ուղարկում Ղարաբաղ⁴², իսկ Փանահ խանին իր հետ վերցնելով տանում է Շիրազ: Այնտեղ էլ 1763 թ. Փանահը մահանում է: Թեև, ըստ Ղարաբաղի խանության պատմագիրների, Բերիմ խանը նրան Շիրազ էր տարել պատվելու նպատակով, սակայն ակնհայտորեն Փանահը նրա մոտ էր գտնվում պատանդի կարգավիճակով: Այս տեսակետի օգտին է վկայում այն փաստը, որ այդ ժամանակ Բերիմ խանը որպես պատանդ իր հետ Շիրազ է տանում նաև Ղարաղաղի Բյազիմ խանին և Խոյի Շահբազ խան Դումբուլիին⁴³:

Այդ է պատճառը, որ նրանք քար լուրթյուն են պահպանում Փանահի մահվան հանգամանքների վերաբերյալ: Սակայն, այդ բացը լրացնում են հայ հեղինակները, մասնավորապես՝ Ներսեսովն այդ մասին գրում է. «Փանահ խանը դիտմամբ մեռած է ձևացել, մերձավորներին նախօրոք պատվիրելով, որ իր «դին» Ղարաբաղ տանեն, որպեսզի այդպես Շիրազից դուրս գար, ճանապարհին ձի հեծներ և գնար Ղարաբաղ՝ ստանձնելու այնտեղի իշխանությունը: Բերիմ խանը այս հասկանալով ասում է. «Նա իմ լավ բարեկամն էր, պետք է նրա դիակը պատվով ու հարգանքով Ղարաբաղ ուղարկեմ»: Հրամայում է նրա որովայնը պատռել, դեղերով լցնել, որից հետո միայն ճանապարհ է դնում Ղարաբաղ»⁴⁴: Հիրավի, ճակատագիրը իրեն արժանի մահ էր նախապատրաստել ողջ կյանքը

³⁹ Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 57:

⁴⁰ Бакиханов А., Гюлистан-Ирам, с. 130.

⁴¹ Строева Л., Керим-хан Зенд и ханы, «Иран. История и современность». Сборник статей. М., 1983, с. 93.

⁴² Мирза Джамал Джеваншир Карабагский, История Карабага, Баку, 1959, с. 76; Мирза Адигезаль-бек, Карабаг-Наме, с. 72.

⁴³ Կոստիկյան Բ., Ղարաբաղի XVIII դարի պատմությունը ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ի, «ՊԲԳ», 1999, N 2–3, էջ 355:

⁴⁴ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 62, տե՛ս նաև Բաֆֆի, Խամսայի մեկրությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987, էջ 467:

խարդավանքների մեջ անցկացրած այս մարդու համար. ավագակապետ դարձած երբեմնի մուսուլմանները, որին կյանքի ակնարկները բարձրացրին խանի աստիճանի՝ այնտեղից որպես հասարակ մի խաբերայի ցած գլորելու համար:

Կարևոր է նշել նաև այն փաստը, որ Փանահն անգամ մի կտոր հող չունեի Խամասայի մելիքությունների տարածքում, որը որպես գերեզմանատեղ ծառայեր նրա համար: Այդ է պատճառը, որ հարազատները նրա դիակը տարան և թաղեցին Աղզամի մոտ գտնվող Իմարեթ վայրում⁴⁵:

Փանահի մահից հետո (1763) նրա որդին և հաջորդը՝ Իբրահիմ խանը (1763–1806), ստիպված էր դեռ երկար պայքար մղելու ինքնիշխան հայկական մելիքությունների դեմ:

Միջոց Ադիգյոզալ-բեկի աշխատությունների հաջորդ երկու գլուխները նվիրված են Իրանի Ղաջարական արքայատոհմի հիմնադիր Աղա Մուհամմադ խանի⁴⁶ դեպի Անդրկովկաս կատարած ավերիչ արշավանքների նկարագրությունը: 1795 թ. պարսկական գերիշխանությունն Անդրկովկասում վերականգնելու նպատակով արյունարբու խանի գլխավորած ահարկու բանակը արշավում է Ղարաբաղ և պաշարում Շուշի բերդաքաղաքը: «Աղայ Մուհամմատ շահն պաշարեալ զբերդն՝ մնաց անդանօր յընթացս երեսուն և երեց ատուրց, — գրում է հեղինակը, — և առաքեաց զպատգամաւորս և զթուղթս բարեկամական և զբազում միջնորդս, զի կարասցէ ինքեան հնազանդեցուցանել զիբրահիմ խանն հանդերձ բնակչօք Ղարաբաղու» (17ա):

Սակայն, չկարողանալով գրավել Շուշիի անառիկ բերդը, Աղա Մուհամմադ խանի հորդաներն արշավում են Վրաստան և 1795 թ. սեպտեմբերի 12-ին գրավում ու ավերում մայրաքաղաք Թիֆլիսը: Ադիգյոզալ-բեկն այսպիսի մռայլ գույներով է ներկայացնում Թիֆլիսի աղետը. «Ջորք պարսից մտեալ ի քա-

ղաքն ի Տիֆլիս՝ զոմանս ի բնակչացն ճարակ սրոյ ետուն, զոմանս ի գերութիւն վարեցին, և զայս բազումս կապեալ ի կապանս՝ ի ձեռն զօրաց իւրեանց դիւբարոյից տանջէին» (23բ): Աղա Մուհամմադ խանի զորքերը Թիֆլիսից հեռանում են սեպտեմբերի 20-ին⁴⁷ և ձմեռում Մուղանի դաշտում:

1796 թ. գարնանը Վրաստանին օգնություն հասնելու նպատակով Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա II-ի հրամանով Անդրկովկաս է շարժվում գեներալ Վ. Զուբովի գլխավորած ռուսական մի զորախումբ: Սակայն, կայսրուհու մահից հետո նրան հաջորդած Պավել I-ը դադարեցնում է ռուսական զորքերի արշավանքը և նրանց հետ կանչում Անդրկովկասից:

Լսելով գեներալ Վ. Զուբովի զորաբանակի վերադարձի լուրը՝ Աղա Մուհամմադ խանը 1797 թ. երկրորդ անգամ է արշավում Անդրկովկաս: Իբրահիմ խանը, երկյուղելով ներքինի շահի դատաստանից, ընտանիքով փախչում է Դաղստան իր աներ Ումմա (Օմար) խանի մոտ: «Աղայ Մուհամմատ շահն, մտեալ ի Շուշի քաղաք, — գրում է Ադիգյոզալ-բեկը, — տարածեաց զնեղութեան զձեռն իւր ի չարչարել զբնակիչսն և որպէս զքարք խածանէր զմեղաւորս և զանմեղս, և զբազումս ի մեծամեծաց, ի ծանօթից, ի բէկաց և յաղալարաց կալեալ՝ եղ ի բանտի» (27ա): Ի վերջո, Աղա Մուհամմադ խանի անմարդկային դաժանությունները նրա դեմ են հանում նույնիսկ իր սպասավորներին, որոնց ձեռքով էլ 1797 թ. հունիսի 6-ին շահը սպանվում է իր ննջարանում⁴⁸, իսկ պարսկական զորքը խուճապահար փախուստի է դիմում: Ադիգյոզալ-բեկի աշխատությունը չափազանց ուշադրավ տեղեկություններ է հաղորդում Աղա Մուհամմադ խանի արշավանքների մասին և, անտարակույս, ունի սկզբնաղբյուրի նշանակություն:

⁴⁵ Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և Ղարաբաղի խանության ծագումը, «Հայոց պատմության հարցեր», N 10, Ե., 2009, էջ 110:

⁴⁶ Մրա մասից տես Жизнеописание Ага-Магомет-хана Каджара, СПб., 1835.

⁴⁷ Արախանեանց Ա., Կովկասը հարիւր տարի առաջ: Շահ Աղա-Մահմադ-խանը Թիֆլիսում, «Մուրճ», Թիֆլիս, 1895, N 9–10, էջ 1290:

⁴⁸ «Տարագ», 1890, թիւ 10, էջ 142, Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 204:

Երկի հետագա ողջ շարադրանքը նվիրված է Անդրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստատման պատմությանը: Վրաստանի միացումը Ռուսաստանին հանգամանորեն ներկայացնելուց հետո հեղինակն անցնում է Կովկասի կառավարչապետ իշխան Պ. Դ. Յիցիանովի (1802–1806) ղեկավարման շրջանում տեղի ունեցած հիշարժան իրադարձությունների նկարագրությանը:

Երկում մեծ տեղ է հատկացված 1804–1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին: Ադիգյոզալ-բեկը մի ամբողջ գլուխ է նվիրել իշխան Յիցիանովի գլխավորությամբ 1804 թ. ամռանը տեղի ունեցած Երևանյան առաջին արշավանքին, որն ավարտվել է անհաջողությամբ: Պարենի և ռազմամթերքի պակասի պատճառով Պ. Յիցիանովը 1804 թ. սեպտեմբերի 2-ին դադարեցրել է պաշարումը և վերադարձել Թիֆլիս:

1805 թ. Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունները հպատակեցնելուց հետո իշխան Յիցիանովը մեկնել է Բաքու, ուր տեղի Հուսեին-Ղուլի խանի կազմակերպած դավադրության հետևանքով էլ սպանվել է 1806 թ. փետրվարի 8-ին⁴⁹: Սակայն, նրա սպանությանը Անդրկովկասում Ռուսաստանի տիրապետության հաստատման գործընթացը չդադարեց: Հիւրավի, իշխան Յիցիանովի այն խոսքերը, թե՛ «Գերաստիճան կայսրն մեր ունի իբրև զիս զբազում միլիոն զինուորս (սալդաթ), և եթէ ես մեռանիցիմ՝ չի՛ք ինչ փոյթ արդա՛րև զինէն, և չի՛ք ինչ խտիր ընդ իս և ընդ սոսկական զինուորի ուրեք ի բազմաց անտի» (43ա), մարգարեական դուրս եկան: Հնի և նորի այդ պայքարի ելքը կանխորոշված էր, որքան էլ նենգ ու դավադիր լինեին խաները:

Այստեղ հարկ է նկատել, որ Ադիգյոզալ-բեկը ոչինչ չի գրում Իբրահիմ խանի անփառունակ վախճանի մասին: Այդ բացը կրկին լրացնում է հայ պատմագիր Ներսեսովը, որը մաս-

նավորապես գրում է. «Քանի որ Իբրահիմ խանը շատ ծեր էր, հաճախ նրա գլխում խելահեղ մտքեր էին ծագում: Այս ընթացքում իր մի քանի մերձավորների հետ զաղտնի որոշում է դրբաշների պետությանը հպատակություն հայտնել: Շուշի բերդից դուրս գալով՝ նրա ստորոտում գտնվող Սանգյար-խան կոչված վայրում խփում է իր վրանը, որպեսզի դրբաշների բանակի ժամանելուն պես նրանց միանա, ռուսական պետությանը դավաճանի և այդ կերպ դառնա շահի օրինավոր հպատակը... Այս պատճառով մայր Լիսանեիչը, որը հայտնի էր «դելու-մայր» («խենթ մայր» – Ա.Մ.) անվամբ, 1806/1221 թ. մայիսի 8-ի գիշերը 100 զինվորներով բերդից դուրս գալով՝ Իբրահիմ խանի վրանը չորս կողմից շրջապատում են ու նրան՝ իր մերձավորների հետ, տեղում կոտորելով՝ ամբողջ վերադառնում»⁵⁰: Այսպիսով, ողջ կյանքի ընթացքում այլոց համար խարդավանքի սարդոստայններ հյուսած Իբրահիմ խանը, ի վերջո, կործանվեց իր խարդավանքների սարդոստայնում:

Հետագա շարադրանքում հեղինակը ներկայացնում է Կովկասի կուսակալներ կոմս Ի. Վ. Գուդովիչի (1806–1809), գեներալ Ա. Պ. Տորմասովի (1809–1811), մարկիզ Ֆ. Օ. Պաուլուչչի (1811–1812) և գեներալ Ն. Ֆ. Ռոտչչևի (1812–1816) կառավարչապետության ժամանակ տեղի ունեցած հիմնական իրադարձությունները՝ կանգ առնելով մեծ մասամբ մարտական գործողությունների վրա: Այդ առումով ուշագրավ է կոմս Ի. Գուդովիչի գլխավորությամբ 1808 թ. աշնանը տեղի ունեցած ռուսական զորքերի Երևանյան երկրորդ արշավանքի հակիրճ նկարագրությունը, որը ևս ավարտվեց անհաջողությամբ: «Յետ անցանելոյ ժամանակաց ելին ի վերայ Երևանայ, – գրում է Ադիգյոզալ-բեկը, – ուրանօր արարեալ զանչափ արիւնհեղութիւն, ի կորուստ մատնելով զբազում անձինս և ի վերջոյ ի միտ առեալ զանձեռնհասութիւն իւրեանց ի նպատակ՝ զձայն թմբ[ու]կի յետադարձութեան բարձրացուցին» (45ա):

⁴⁹ Дубровин Н., Закавказье от 1803–1806 года, СПб., 1866, с. 478–479; Потто В., Кавказская война. Т. 1. От древнейших времен до Ермолова, М., 2007, с. 257.

⁵⁰ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 92-93:

Նույն գլխում Ադիգյոզալ-բեկը ներկայացնում է Գյուլ-լիստանի հաշտության պայմանագրի կնքումը 1813 թ. հոկտեմբերի 12-ին⁵¹, որով ավարտվեց 1804–1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը:

Այնուհետև հեղինակը կանգ է առնում Կովկասի նշանավոր կուսակալներից մեկի՝ Ա. Պ. Երմոլովի (1816–1827) գործունեության նկարագրման վրա⁵², որն «ամենայն գործոց երկրին վերահաստեղծելն առնելով՝ դնէր ուրեք ուրեք ի նորոյ զկանոնս ըստ աւանդութեան և սովորութեան երկրին» (46բ): Հարկ է նշել, որ հենց Ա. Երմոլովի կառավարչապետության շրջանում տեղի ունեցավ իրենց դարն ապրած Ղարաբաղի, Շիրվանի և Շաքիի խանությունների լուծարումը, որը ևս իր արտացոլումն է գտել սույն գրքում:

Երկրի վերջին գլուխներում Ադիգյոզալ-բեկը ներկայացնում է 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ տեղի ունեցած հիմնական իրադարձությունները: 1826 թ. հուլիսին պարսկական մեծաքանակ զորքերը, գահաժառանգ Աբբաս-Միրզայի գլխավորությամբ, ներխուժում են Արցախ և պաշարում Շուշի բերդաքաղաքը: «Զօրք պարսից, — գրում է հեղինակը, — ի միասին ընդ զօրաց և բնակչաց Ղարաբաղու (իմա՛ զթուրքս), իբր զմատանի պաշարեցին շուրջանակի զքաղաքաւն Շուշույ, և յիւրաքանչիւր աւուր ո՛չ դադարէին ի պատերազմելոյ և մարտից՝ թափելով ի քաղաքն զկրակ թնդանօթաց» (49ա–բ): Շուշիի ռուսական կայազորը, գեղապետ Ի. Ռեուտի հրամանատարությամբ, և տեղի հայ բնակիչները հերոսական դիմադրություն են ցույց տալիս ահեղ թշնամուն⁵³: Այստեղ Ադիգյոզալ-բեկը հատուկ կանգ է առնում Սաֆար յուզբաշու սխրագործության վրա: «Հայազգի Սաֆարի իւզբա-

շին, — գրում է նա, — որ ի գեղջէն Շուշիքենդ, առեալ ընդ ինքեան զքանի մի անձինս ի հայոց, ամրացեալ էր ի խազինադաշիայ քարածայռին, որ յարևելից հարաւոյ բերդին, և մնայր անդանօր, որում և յաղթել զօրք պարսից ո՛չ կարացին» (49ա): Այս գլխում հեղինակը հիշատակում է նաև Շուշիի քաղաքատեսուչ Գյանջում աղա Խանդամիրջանին, Գանձասարի մետրոպոլիտ Սարգիս Հասան-Ջալալյանին, Ջրաբերդի Մելիք-Վանի Աթաբեկյանին, գեներալ Վալերիան Մադաթովին և խաչենցի Սարուխան յուզբաշուն, ընդ որում՝ յուրաքանչյուրի դեպքում շեշտելով նրանց հայազգի լինելու հանգամանքը: Բերդաքաղաքի պաշտպաններին հաջողվում է կաշկանդել հակառակորդի հետագա առաջխաղացումը: Հարկ է նշել, որ Ադիգյոզալ-բեկն ականատես է եղել Շուշիի պաշարման ժամանակ տեղի ունեցած իրադարձություններին, ուստի նրա հաղորդած տեղեկություններն ունեն չափազանց կարևոր նշանակություն:

Այնուհետև հեղինակը ներկայացնում է 1826 թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցած Շամքորի ճակատամարտը, որտեղ գեներալ Վ. Մադաթովի գլխավորած զորաջոկատը վճռորոշ հաղթանակ է տարել թվական գերակշռություն ունեցող պարսկական բանակի նկատմամբ: Աբբաս-Միրզան հարկադրված թողնում է Շուշիի պաշարումը և շարժվում Գանձակ, որի մոտակայքում էլ սեպտեմբերի 13-ին ջախջախիչ պարտություն է կրում գեներալ Ի. Պասկևիչի գլխավորած ռուսական զորքերի կողմից: Ադիգյոզալ-բեկը շեշտում է գեներալ Վ. Մադաթովի կարևոր դերը նաև Գանձակի ճակատամարտում ռուսական բանակի տարած հաղթանակի գործում: Սեպտեմբերի 15-ին Աբբաս-Միրզան, իսկ սեպտեմբերի 17-ին նրա խորտակված բանակը անցնում են Արաքս գետը և անփառունակ վերադառնում Իրան⁵⁴:

⁵¹ Договоры России с Востоком, политические и торговые. Собрал и издал Т. Юзефович, СПб., 1869, с. 208–214.

⁵² Նրա մասին մանրամասն տե՛ս Գորժին Կ., Ермолов, М., 2012.

⁵³ Потто В., Геройская оборона крепости Шуши, СПб., 1903.

⁵⁴ Կեանք գեներալ-լեյտենանտ կնեազ Սատաթովին, Շուշի, 1870, էջ 108:

Կովկասի կառավարչապետի պաշտոնում գեներալ Ա. Երմոլովին փոխարինած գեներալ Ի. Պասկևիչի հրամանատարությամբ ռուսական ուժերը 1827 թ. հուլիսի 7-ին գրավում են Աբասբադի բերդը, սեպտեմբերի 19-ին՝ Սարդարապատը, իսկ հոկտեմբերի 1-ին՝ Երևանը: Ջարգացնելով հաջողությունը գեներալ Գ. Էրիսթովի գլխավորած ռուսական առաջապահ զորաջոկատը 1827 թ. հոկտեմբերի 13-ին գրավում է Թավրիզը⁵⁵: Ֆաթալի շահը հարկադրված հաշտության բանակցություններ է սկսում: 1828 թ. փետրվարի 10(22)-ին Թավրիզի մոտ գտնվող Թուրքմենչայ գյուղում կողմերը հաշտության պայմանագիր են կնքում⁵⁶, որի հիշատակմամբ էլ ավարտվում է Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» պատմագրական աշխատությունը:

Այստեղ ցանկանում ենք անդրադառնալ նաև Ղարաբաղի խաների վերաբերյալ հնչած մի անհեթեթ կարծիքի, որի հեղինակն է ադրբեջանցի պատմաշինարար Ֆ. Աբասովը: Վերջինս 2007 թ. Բաքվում հրատարակված իր «Ղարաբաղի խանությունը» գրքում Փանահ խանին, Իբրահիմ խանին և Մեհտի-Ղուլի խանին ներկայացնում է ո՛չ ավել, ո՛չ պակաս որպես ադրբեջանական երկրի մեծ հայրենասերների⁵⁷: Այնինչ, իրականում, գոյություն չունեցած երկրի շինծու «հայրենասերների» հայրենաճանաչման պարագիծը երբևէ չի անցել սեփական տիրույթների սահմաններից անդին: Այդ մասին են վկայում խանությունների տիրակալների միջֆեոդալական անընդմեջ բախումները, որոնց մասին բազմաթիվ տեղեկություններ կան նաև Միրզա Ադիգյոզալ-բեկի և Ղարաբաղի խանության մյուս պատմագիրների աշխատություններում: Մերօրյա հասկացություններից ելնելով նմանատիպ անհեթեթ հայտարարությունները խոսում են միայն ադրբեջանցի պատմաշինարարների մոտ ժամանակի զգացողության կորստի մասին:

Ամփոփելով՝ նշենք, որ չնայած Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» երկում Ղարաբաղի խաների ազդեցությունը գերազանհատված է, այնուհանդերձ այս աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է Արցախի XVIII–XIX դարերի պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանման համար:

* * *

Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատությունն առաջին անգամ լույս է ընծայվել 1950 թ. Բաքվում՝ ռուսերեն թարգմանությամբ, Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ Ա. Բաքիխանովի անվան պատմության ինստիտուտի կողմից⁵⁸:

Սակայն, «Ղարաբաղ-նամէի» ռուսերեն թարգմանության համեմատությունը հրապարակվող հին հայերեն թարգմանության հետ ցույց է տալիս, որ Բաքվի հրատարակությունում առկա են մի շարք անհարկի կրճատումներ և բացթողումներ: Որևէ գաղտնիք բացահայտած չենք լինի, եթե փաստենք, որ հիմնականում կրճատվել են հայությունն ու հայ գործիչներին վերաբերող տեղեկությունները⁵⁹: Այսպես, ռուսերեն հրատարակության 3-րդ գլխում բացակայում են Դիզակի Մելիք-Եզանին և նրա կնոջը նվիրված երկու ժողովրդական ավանդություններ, որոնցից մեկը պատմում է իմաստուն մելիքի և Նադիր շահի մտերմության մասին:

Հատկապես շատ են կրճատումները երկի 12-րդ գլխում, որն ամբողջությամբ նվիրված է 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին: Այստեղ, մասնավորապես, կրճատված է այն կարևոր դրվագը, որտեղ ներկայացվում է հայերի անձնագոհությունն ու հայրենի քաղաքը մինչև վերջ պաշտպանելու անսասան կամքը Շուշիի 1826 թ. պաշարման ընթացքում, երբ պարսիկները «յիւրաքանչիւրում աւուր առաքելով զարս առ

⁵⁵ АКАК, т. VII, Тифлис, 1878, д. 526, с. 568–569.

⁵⁶ Договоры России с Востоком, с. 214–227.

⁵⁷ Абасов Ф., Гарабагское ханство, Баку, 2007, с. 153.

⁵⁸ Мирза Адигезаль-бек, Карабаг-Наме, Баку, 1950.

⁵⁹ Բոլոր կրճատումները նշված են ծանոթագրություններում:

ժողովուրդն հայոց, եղեալ ի բերդին, հրաւիրէին և յորդորէին զնոսա ապստամբիլ ի ռուսաց, ի բաց լինիլ ի նոցանէ և տալ ի ձեռս իւրեանց զբերդն: Բայց հայք առաւել ևս փոյթ յանձին կալեալ՝ միշտ ի գիշերի և ի տունջեան ո՛չ դադարէին ի զգուշաւոր պահպանութենէ պարսպաց և աշտարակաց բերդին» (էջ 50բ): Հանված է նաև այս հատվածին անմիջականորեն հաջորդող այն գեղեցիկ դրվագը, երբ խաչենցի Սարուխան յուզբաշին, որին պաշարողները ուղարկել էին Շուշիի բերդապարիսպների տակ իր հայրենակիցներին անձնատվության կոչ անելու, ամրոցի հայ պաշտպաններին առերես կոչ է անում հանձնել բերդը, «վասն զի չի՛ք, ասէր, յերեսս երկրի ոք ի ռուսաց կենդանի», բայց հայերենով դիմելով նրանց՝ քաջալիքում:

«Մի՛ ձանձրանայք յաշխատութիւնս ձեր և մի՛ երկնչիք ի սպառնալեաց սոցա, զի Մատթովն անտարակոյս ի մօտոյ ունի ի վերայ հասանիլ» (51ա):

Ամբողջությամբ կրճատված է նաև Շամքորի ճակատամարտի և դրան նախորդած զեպքերի նկարագրությունը, որտեղ գեներալ Վ. Մադաթովի զորաջոկատը ջախջախիչ հաղթանակ է տարել պարսկական գերակշիռ ուժերի նկատմամբ⁶⁰: Ըստ երևույթին, այդ կրճատումն էլ կատարվել է հայազգի գեներալի քաջագործությունները սքողելու նպատակով:

Սույն երկը 1989 թ. լույս է տեսել Բաքվում ադրբեջաներեն լեզվով՝ «Qarabagnamələr» երկհատոր ժողովածուի առաջին հատորում⁶¹: Այդ գիրքը հրատարակվել է Ղարաբաղյան հիմնահարցի սրման շրջանում և կրում է ակնհայտ քարոզչական բնույթ:

Եվ, վերջապես, Կալիֆոռնիայի «Mazda» հրատարակչությունը 2004 թ. լույս է ընծայել Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-

նամէ» աշխատության անգլերեն թարգմանությունը, որն իրականացրել է ամերիկահայ վաստակաշատ թարգմանիչ և պատմաբան, Այոնա քոլեջի դասախոս Ջորջ Բուռնությունը⁶²: Հրատարակությունը կցված են առաջաբան և հարուստ ծանոթագրություններ, որոնք մեծապես օգտակար են օտարալեզու ընթերցողներին:

Սակայն, պետք է փաստել, որ «Ղարաբաղ-նամէի» անգլերեն թարգմանությունն իրականացվել է Բաքվի 1950 թ. ռուսերեն հրատարակությունից, իսկ բացթողումները թարգմանիչը լրացրել է ո՛չ թե Ադիգյոզալ-բեկի երկի հայերեն ձեռագիր թարգմանության, այլ Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի» («Ճշմարտացի պատմություն») աշխատության հիման վրա⁶³: Այդ յուրօրինակ «լրացումները» հետևանքով Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատության անգլերեն թարգմանությունն անխուսափելիորեն հեռացել է երկի բնագրից: Այս խորապատկերում չափազանց կարևոր նշանակություն է ստանում Ադիգյոզալ-բեկի երկի անգլերեն նոր թարգմանության իրականացումը «Ղարաբաղ-նամէի» հրատարակվող հայերեն թարգմանության հիման վրա:

Հրատարակելով Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատության հայերեն թարգմանությունը՝ փակագծերում նշել ենք ձեռագրի էջահամարները, բացել ենք հապավումները, իսկ բաց թողնված տառերը լրացրել ուղղանկյուն փակագծերի մեջ, ինչպես նաև անտեսել ենք «ի» նախդիրից առաջ դրված ապաթարցները և կետադրությունը սրբագրել ըստ արդի հայերենի կանոնների:

⁶⁰ Այդ դեպքերի նկարագրությունը համապատասխանում է Ադիգյոզալ-բեկի երկի հայերեն թարգմանության «Պատմութիւն այսր դիպուածոյ է յետագայս» գլխի 51ա–52բ էջերին:

⁶¹ Mirza Adigözəl bəy. Qarabagnamə. «Qarabagnamələr», I kitab. Bakı, 1989, s. 5–102.

⁶² Two Chronicles on the History of Karabagh. Mirza Jamal Javanshir's Tarikh-e Karabagh and Mirza Adigözal Beg's Karabagh-name. Introduction and Annotated Translation by George Boumoutian, Costa Mesa, California, 2004.

⁶³ Հմմտ. Two Chronicles on the History of Karabagh, pp. 166–168, 183–185, 188, 189, 196, 213–215, 222, 224, 225–227, 228, 230–232, 233–235, 240, 242, 243–244.

Հիջրայի թվականները եվրոպականի վերածելիս օգտվել ենք ահագ. Հ. Օրբելու կազմած «Синхронистические таблицы хиджры и европейского летосчисления» գրքից⁶⁴։

Չփոխելով թարգմանության ուղղագրությունը՝ տառափախաները նշել ենք սովորականից տարբերվող տառատեսակով։ Որոշ դեպքերում, ընթերցողների շահերից ելնելով, միջամտել ենք նաև թարգմանչի պարբերաբաժանմանը՝ մեծ պարբերությունները տրոհելով ավելի մանր հատվածների։

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

تاکستان

⁶⁴ **Орбели И.**, Синхронистические таблицы хиджры и европейского летосчисления, М.-Л., 1961.

(2ա) ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔ ԽԱՆԱՑՆ ԳԱՆՁԱԿԱՑ

Որովհետև ի փոփոխութենէ ժամանակին բարձաւ թագաւորութիւն Սաֆաւեաց⁶⁵, և երկիրն Իրանայ չունէր զոք արժանաւոր առ ի թագաւորել, վասն այն ամենայն ոք գլուխ ամբարձեալ՝ զանուն թագաւորութեան կամէր ժառանգել: Մինչև ի վախճանի Նատր արքայն ափշար կրխլուեցի⁶⁶ յերկրէն Աբաւարտաց տէրութեան Խորասանու յայտնեցաւ, զամենայն զնեղութիւնս և չարչարանս Իրանայ ի բաց բարձեալ, վերջապէս ի լայն և յընդարձակ դաշտին Մուղանայ ի 1148 ամի⁶⁷ և Փրկչին 1732 զիշխանս և զմեծամեծս Իրանայ Հաւաքեալ՝ վասն ընտրութեան թագաւորի սկիզբն ժողովոյ արար անդ⁶⁸:

Յայնժամ Շահ Թահմասուբ և որդի նորա Միրզայ Աբ[ը]ասն, որ էր մանուկ ամաց չորեքտասանից⁶⁹, կենդանի էին⁷⁰:

⁶⁵ Նկատի ունի Իրանում 1502–1736 թթ. իշխած Սեֆյան արքայատոհմը, որն իր անվանումը ստացել է շիա մահմեդականների Սեֆևիյե աղանդի առաջնորդ շեյխ Սեֆի-եղ-Դիմի անունից: Սեֆյան թագավորական տոհմի հիմնադիրն էր շեյխ Սեֆիի սերնդից Իսմայիլ I-ը, որն իշխել է 1502–1524 թթ.: Հզորության գագաթնակետին է հասել Շահ Աբբաս I-ի (1587–1629) օրոք: 1736 թ. Նադիր շահը վերացրել է Սեֆյան արքայատոհմի իշխանությունը:

⁶⁶ Նադիր շահը պատկանում էր թուրքմենական աֆշար ցեղի դրխլու ցեղախմբին:

⁶⁷ Հիջրայի 1148 թ. սկսվել է 1735 թ. մայիսի 24-ին և ավարտվել 1736 թ. մայիսի 11-ին: Մուղանի «կուռուքայի» (ավագանու ժողով) տեղի է ունեցել 1736 թ.:

⁶⁸ Մուղանի «կուռուքայի» մանրամասն նկարագրությունը տես Աբրահամ Կրետացի, Պատմություն, քննական բնագիր, ռուս. թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Դորդանյանի, Ե., 1973, էջ 111-142:

⁶⁹ Ըստ Միրզա Ադիգոզալ-բեկի աշխատության ռուսերեն հրատարակության՝ քառամյա, որը ճիշտ է (տես Мирза Адигезаль-бек, Карабаг-Наме, с. 46):

Նատր արքայն յայտնեաց ժողովրդեան, թէ.

«Խորհուրդս այս ամենայն մեծանց և փոքունց յայտնի է, զի թագաւորութիւն Իրանայ ի բազում ժամանակաց հէտէ գտանի յանկարգութեան և անձինք անարժան կամին տիրել այնմ: Եւ ի շփոթութեանց ժամանակին թագաւորք Սաֆաւիեայ տոհմին կան վարանեալ, իսկ ես ամենայն անկարգութեանցս չհամբերելով, շրջեալ ընդ անապատս և ընդ դաշտս, բազմապիսի հնարիւք զայնս ի բաց խափանեցի և զաւերեալ թագաւորութիւնն Իրանայ ի ձեռաց թշնամեաց ազատեցի: Այժմ ես ի միջի Շահ Թահմասուբն և որդին նորա Միրզայ-Աբրահան, (2բ) որք կարի արժանի երևին, զորն ի նոցանէ արժանի թագաւորութեանն գիտէ՛ք՝ թագաւոր արարէ՛ք, որում և ես ի միասին ընդ ձեզ հպատակեցայց»:

Ժողովուրդք Իրանայ միախորհուրդ և միաբան ազազակ բարձեալ՝ ասէին, թէ.

«Թագաւորութիւն Իրանայ վայել է այնմ անձին, որ զխռովութիւն ի քաղաքէ մերմէ վերացոյց՝ զխռիւս վշտակրութեանց ի բաց յատկացեալ յայնմանէ, և գերեաց մատնելոց կապանաց յօտարութեանս զազատութիւն շնորհեաց»:

Թէև զառաջինն արքայն Նատր յընդունելոյ զանուն թագաւորի զանձն ի բաց հրաժարեաց և յընթացս միոյ ամսոյ ո՛չ ետ պատասխանի ինչ, բայց յետոյ հայեցեալ՝ ետես, զի չիք ոք բաց յինքէնէ անձն արժանաւոր, ուստի ել, նստաւ յաթոռ թագաւորութեան⁷¹:

Եւ վասն զի ի ժամանակի թագաւորութեանց տոհմականացն Սաֆաւիեայ խանք Գանձակայ, որք Ղաճար կամ Զիա-

⁷⁰ Նադիրի կողմից գահընկեց արված շահ Թահմասպ II-ը իր դեռահասակ որդիների՝ Աբբաս III-ի և Իսմայիլի հետ աքսորվել ու պահվում էր Սաբզիվար քաղաքում (տե՛ս Տեր-Ավետիսյան Ա., Նադիր շահի արշավանքները (ըստ Չակոբ Շամախեցու), Ե., 1940, էջ 36, Քյուչուք Արուսիմ, Պատմություն Թահմազ Ղուլու, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», N 1, 1941, էջ 124):

⁷¹ Նադիր շահը թագադրվել է 1736 թ. մարտի 8-ին:

տայ օղլի⁷² ևս անուանեալ էին, վասն անսուտ բարեկամութեան իւրեանց ընդ յիշեալ թագաւորացն Սաֆաւիեայ բէկլարբէկի և տէր իշխանական կարողութեան եղեն: Ի վեր քան զկամուրջն Մնդայ⁷³ զՍարգաշն Վրաստանու, հանդերձ և զԽուտայֆիբինայ կամուրջն⁷⁴ ընդ Ատրապատականին, սահման արարին, և Տիխիսայ ևս հրամանատու երբեմն լինելով՝ սոքա ի ժողովս Մուղանայ յայտնի և ի ծածուկ ջան եղեալ՝ զուն գործէին, զի բաց ի շառաւիղացն Սաֆաւիեայ թագաւոր մի՛ լիցի և ո՛չ ոք յօտարաց և զբարձի (Յա) թագաւորութեան մի՛ թիկն ածիցէ: Այս ամենայն յայտնեցաւ արքային Նատիրայ:

Յորժամ թագաւորեցաւ սա, յիշատակեալ խանացն Գանձակայ վասն ի վաղ ժամանակաց հէտէ մեծարգութեան նոցա զայլ ինչ դատաստան և պատիժ ոչ կարաց տալ, այլ միայն զԲօջալու Ղազախն ընդ խանաց և աղալարաց նոցա կարգեաց կառավար և հրամանատու Վրաստանու: Եւ զբնակիչս Ղարաբաղու, որ ես ջիվանշիր, օթուզիքի⁷⁵ և քաբ[ի]րլու, չուեցուցեալ ի Սարխաս անուն գաւառակն երկրին Խորասանու՝ բնակեցոյց անդանօր:

Եւ Խամսայ մէլիքաց ևս ետ հրաման, զի ամենևին չհնազանդելով խանացն Գանձակայ՝ զինքեանս ազատ գիտասցին

⁷² Գանձակի Ձիադօղլի ցեղի խաների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում XVII դ. պարսիկ պատմագիր Մուհամմեդ Մասում Իսֆահանցին իր «Չուլասեթ աս-սիյար» աշխատության մեջ (տե՛ս Мухаммед Масум ибн-Ходжаги Исфгани, Хуласет ас-сийар («Суть жизнеописаний»). Глава «Краткий очерк истории рода Зийад оглы и описание Гянджи», «Известия Азербайджанского историко-родословного общества», 2001, вып. 3, с. 109–132):

⁷³ Սըմըղ-քյորվիի – թուրք. «Կոտրված կամուրջ», այդպես էր կոչվում Խրամ գետի վրա գցված կամուրջը:

⁷⁴ Կամուրջ Արաքս գետի վրա, Խուդափերին գյուղի մոտ:

⁷⁵ Օթուզիքի – թուրք. «երեսուներկու», որը քրդական և թյուրքական 32 մանր ցեղերի արիեստածին միավորում էր, որի մեջ մտնում էր նաև ջևանշիր ցեղը (տե՛ս Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949, с. 136):

և զհարկաւորեալ խնդիրս, առանց հաղորդութեան ուրուք, ինքեանք առաջի արասցեն չահին:

Խանք Գանձակայ, վասն ելանելոյ ի ձեռաց իւրեանց իշխանութիւն և ի բաց լինելոյ յայնմանէ, կարի յոյժ նուագեալ՝ սրտաբեկ եղեն:

**ՈՐՊԻՍՈՒԹԻԻՆՔ ԽԱՆԱՑՆ ՂԱՐԱՐԱՂՈՒ,
ՈՐՈՑ ՍԿԻՋԲՆ Է ԽԱՆՆ ՍԱՐՈՒՋ ՆԱԼԵԱՑ**

Իսկական ազգաբանութիւնն սոյն տոհմի յԱրկուն խան Չինկիզ[ե]ան խանէ համարէր ծագեալ⁷⁶, բայց ըստ որում սովորութիւն է փոփոխական ժամանակին, որ զհարստութիւնն և զթագաւորութիւնն ո՛չ մշտապէս թողու ընդ ումեք, ի ժամանակի գտանելոյ Ջէնկիզեան տոհմին (Յբ) ի շփոթութեան և յաղմուկս ոմն ի նոցանէ յանձարութենէ ի փախուստ անկեալ՝ զնաց ի Վրաստան և անդ ի բերդն Լուրի⁷⁷ գաղտ բնակէր: Եւ յորժամ զգործս խանացն Գանձակայ ի լաւագոյն ընթացս ետես, ելեալ անտի՝ չոգաւ առ նոսա և ծառայէր նոցա:

Եւ իբրև զինքն ի վեր, քան զաստիճան ծառայութեան զիտաց, եկն առ ժողովուրդն Ջիվանշիր գաւառակին Ղարաբաղու երկրին, ուրանօր և կարի յոյժ հարստացեալ՝ ամուսնացաւ: Ծնաւ որդի, զոր և անուանեաց Ալի: Եւ վասն շիկագոյն լինելոյ նորա մարմնով հայրն և մայրն նորա անուանեալ էին Սարուջայ⁷⁸ Ալի: Եւ ի պատճառս կարի յոյժ հարստութեան նոցա բազումք յերթեակաց ի տուարածից, ի ծառայից և ի հովուաց առ նոսա գումարեալ՝ մեծ ժողով եղեն: Եւ այսր ժողովոյ անուն եկաց Սարիջալու:

⁷⁶ Միրզա Ադիգոզալ-բեկի աշխատության ռուսերեն հրատարակության մեջ այս ավանդությունը բացակայում է (հմմտ. Мирза Адигезаль-бек, указ. соч., с. 49):

⁷⁷ Հայկական Լոռի երկրամասը այդ ժամանակաշրջանում գտնվում էր Վրաստանի իրավասության ներքո:

⁷⁸ Սարիջե – բուրք. «ղեղնավուն»:

Այն աստուածապարզ և հարստութիւնն էանց ի ձեռս Իբրահիմ աղային, որով և նա հռչակաւոր եղև: Որպէս ցայժմ ի տեղիսն Աղտամ և Արասբար, որ յեզր Երասխ գետոյն գոն նշանք, և չորքոտանեաց գոմատեղիք երևին, և ի յեայլաղն⁷⁹ Իբրահիմ Խալիլ-կալաղի յայտնի են, որք ապացոյց և վկայ են հարուստ և մեծանձն գոլոյ սորա:

Ի ժամանակին ժողովելոյ Նատիր արքային զգօրս ի Ջիվանշիրայ զմեծ որդին այսր Իբրահիմ աղայի՝ Ֆազլալի-բէկ անուն, որ քաջասիրտ երևէր յոյժ, էշիկաղասի⁸⁰ և կառավար (նայիբ) կարգեաց⁸¹: Եւ զկնի սպանման սորա զկրտսեր եղբայր սորին (4ա) զՓան[աւ] Ալի բէկն (որ այժմ Փանա[ւ] խան) կարգեաց ի տեղի եղբօր իւրոյ Ֆազլալի-բէկին, որ յետոյ երկուցեալ ի նախանձոտ արքայէն Նատիրայ և չկամելով մնալ ի թիւս ծառայից նորա՝ ի փախուստ անկաւ ի Ղարաբաղ⁸², ուրանօր յազգականաց իւրոց և յընտանեաց ժողովեալ՝ շրջէր աստանդական հանապազորդ զայսպիսի կեանս վարելոյ: Համբաւ զօրութեան, քաջութեան և ողորմածութեան նորա միանգամայն ի միջի հասարակութեանց տարածեալ կայր:

Եւ թէպէտ Նատիր արքայն խանացն Ատրապատականի և Շիրուանու բազմիցս սաստիկ հրամանաւ գրեաց ունել զնա և առաքել առ ինքն, սակայն նոքա ո՛չ կարացին ձեռք ածել զնա, որ երբեմն ի Ղարաբաղ և երբեմն ի Շիրուան մնայր, և օր քան զօր յառաջադէմ անցանէր ի գործս քաջութեան մինչ ցայն

⁷⁹ Յայլաղ – քոչվորների ամառանոցային օթևանը:

⁸⁰ Էշիկաղասի – Սեֆյան Իրանի արքունի պաշտոնյաներից էր, պալատի արարողապետը:

⁸¹ Ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի՝ Նադիր շահը Ֆազլ Ալի բեկին կարգում է արքունի արարողապետի (էշիկաղասիի) թաթին (ենթակա, ստորադաս). տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, ճշմարտացի պատմություն, էջ 47:

⁸² Միրզա Ջամալ Ջևանշիրը Նադիր շահի արքունիքից Փանահի փախուստը թվագրում է հիջրայի 1150 (1737/38) թվականով (տե՛ս Мирза Джамал Джеваншир Карабагский, История Карабага, с. 66):

վայր, երբ զՆատիր արքայն սպանին ի ջամատիլ-ախր ամ-
[ս]եան 1160 ամի ի Խորասան⁸³, այն է յամի Տեառն 1744:

Այս համբաւ սպանման նորա ամենայն ուրեք զհռչակի
հարաւ: Եւ Փանահ Ալի բէկն, ապաւինեալ յօգնութեան Աս-
տուծոյ, աներկիւղ շրջէր յամենայն կողմանս՝ յաղթեալ
ամենայն թշնամեաց: Ջիվանշիրու, քաբ[ի]րլուի, օթուզիքի և
Վրաստանու ժողովուրդք, տարագրեալք ի Խորասան, զքաղց-
րութիւն հայրենեաց ի միտ բերեալ՝ յետս դարձան, զորս ընկա-
լեալ յարգանօք՝ Փանահ Ալի բէկն ետ նոցա տեղի բնակու-
թեան:

Եւ զկնի գումարելոյ նորա զբազմաթիւ ժողովս այս համ-
բաւ իբրև եհաս Ամիր Ասլան խանին⁸⁴, որ ի կողմանէ Ալի-
Ղուլի Աղլի շահ⁸⁵ կոչեցելոյն, եղբօր որդւոյ Նատիր արքային,
ժառանգողի զաթոռ թագաւորութեան (4բ) յետ մահուան նորա
տիրէր իշխանութեան, եկն առ Փանահ Ալի բէկն: Իբրև ետես
նա զայն երևելի հարստութիւն Փանահ Ալի բէկին, ի նմին
գիշերի գուլթանութիւն⁸⁶ և ընդ առաւօտն զխանութիւն շնոր-
հեալ նմա՝ ի ծառայութիւն Աղլի շահին հրաւիրեաց զնա:
Փանահ Ալի խանն առ ի յարմարել զանձն ժամանակին՝ հնա-
զանդեցաւ:

Ամիր Ասլան խանն զայսմանէ յայտնեաց Ատիլ շահին:
Եւ Ատ[ի]լ շահն զրեալ հրովարտակ խանութեան՝ ի միասին

⁸³ Նադիր շահը դավադրաբար սպանվել է 1747 թ. հունիսի 20-ին (այդ մասին տես՝ Չանուկ, Պատմագրութիւն վարուցմ եւ գործոց Նադիր շահ թագաւորին Պարսից, Մադրաս, 1780, էջ 172, Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, աշխ. Ա. Մադայանի, Ե., 2010, էջ 93-95):

⁸⁴ Ամիր Ասլան խան – Նադիր շահը 1738 թ. նրան նշանակել էր Ատրպատականի կառավարիչ: Չետագայում Աղլի շահը վերահաստատել է նրան այդ պաշտոնում (տես՝ Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 48):

⁸⁵ Ալի-Ղուլի խանը շահ է հռչակվել 1747 թ. հուլիսի 6-ին Մեշեդում և ընդունել Աղլի շահ («արդարադատ») անունը:

⁸⁶ Սուլթան – Սեֆյան Իրանում այդպես էին կոչվում սահմանային փոխարքայու-
թյունների կամ բեկլարբեկությունների մեջ մտնող ավելի փոքր վարչական
միավորների կառավարիչները:

ընդ այլ պարզեաց առաքեաց Փանահ խանայ, որոյ և անուն
խանութեան հաստատեցաւ ի նոյն իսկ Աղ[ի]լ շահէ: Եւ յետ
այնորիկ Շահրուլս Միրզայն⁸⁷, որ էր թոռն Նատիր արքային,
յառաջադէմ լեալ: Ջկառավարն Ղարապաղայ⁸⁸ զբազում
խանն, ընդ յիշեալ Ամիր Ասլան սարաւարին կալեալ՝ սպան:

Իբրև Փանահ խանն, որ միշտ զանուն խանութեան որո-
նէր, ի նպատակ կամաց իւրոց եհաս, խորհեցաւ ի միտս իւր, թէ
չէ՛ հարկ անհոգ կալ զփոփոխութեանց ժամանակին, միապէս
վարելով զկեանս և անցուցանել զժամանակ ի դաշտորայս՝ չէ
արժան: Բարւոք է ի տեղւոջ իմիք, ասէ, ի միտս ի ձեռն ար-
կանել կառուցման ամրապինդ շինուածոյ իրիք, որ ի ժամու
հարկաւորութեան լինիցի տեղի ապաւինի և յապահովութեան:

Վերջապէս զնացեալ ի Բայաթ ի 1161 ամի⁸⁹, այս է յամի
Տեառն 1745, սկիզբն արար կառուցման բերդի և պատնշաց:
Բայց ժողովուրդ Օթուզիքի և Ջիվանշիր գաւառակացն, որոց
սիրտ հարեալ կայր զնախանձու և զթշնամութեան, (5ա) միշտ
ջանային կարճել զայս իշխանութիւն: Ուստի և զմիամսայ մէ-

⁸⁷ Շահուլս Միրզա – հանդիսանում էր երկու դինաստիաների՝ Սեֆյան և Աֆ-
շար շահերի թոռը: 1749 թ. գահընկեց է արել Իբրահիմ շահին: 1749 թ. դեկտեմ-
բերին Խորասանում Շահուլսի դեմ խռովություն է բարձրացրել Մեշեդ քաղա-
քի շիա հոգևորականությունը, որը նրան հայտարարել է այլակրոն ու Նադիրի
քաղաքականության հետևորդ, և առաջ քաշել գահի իր թեկնածուին՝ Միրզա
Սեյիդ Սուլեյմանին (Միր-Սեյիդ), որը տապալել է Շահուլսին և կուրացրել:
Սակայն, 1750 թ. հունվարին զորավար Յուսուֆ Ալի խան Ջալալիին իր հերթին
գահընկեց է արել նրան և գահի վրա վերականգնել Շահուլսին: Վերջինիս
կառավարումը Խորասանում ընդմիջումներով շարունակվել է մինչև 1796 թ.:
1754 և 1770 թթ. նա ստիպված էր իրեն ճանաչել որպես Աֆղանստանի Ամեն
շահ Դուրրանի վասալ: Վախճանվել է 1796 թ. (տես՝ Բայրուրդյան Վ., Իրանի
պատմություն, Ե., 2005, էջ 385-387, Шабани Р., Краткая история Ирана, Санкт-
Петербург, 2008, с. 209):

⁸⁸ Խոսքը Ղարադաղի կառավարիչ Քյազիմ խանի մասին է (տես՝ Ахмед-бек
Джаваншир, О политическом существовании Карабахского ханства (с 1747 по
1805 год), Баку, 1961, с. 71):

⁸⁹ Հիջրայի 1161 թ. սկսվել է 1748 թ. հունվարի 2-ին և ավարտվել 1748 թ. նոյեմ-
բերի 22-ին:

լիքսն ևս ընկեր ինքեանց արարեալ առ Հաջի-Չալապին⁹⁰, որ ի նմին ժամանակի բոլոր Շիրուանայ տիրէր, գրելով զխնդիրս՝ յայտնեցին նմին, թէ. «Փանազ խանն աստ ի վեր երևեալ՝ սկիզբն շինուածոյ բերդից պատնշաց դնէ, և եթէ վասն խափանելոյ զայս ի վեր երևեսցին թուլութիւն և յապաղումն, յայնժամ ընդդիմանալ նմին անմարթ է»:

Հաջի-Չալապին ի բանիցս յայսցանէ խափեալ՝ սկիզբն արար առ նա թշնամանաց, և ժողովեալ զամենայն զգօրս Շիրուանայ՝ եկն բազում զօրօք և պաշարեաց զբերդս Բայաթայ: Այլ Փանազ խանն գիտացեալ զայնմանէ՝ օր յառաջ յայտնեալ էր բոլոր ժողովրդեանն, և զնոսա ամենեսին ի պատնէշսն լցեալ, ամրացեալ էր յայնոսիկ: Հաջի-Չալապին սկիզբն պատերազմի արարեալ՝ յիւրաքանչիւր աւուր նոր իմն եղանակաւ մարտ դնէր սաստկապէս, այլ ի վերջոյ, առանց հասանելոյ ի նպատակ իւր, մեծաւ վնասու յետս դարձաւ, և ի գնալ իւրում ասաց.

«Փանազ խանն մինչ ցայդ էր որպէս դրամ ինչ անգիր (առանց սիքքայի), մեք եկաք և տուաք նմա զքանդակ»:

Եւ ապա Փանազ խանն խորհեցաւ, թէ գոլով իմ անձն նորահաստատ և ժողովուրդ զաւառակացն Զիվանչիրայ և Օթուզիքի թշնամի են ինձ, ընդ որոց և խամսայ մէլիքք միաբան և միախորհուրդ, վասն որոյ և պարտ եմ ընտրել զամուր ինչ-ինչ ի բնակութիւն վասն յապահովի կալոյ յերեսաց թշնամեաց և ի բաց ջնջելոյ զնոսա ի սահմանաց իմոց:

(5բ) Ուստի և զհիմնարկութիւնն Բայաթ բերդին դադարեցուցեալ՝ եկն ի Թարնակիւտ⁹¹, որ Շահբուլաղ անուանի, և ի

⁹⁰ Ըստ թյուրք պատմագիր Աբդու-Լատիֆ էֆենդիի՝ Գաջի-Չելեքին սերում էր Շիրվանի մահմեդականացած հայկական ընտանիքից (տե՛ս Абдул-Латиф-эфенди, История Шекинских ханов, Баку, 1926, с. 5):

⁹¹ Թառնակլուտը Գայոց արքա Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95–55) կառուցած չորս Տիգրանակերտներից մեկի աղավաղված անունն է, գտնվում է Աղդամի շրջանում, Վանքասարի ստորոտում (տե՛ս Կարապետյան Ս., Գայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Ե., 1999, էջ

ստորոտ բլրոյ իրիք սկիզբն արար շինուածոյ բերդի, մզկիթաց, տանց, շուկայից և բաղանեաց, որք և ի 1165 ամի⁹², 1749 յամի Տեառն, ի գլուխ հասին: Եւ անդանօր բնակեալ՝ ընդդէմ Զրաբերդու և Թալիշու մէլիքացն պատերազմ յարուցանէր, և հետզհետէ ջան դնէր ի ցրել զժողովս նոցա:

Ի սմին ժամանակի մելիքն Վարանդայ գաւառակի Մելիք-Շահնազարն, հարեալ ընդ սէր մելիքութեան, զհօրեղբայրն իւր զՄելիք-Հիւսէյինն⁹³ սպան՝ զհամբաւ մելիքութեան իւրոյ հրապարակելով յաշխարհի: Ի լսելն զհամբաւս զայս խամսայ մելիքք միաբանեալ ընդ միմեանս՝ ընդդէմ Մելիք-Շահնազարայ պատերազմ յարուցին, ուստի և իւրաքանչիւր ոք ի նոցանէ, առեալ զբազմութիւն արանց հպատակաց իւրոց, ել ի վերայ նորա՝ ասելով, թէ.

«Ընդէ՞ր նա տարապարտուց թշնամացեալ՝ սպան զարժանապատիւ զհօրեղբայրն իւր»:

Իբրև եկին նոքա՝ չորս մելիքք, Մելիք-Շահնազարն յԱւետարանոց գեղջ ամրացաւ ի բերդին, կառուցելոյ անդանօր յինքէնէ: Նոքա՝ յարուցեալ զմելիքքն, զբոլոր գաւառակն Վա-

227): Այժմ այնտեղ պեղումներ է իրականացնում ԳԳ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ պ. գ. դ. Գամլետ Պետրոսյանի ղեկավարությամբ (տե՛ս Պետրոսյան Գ., Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները, «ԼՂԳ. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովի Մյուսթեր, Ե., 2007, էջ 434-445):

⁹² Գիջրայի 1165 թ. սկսվել է 1751 թ. նոյեմբերի 20-ին և ավարտվել 1752 թ. նոյեմբերի 7-ին: Իրականում Շահբուլաղի բերդը կառուցվել է 1749 թ. (տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 265):

⁹³ Այստեղ Աղիգոյզալ-բեկը շփոթել է նրանց ազգաբանությունը: Ըստ Բաֆֆու՝ «Մելիք-Յովսեփը (որին պարսիկները Գուսեից էին անվանում – Ա. Ս.) և Մելիք-Շահնազարը խորթ եղբայրներ էին, Գովսեփը ծնված էր Մելիք-Յուսեփի Աննախաթուն անունով կնոջից, որը Տիգակի իշխան Մելիք-Ավանի քույրն էր, իսկ Մելիք-Շահնազարը ծնված էր Զոհրախանումից, որը Նախիջևանի խանի աղջկն էր, ազգով թուրք: Մելիք-Յուսեփը նրան իբրև գերի բերեց Նախիջևանից, հետո ամուսնացավ նրա հետ» (տե՛ս Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 452, հարցի մանրամասն քննությունը տե՛ս Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 173-182):

բանդու աւիրեցին, բայց զբերդն, ուր ամրացեալ էր Մելիք-Շահնազարն, առնուլ ո՛չ կարացին: Եւ, ի վերջոյ, առանց հասանելոյ ի նպատակ կամաց իւրոց, դարձան և գնացին՝ պայմանադիր եղեալ, զի ի ժամանակի գարնան անդրէն եկեալ՝ զբերդն առնուցուն:

(6ա) Մելիք-Շահնազարն, տեսեալ զտկարութիւն իւր, ի հոգս անկաւ զհետեանաց գործոյն և եկն առ գերաստիջան խանն, որում և ծառայէր հաւատարմութեամբ, որպէս և զտեղին, ուր հիմնեցաւ Շուշի բերդաքաղաքն, եցոյց յիշեալ խանին, որ զկնի հաւանելոյ տեղւոյն սկիզբն արար ընդ Մելիք-Շահնազարին շինութեան այսր ամրակառոյց բերդի⁹⁴ (գործէ յիւրում համապատշաճ վայրի խօսել կայ):

Իբրև ձայն արդարադատութեան, քաջութեան և բարձրապատուութեան խանին զհռչակի հարաւ յերեսս երկրի, ժողովուրդք բազումք յօտար տեղեաց ապաւինեալ ի տէրութեան՝ չուեցին ի Ղարաբաղ, ուրանօր և ծառայէին խանին: Այլ բնիկ ժողովուրդ Ղարաբաղու երկրի, բացի գիւղականաց ոմանց, են հասարակութիւնքն ջիվանշիրու, օթուզիքի և քաբիրլուի, յորոց և վերջինքս այսոքիկ պարտուպատշաճն հպատակութեամբ կային ի ծառայութեան նմին: Բայց բնակիչք գաւառակացն Զիվանշիրու և Օթուզիքիքն երբեմն-երբեմն յայտնէին զներքին իւրեանց ատելութիւն և զնախանձ:

Եւ հինգ գաւառակք, որ անուն խամսայից անուանակոչեն և իւրաքանչիւրոցն յայնցանէ անուանք յայտնի են, զի այնոքիկ գաւառակք ըստ հինգ թուոյ խամսայ կոչեն, վասն զի յարաբացի լեզու թիւն հինգ խամսայ ձայնի: Յիշատակեալ գաւառակք են յետագայքս:

⁹⁴ Այստեղ խոսք կարող է լինել միայն բերդի վերակառուցման մասին: Անվիճելի է, որ Շուշիի բերդը գոյություն է ունեցել դեռևս XVIII դ. սկզբին (տես Բարսեղյանի «Армянно-русские отношения в первой трети XVIII века», т. II, ч. I, Ереван, 1964, с. XLI; Լադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, էջ 59):

Ա. Դիզակ, որոյ մելիքք էին Մելիք-Եկանեանքն, որ յՈրմի⁹⁵ քաղաքէն պարսից ի փախուստ անկեալ՝ եկք էին ի ժամանակի (6բ) թագաւորութեան Նատիր շահին⁹⁶, ըստ հրամանի նորին ամբարձեալ էին յաստիճան մելիքութեան⁹⁷, յորոց Մելիք-Եկանն վասն մեծի հաւատարմութեան և ցուցանելոյ նորա զճշմարիտ ծառայութեան՝ կարի յոյժ մեծայարգ և երևելի գտաւ: Եւ յանուն Բաբալղի⁹⁸ (այն է հայր ի տեղի հաւու, պապի) Նատիր շահի հռչակեցաւ, որպէս ի ժամանակի ձմեռելոյ Նատիր շահի ի դաշտին Մուղանու բոլոր զօրաց նորա տալով զկերակուր՝ պատուեալ է զնոսա:

Ի սմին միջոցի հրամայեաց շահն Մելիք-Եկանայ բերել ինքեան զսունկ տասն լիտր, և նա յանձնառու եղև, զի պատրաստեցէ: Բայց հպատակք մէլիքի մեծամեծ անձինք ասացին, թէ.

⁹⁵ Իրականում Դիզակի Մելիք-Եգանյանների՝ Ուրմիայից ծագելու վարկածն անհիմն է: Ըստ Սիրզա Աղիզյոզալ-բեկի աշխատության ռուսերեն իրատարակության՝ Մելիք-Եգանյանները Ղարաբաղ են եկել Լոռուց (տես Գրքա Միրզա Անգեզալ-բեկ, указ. соч., с. 57): Աղիզյոզալ-բեկի աշխատությունը գրված է եղել արաբատառ թուրքերենով, որի դեպքում այդ տեղանունների գրությունը նման է (տես Սիրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 40), ինչն էլ դարձել է թյուրիմացության պատճառ: Այսպիսով, Մելիք-Եգանյանների ծագման Ուրմիայի վարկածը պատմական որևէ հիմք չունի և առաջ է եկել լոկ թարգմանչի սխալի հետևանքով:

⁹⁶ Մելիք-Եգանյանները Դիզակում հաստատվել են XVIII դարի սկզբին, երբ, ըստ Ա. Ջալալյանի՝ «Մելիք-Եգան, որդի Դուկաս վարդապետի, ի նահանգէն Լոռույ ի գեղջէն Արդուոյ, յազգէ Լօրիս Մելիքեանց, մարտ եղեալ ընդ իւրում ազգականի էլիզբարայ, որ ի նմին ժամանակի տիրէր երկուց նահանգաց՝ Լոռույ և Տաշիրայ, ի բաց առեալ զՄաւթբն և զԲաբաժամածորն, իսկ յո՛չ ստանալն նմա վերաբնակի ընդ հօր իւրում աղխին հանդերձ աշխարհն Արցախու ի նահանգն Տիզակայ և ի գիւղն Տող» (տես Ջալալեանց Ա., Պատմութիւն աշխարհին Աղուանից, Մատենադարան, մանրածապակն N 367, էջ 4, Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 428):

⁹⁷ Ըստ Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիճագիր արձանագրության՝ նրա մելիքական իրավունքները սկզբնապես հաստատվել են Սեֆյան շահ Թահմասպ II-ի կողմից, իսկ հետո Նադիր շահը Մելիք-Եգանին վերահաստատել է այդ պաշտոնում (տես Փափագյան Գ., նշվ. աշխ., էջ 77):

⁹⁸ Բաբալղը – թուրք. «հայրացու»:

«Վասն է՞ր գայս անհնարին հրաման ի յանձն առէր, ուստի՞ ունիս գտանել զսուսկ յայսմ ձմերան ժամանակի»:

Որոց պատասխանի արար, թէ.

«Ես ինքն, ի վերջոյ, տաց շահին զպատասխան»:

Յետոյ գնացեալ առ Նատիր՝ յայտնեաց նմին, թէ.

«Ըստ հրամանի ձերում առաքեցի զարս յայն տեղիս, որ բուսուցանէ զսուսկ, այլ գտին զվայրսն ծածկեալ ձեամբ»:

Շահն խնդացեալ ընդ այս կարի յոյժ՝ ասաց.

«Ես ևս զիտեմ, զի ի ձմերան ժամանակի ո՛չ լինի սուսկ, այլ զքեզ փորձէի միայն: Եւ որովհետեւ ի միջի բազմութեան ի հրամանէ իմմէ ո՛չ կացիր ի բաց և ընկալար զայն որպէս կատարելի, վասն որոյ Բաբալղ իմ ես արդարեւ»:

Ասեն ևս, թէ գտիկին Մելիք-Եկանի հրաւիրեալ են ի հացկերոյթ յառանձնոց թագուհեացն Նատիրայ, որոյ վասն և զարքայավայել խորտիկս են պատրաստեալ, այլ նա հրաժարեալ է յուտելոյ, և ի ստիպելն հրաւիրանօք (7ա) յուտել՝ պատասխանեալ նոցա, թէ.

«Այսօր օրինօք մեզ պահք են, և ես ո՛չ լուծից բնաւ զպահս»:

Ընդ որ կարի յոյժ ծիծաղելով՝ հաւանեալ են հաստատութիւն նորա ի պահպանութիւն հայրենի օրինացն հայոց⁹⁹:

Բ. Վարանդայ, որոյ մելիքք էին Մելիք-Շահնազարեանքն, թէպէտև հնագոյն քան զնա ևս կային անդանօր ազնուազգիք¹⁰⁰: Ծագումն նոցա լեալ է յազնուազգեաց Կեօկչայի,

⁹⁹ Միրզա Աղիզոյալ-բեկի աշխատության Բաբվի 1950 թ. հրատարակության մեջ այս երկու ավանդությունները ներառված չեն (հմմտ. Мирза Адигезаль-бек, указ. соч., с. 57):

¹⁰⁰ Մինչև Վարանդայի մելիքի պաշտոնում Մելիք-Շահնազարյանների հաստատվելը, այնտեղ իշխել է մեկ այլ հայկական մելիքական տուն, որի ներկայացուցիչների այսպիսի մի հերթականություն է վիճաբորի հիման վրա նշում Մ. Բարխուտարյանը. «Մելիք-Պապի որդի Գախիջանայ, Մելիք-Աւան որդի Մելիք-Պապու, Մելիք-Աղան եղբայր Մելիք-Աւանայ, Մելիք-Փաշայ կամ Փաշիկ որդի Մելիք-Աւանայ, Մելիք-Դանիել, Մելիք-Մուզաֆֆար, որ է տոհմիս վերջին մե-

ուստի ըստ պատահման ժամանակին ի փախուստ անկեալ՝ եկին յԱւետարանոց գիւղն¹⁰¹, ուրանօր բնակեալ կիշխէին մելիքութեամբ Վարանդայ գաւառակացն: Նատիր շահն զոմն ի նոցանէ, որոյ անուն էր Մելիք-Մի[ր]զաբէզ, յատելութենէն ընդ կարի յոյժ քաջութեան նորա և վասն զանգատանաց ժողովրդեան զնմանէ՝ խեղդեաց¹⁰², և զհօրեղբօր որդի նորա զՄելիք-Հիւսէյինն, որ էր այր գրասէր և հեղաբարոյ, այլ կաղ միով ոտամբ, ի տեղի նորա կարգեաց¹⁰³: Եւ, ի վերջոյ, երկրորդ Մելիք-Շահնազարն ի գիշերի սպանեալ զնա՝ ինքն գտեղի նորա գրաւեաց, որպէս ասացաւն ի վեր անդր:

Գ. Խաչէն, ուրանօր էին մելիք սերունդքն Հասան-Ջալալեանց: Յետ ելանելոյ ի ձեռաց նոցա այսր մելիքութեան, առ չգոյոյ ուրուք հաստատութեամբ յիշխանութեան մելիքի, յիւրաքանչիւրում ժամանակի այր ոք կորզէր յանձն զաստիճան մելիքութեան մինչև ի ժամանակս Փանահ խանին, և յայնժամ Խնձրստան գեղջ Մելիք-Միրզայ-խանն, առ լաւութեան իւրոյ և հաւատարմութիւն, ըստ հրամանի յիշեալ խանին մելիք կարգեցաւ, և յետ նորա՝ որդի իւր Մելիք-Ալլահվերդին, և ի վախճանի՝ (7բ) թողն նորա Մելիք-Ղահրամանն, որ այժմ է կենդանի¹⁰⁴:

լիքն» (տե՛ս Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 40-41): Վարանդայում տեղի ունեցած իշխանափոխության մասին Լեոն գրում է. «Այս տոհմը ետ մղվեց Մելիք-Շահնազարյաններից, որոնք և իրենց ձեռքն առան ամբողջ Վարանդան» (տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 257):

¹⁰¹ Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների տոհմի ներկայացուցիչ Միրզաբեկը 1603 թ. բնակություն է հաստատել Վարանդայի Ավետարանոց գյուղում և այնտեղ սկիզբ դրել Մելիք-Շահնազարյանների տիրապետությանը (տե՛ս Տեր-Սկրտչեան Կ., Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պր. Բ, էջմիածին, 1914, էջ 134):

¹⁰² Վարանդայի Մելիք-Միրզաբեկը մահապատժի է ենթարկվել 1744 թ.:

¹⁰³ Այս մելիքի ստորագրությունն ու կնիքը պահպանվել են 1745 թ. հուլիսի 27-ին կազմված պարսկերեն մի կալվածագրում՝ «Վարանդայի Մելիք-Յուսեյն» ձևով (տե՛ս Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 173):

¹⁰⁴ Խոսքը Խնձրիստանի Մելիք-Միրզախանյանների մասին է, որոնք Ղարաբաղի խաների դրածո մելիքներն էին Խաչեն գավառում:

Դ. Զրաբերդ, ուր մեկիք էին Մեկիք-Ալլահզուլին և ապա Մեկիք-Աղամն: Սոքա ի բնէ ի Մաղավուզայ են եկեալ ի գաւառակն Զրաբերդ¹⁰⁵, ի բերդն Զերմուկ¹⁰⁶, որ է տեղի ինչ ամուր ընդ մէջ Թարթար գետոյն, զոր և վասն ինքեանց արարեալ են տեղի ապաւինի և բնակութիւն անդանօր լեալ են: Մեկիք[ք], որք վասն մեծի քաջութեան իւրեանց հռչակաւոր են յաշխարհի, որպէս ի պատերազմել Նատիր շահին ընդ մեծի զօրապետին Օսմանցուց Քիւֆիւրլու օղլիին Մեկիք-Ալլահզուլին եցոյց զբազում դիմագրաւ քաջութիւնս և վասն այսր քաջութեան իւրոյ ընկալաւ ի Նատիրայ զաստիճան սուլթանութեան՝ ի միասին ընդ մեծագին պարգևաց: Ուստի և հրամայեաց շահն յետ այնորիկ զնա անուանել ո՛չ մեկիք, այլ Ալլա[հ]զուլի սուլթան: Ուստի և նոքա ի վաղուց ևս լեալ են տէր իշխանութեան և մեծութեան:

Ե. Մեկիքք Թալիշ գաւառակին¹⁰⁷, որք ի սկզբանէ գաղթեալ են ի Շիրվանայ¹⁰⁸ և առ ժամանակ ինչ բնակեալ ի համանուն գեղջն Թալիշ, վարեալ են զիշխանութիւն մեկիքի ի գաւառակի անդ:

¹⁰⁵ Միրզա Յուսուֆ Ներսեսովը, Ա. Զալայանցը, Բաֆֆին, Լեոն և մի շարք այլ հեղինակներ գրում են, որ Զրաբերդի Մեկիք-Իսրայելյանները XVII դ. վերջերին Արցախ են տեղափոխվել Սյունյաց աշխարհի Մաղավուզ և Խնածախ գյուղերից (տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 43, Զալայանց Ա., նշվ. աշխ., Մատենադարան, մանրածապալեն N 367, էջ 3, Բաֆֆի, Խամսայի մեկիքութիւնները, էջ 425-426, Լեո, նշվ. աշխ., էջ 257):

¹⁰⁶ Պատմական սկզբնաղբյուրներում և տարբեր աշխատություններում այս ամբողջը հիշատակվում է Չարաբերդ, ճառաբերդ, Չրաբերդ, Զերմուկի բերդ և Զրաբերդ անուններով, իսկ մեկիքության շրջանի վկայագրերում առավելապես հայտնի է Զրաբերդ անվանաձևով, ինչը գործածվում էր նաև որպես գավառանուն և մեկիքության անվանում (տե՛ս Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մեկիքական ապարանքները, Ե., 2001, էջ 82):

¹⁰⁷ Գյուլիստանի մեկիքությունը մեկիքանիստ Թալիշ գյուղի անունով երբեմն կոչվել է նաև Թալիշի մեկիքություն:

¹⁰⁸ Գյուլիստանի Մեկիք-Բեգլարյանների ծագումնաբանությունը տե՛ս Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 420-425, Լալայան Ե., Երկեր, հ. 2, Ե., 1988, էջ 209-210:

ՀԱՆԳԱՄԱՆՔ ՓԱՆԱՀ ԽԱՆԻՆ ԸՆԴ ԽԱՄՍԱՑ ՄԵԼԻՔԱՑ

Յառաջին երևման Փանահ խանին մեկիք Դիզակայ¹⁰⁹ սերունդ Մեկիք-Եկանայ, թշնամացեալ ընդ նմա՝ ի ժամանակս ժամանակս (Տա) պատերազմ գրգռեցին¹¹⁰ ընդդէմ նորա, յաղթելով նմա երբեմն ևս, մինչ ի վերջոյ Փանահ խանն յօժանդակութենէ բարձրելոյն յաղթող գտեալ՝ զոմանս ի նոցանէ սպան¹¹¹ և զոմանս տուժեաց անխնայ: Իսկ որք ի նոցանէ ընկալան զկրօն պարսից¹¹²՝ գտին զկենդանութիւն, և այսպէս կարի յոյժ նուազեցաւ ցեղն Մեկիք-Եկանայ:

Եւ մեկիքն վարանդայ գաւառակին՝ Մեկիք-Շահնազարն, զորմէ ի վեր անդր սակաւուք խօսեցեալ եղև, ըստ ազնուագգի գոլոյն կարի հարստացեալ ընդ որդւոյ իւրում Մեկիք-Ջիւմշուտայ միշտ առաջի Փանահ խանին և որդւոյ նորա Իբրահիմ խանին ի պատուի էին և յարածամ նմին օգնական մեծաւ հաւատարմութեամբ, յորոց ի միջի ևս ի վեր երևեցաւ արիւնակցութիւն ինչ՝ ի տալոյ Մեկիք-Շահնազարին զմին ի դատերաց իւրոց Իբրահիմ խանին ի կնութիւն¹¹³:

¹⁰⁹ Խոսքը Մեկիք-Եսայու մասին է, որի մեկիքական իրավունքները հաստատվել են Նադիր շահի 1746 թ. հրովարտակով (տե՛ս Պողոսյան Ֆ., Խամսայի մեկիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, թիվ 1, էջ 204):

¹¹⁰ Ըստ Առաքել Կոստանյանցի՝ Փանահ խանի և Մեկիք-Եսայու միջև կռիվները տևել են յոթ տարի (տե՛ս Կոստանեանց Առ., Դիզակի մեկիքութիւնը, «Նիւթեր հայ մեկիքութեան մասին», պր. Ա, Վաղարշապատ, 1913, էջ 44):

¹¹¹ Այստեղ հեղինակը սխալվում է: Մեկիք-Եսային սպանվել է 1781 թ. Իբրահիմ խանի կողմից (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, էջ 179, Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 172, 179):

¹¹² Մեկիք-Եզանյանների տոհմի մահմեդականացված ճյուղի շառավիղների մասին տե՛ս Կոստանեանց Առ., նշվ. աշխ., էջ 81, Մաղայան Ա., նշվ. աշխ., էջ 209-210:

¹¹³ Ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի՝ «Մեկիք-Շահնազարը իր գործերը բարելավելու և դիրքերն ամրապնդելու համար, աղջկան՝ Հուրզադ խանումին, կնու-

ի խաչէն գաւառակին թոռն Ուլ[ու]բարայ¹¹⁴, ի գանազան գիւղօրէից ժողովելով ի վերայ իւր զարս զաւազակս ի յամրոցն Բալլուղայայ¹¹⁵, յայտնեաց ընդդէմ Փանահ խանայ զթշնամութիւն և զհակառակութիւն: Այլ Փանահ խանն յարձակեալ ի վերայ այսր ամրոցի՝ ցրուեաց զժողովն և գէտօրէն հեղմամբ արեան նոցա ի գլխոց սպանացելոցն կառոյց զաշտարակ բարձր: Յետ որոյ և գաւառակն խաչենոյ հնազանդեալ՝ մտերմութեամբ ծառայէին նմա:

Մելիքն Զրաբերդու՝ Ալլահղուլի սուլթանն, յառաջին վեր երևման Փանահ խանայ եկն ի տեսութիւն նորա յԱմարաս: Կառավարն Նախիջևանայ՝ Հէյտար-Ղուլի խանն, (Ցբ) ևս հիւր էր առ Փանահ խանին: Սա ի տեսանելն զպատիւ և զբարձրութիւն Ալլահղուլի սուլթանին՝ յայտնեաց Փանահ խանայ, թէ.

«Այսպիսի սուլթան չունի հնազանդել քեզ և երկու մեծապատիւ անձինք ի միում քաղաքի ո՛չ ի գլուխ երթիցեն, որպէս ասի յառակսն՝ Աղբատք տասն ի մի մահճի ննջել մարթին, կամ՝ Արքայք երկու յերկրի միում ո՛չ գետեղին: Արժան է զնա ճարակ սրոյ տալ և բառնալ ի կենաց, և այն՝ այժմ իսկ աստանօր ի յԱմարաս»:

Փանահ խանն հաւանեալ ընդ խորհուրդ Հէյտար-Ղուլի խանին՝ զԱլլահղուլի սուլթանն սպան¹¹⁶: Եւ եղբայր նորա Մելիք-Աղամն, գաւառակին Զրաբերդու մելիք եղեալ, ընդ Մելիք-Ուսուբայ՝ Թալիշու մելիքին, որ ի յորդորանաց Մելիք-

թյան է տալիս Իբրահիմ խանին, և այդ կերպ ցրա հետ բարեկամական կապեր հաստատում» (տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, ԳՂՎ. աշխ., էջ 42):

¹¹⁴ Խոսքը Մելիք-Ալլահվերդի Յասան-Չալալյանի մասին է, որը 1755 թ. դավադրաբար սպանվել է Փանահ խանի կողմից (տե՛ս Ռաֆֆի, ԳՂՎ. աշխ., էջ 455-456):

¹¹⁵ Բալլուղայան կամ Ուլու-պապի բերդը գտնվում է Խաչենագետի ափին, Առաջածոր գյուղի մոտ (տե՛ս Ալիշան Ղ., Արցախ, Ե., 1993, էջ 74):

¹¹⁶ Ըստ Մատենադարանում պահվող ձեռագիր ժամանակագրություններից մեկի՝ «ՌՃՂԸ (1749) թվին Փանահն տալան մելիք Ալլաղուլին՝ սեպտեմպեր ամսումն» (տե՛ս Մատենադարան, ձեռ. N 7816, էջ 20բ, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. I, էջ 396):

Աղամին զհօրեղբայրն իւր սպանեալ կայր¹¹⁷, նստեալ յաթոռն Թալիշու մելիքութեան, միաբանեալ թշնամանօք ընդդէմ խանին և ի բերդն Զերմկայ ամրացեալ՝ ընդ երկար ժամանակ յաճախակի պատերազմեցան:

Փանահ խանն ևս ո՛չ սակաւ եցոյց ընդդէմ նոցա զբազմապիսի յարձակմունս, բայց ի պատճառս ամրութեան բերդի նոցա թէև դարձաւ առանց հասանելոյ ի նպատակ իւր, սակայն զարտորայս նոցա, որ ի ստորոտ լերինն, ոտնկոխ արարեալ հեծելագօրաց իւրոց՝ բոլորովմբ ապականեաց զայնս: Եւ զանցս ճանապարհաց ի չորից կողմանց խափանեաց, և այսպէս զամս չորս նեղութեամբ և դառն վշտօք (Գա) ընդդէմ նորա մնացին ի բերդի անդ յանշարժութեան¹¹⁸: Եւ յայնմ ընդ երկար միջոցի բազումք թշնամացան ընդ խանին և յամենայն ժամ, ըստ օրինակի օտար թշնամեաց, հասուցանէին յիշեալ խանին ի պատերազմի վնասս բազումս:

Վերջապէս յաղթեալ ի խանէն՝ դարձաւ ի փախուստ ի կողմն Գանձակայ, և ի գաւառակին Շամքօրայ վշտօք և նեղութեամբ մնացին զամս եօթն:

¹¹⁷ Խոսքը Գյուլիստանի Մելիք-Թամրազի սպանության մասին է: Ըստ Մատենադարանի N 7816 ձեռագրում տեղ գտած ժամանակագրության՝ «ՌՃՂԹ (1750) թվին մելիք Թամրազն սպանեցին՝ մայիս ամսումն» (տե՛ս Մատենադարան, ձեռ. N 7816, էջ 20բ, Մանր ժամանակագրություններ, հ. I, էջ 396):

¹¹⁸ Այդ կոիվների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև կապիտան Օթար Թումանովը՝ Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային հղած իր զեկուցագրերում (տե՛ս Մելիքսեթ-բեկ Լ., ԳՂՎ. աշխ., էջ 107-109, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., с. 140):

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՇՈՒՇԻ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻՆ

Որովհետև Փանահ խանն զբոլոր սահմանս երկրին Ղարաբաղու խաղաղացուցեալ էր ի միասին ընդ Խամսայ մէլիքաց, յորմէ և ոմանք ի մեծամեծաց ժողովրդեան այլոց երկրաց Հնազանդեցան ինքեան, ուստի զամենայն անվայելչութիւնս երկրին Իրանայ ի բաց բարձեալ՝ խորհեցաւ ի միտս իւր, թէ նաև զմեծամեծս Ղարաբաղու¹¹⁹, Արտավելայ և Նախ[ի]ջևանայ Հպատակ Հրամանի իւրում արասցէ: Սմին իրի ի սուղ ժամանակի զոմանս ի նոցանէ բռնութեամբ և զոմանս ի ձեռն Հրեշտակաց կամ Հրապուրանօք Հանճարեղ արանց յինքն յանկոյց: Եւ կարգեաց ի քաղաքին Արտավուլայ զԱրքայ բէգն¹²⁰ սարուջանլու դատաւոր և Հրամանատու: Յետ այսորիկ կարգելն զխանս կամ ի բաց Հանելն, զոր ի խանութենէ ի վերայ Գանձակայ, ի Հրամանաց սորա լինէին: (9բ) Եւ յազգէն այսց խանաց ոմանք միշտ ըստ օրինի պատանդաց մնային ի բերդին Թարնակիւտայ:

Չայն բարձրանալոյ և պատուի Հասան խանի՝ Հօրն Աղայ Մահամատ շահին, ի սահմանս երկրին Արաղայ, Ատրապատականի և Մագանդարանայ եհաս ի լուր Փանայ խանին: Խանք ընդ աւագորեոց¹²¹, եղելոց առ յիշեալ խանին, ի ներկայութեան նորա այսպէս արժանի վարկան՝ ասելով, թէ.

«Ձկնի սպանման Նատիր շահին բարեկամութեան շողկապ ընդ Ալի-Ղուլի շահին և ընդ սպարապետին նորա Ամիր-Ասլան խանայ կայր ի Հաստատութեան: Այժմ գուցէ Մ[ու]համատ Հասան խանն Ղաճար ընդ նոսա վարեցի թիւր և գնասցէ զճանապարհ թշնամութեան և հակառակութեան: Շրջակայ խանացն չի՛ք և ոչինչ միամտութիւն և Հանդարտութիւն, և

ընդ իշխանութիւնս բազում են ներքին թշնամիք¹²²: Գուցէ յորդորեալ զՄ[ու]համատ Հասան խանն՝ առաջնորդելով նմին եկեցեան ի վերայ երկրին Ղարաբաղու, և ժողովուրդ սորին ի միասին ընդ այլ ամենայն գոյից իւրեանց սմբակակոխ արասցէն: Եւ ի բերդին Թարնակուտայ անհնար լիցի ընդդէմ նոցա կալ կամ ելանել ընդառաջ նոցա: Արդ՝ եթէ այս այսպէս է, ապա Հարկ է գհնարն ապագայ դիպուածոյ նախքան զպատահելն հոգալ: Արժան է, արդ, յընդարձակ և յամուր տեղւոջ իմիք հիմն բերդի, պարսպի և աշտարակի առնել, որ ի փորձութենէ ժամանակին և յերեսաց հզօր թշնամուոյն զմեզ յապահովի պահեսցէ»:

Վասն որոյ ըստ Հաւանեցուցանելոյ Մելիք-Շահնազարայ (որպէս և ի վեր անդր ծանուցումն եղև), ըստ առաջնորդութեան (10ա) նորա, արկ գհիմն այսր Շուշի բերդաքաղաքի ի 1170 ամի և Փրկչին 1754 ամի: Այլ, ըստ որում ի միջի բերդաքաղաքին ո՛չ գոյր ջուր գնացական և ո՛չ առու, առ ի զփորձ փորձել՝ զբանի մի ջրհորս փորեցին, և յետ ջուրց բղխելոյ յայնց զբերդն ի գլուխ հասուցին:

Եւ զբնակիչս Շահբուլաղայ, ընդ ոմանց գիւղականաց չուեցուցեալ՝ աստանօր բնակեցուցին: Եւ իւրաքանչիւր ումեք ի նոցանէ հտուն ի բնակութիւն զտուն և զտեղի սրահից և պարտիզաց: Եւ ժողովեալ զ[Հ]մտագոյն արուեստագէտս և ճարտա[րա]պետս՝ սկիզբն արարին շինելոյ զառանձնոցս կանանց խանին, զշուկայս, զվաճառատեղիս, զտունս, զաշտարակս և զպարիսպս¹²³, որոց նշանք այժմ ևս երևին:

Եւ յետ կառուցման այսր ամուր բերդն արար զայս միջավայր իւրոց երկրի. զգաւառակն Մեղրի-Կինէյի մինչ ի Բար-

¹¹⁹ Պետք է լինի Ղարաղաղի (հմմտ. Мирза Адигезаль-бек, указ. соч., с. 61):

¹²⁰ Խոսքը Ղերգախ-բեկ սարգալուի մասին է (հմմտ. Мирза Адигезаль-бек, указ. соч., с. 61; Ахмед-бек Джаваншир, указ. соч., с. 73):

¹²¹ Չեռագրում այսպես է, պետք է կարդալ ավագանի:

¹²² Նկատի ունեն խամսայի հայոց մելիքութիւնները:

¹²³ Ըստ Գալոբ Ջաքարյան Շուշեցու՝ «Եւ այսպէս յարիւն եւ ի քիրտն հայոց գոգցես կանկնեցան պարիսպ քաղաքին, եւ մեծաշէն ապարանքն խանին եւ ամենայն կազմուածքն, որ ի սմա» (տե՛ս Մաղախեան Ա., Յակոբ Ջաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2006, թիւ 1-12, էջ 382):

կուշաթ՝ յիշխանութենէ Ղարաբաղու¹²⁴ իշխանին, զգաւառակն Սիսեանս՝ ի կառավարչէն Նախիջևանայ, և զգաւառակն Զանկազուրայ և Ղափանայ՝ ի բէկլարբէկէն Դաւրիժայ, զգետն Թարթարայ, ի վեր քան զգիւղն մինչ ի սահմանս Կօկչայի, որ քօլաննաց բնակատեղի է՝ ի կառավարչէն Իրանայ¹²⁵, և ի կամբըջէն Խուտայֆիլիինայ մինչ ի գետն Քուրակայ՝ ի կառավարչացն Գանձակայ, նուաճեաց ընդ իշխանութեամբ իւրով և ինքեան հպատակ արար:

Ի վերայ այսր գունդն Քեանկեարլուի, որ հպատակ միոյ հազարապետիս էին, ի ժողովրդենէն Նախիջևանայ, և Տամուրչի-Հասանլուեցիք, (10բ) որ ի Վրաստան եղեալ Տամուրչի-Հասանլուեցւոյն են՝ ժողովուրդ ճոխ, միում հազարապետի հպատակ էին, և ժողովուրդն Զինլուի, որ հպատակ էին հազարապետի միում, և էին յերեւելի հասարակութեանց Վրաստանու, սեպական յօժարութեամբ իւրեանց դառնալով ի հպատակութիւն և ի ծառայութիւն խանին՝ բնակեցան յերկրին Ղարաբաղու և մտերմութեամբ ծառայէին նմա¹²⁶:

Վերջապէս յետ միոյ ամի զկնի հիմնարկութեան Շուշի բերդաքաղաքի Ղաճար Մահամատ Հասան խանն ժողովեալ զգօրս արիւնարբուս՝ անհամար բազմութեամբ յերկրէն Իստրաբատայ, Մազանդարանայ և Քեալանաթայ¹²⁷, ի կամս նուաճելոյ զՇուշի քաղաքն, եկն¹²⁸ և եհար զբանակ իւր ի վերայ Խաթուն-արխին, որոյ բնակիչք հպատակ էին Շուշի քաղաքի:

¹²⁴ Չեռագրում այսպես է, պետք է կարդալ Ղարաղաղու:

¹²⁵ Պետք է լինի «ի կառավարչէն երևանայ» (հմմտ. Мирза Адигезаль-бек, указ. соч., с. 56):

¹²⁶ Արցախի տարածքում թուրք-թաթարական քոչվոր ցեղերի բնակեցման մասին տես Ахмед-бек Джаваншир, указ. соч., с. 71:

¹²⁷ Պետք է կարդալ Գիլանայ:

¹²⁸ Ըստ վրաց արքայազն Դավիթ Բագրատիոնի «Նոր պատմութիւն» աշխատութեան՝ «1757 թ. Մահմադ-Յասան Ղաջարը զրավեց Պարսկաստանի ավելի քան կեսը ու մոտեցալ Շուշուն:... Իսկ երբ Շիրագում երևաց Քարիմ-խան Չանդը, այս Մահմադ-Յասան Ղաջարը Շուշիից գնաց նրա դեմ» (տես Սելիքսեթ-բեկ Լ., նշվ. աշխ., էջ 200):

Եւ թէպէտ մեծաւ փութով խորհէր գտանել զհնարս պատրանաց՝ կարթել զՓանահ խանն ի հպատակութիւն ինքեան, բայց ո՛չ ի գլուխ տանել կարաց վասն կարի իմն առաւել, քան զինքն հնարագէտ լինելոյ նորա: Ընդ երկար մնացեալ ի յիշեալ բանակի իւրում՝ հասուցանէր զբազմապիսի վնաս երկրին Ղարաբաղայ, բայց և աւազակք երկրիս այսորիկ զգրաստս զօրաց նորա և բերողաց վասն զօրացն զպաշարս յաւարի տանէին:

Յայսմ միջոցի զհամբաւ զօրանալոյ Զեանդ Քարիմ խանին¹²⁹ լուեալ, զմեծամեծ ուբազործիսն իւր թողով անդրէն ի Խաթուն-արխն՝ յետս դարձաւ:

Փանահ խանն զյիշեալ ուումբսն եբեր ի Շուշի բերդն, զորս, ի ժամանակի պաշարման Աբբաս-Միրզայի զբերդն Շուշի, առեալ ընդ իշխանութեամբ իւրեանց ուուք՝ ի կիր ածին զայնս:

(11ա) ԿԱԼԱՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՔԱՐԻՄ ԽԱՆԻՆ,
ՔԱԶՄ ԽԱՆԻՆ, ՀԷՅՏԱՐ-ՂՈՒԼԻ ԽԱՆԻՆ
ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ Ի ՀԱԶԻ ԶԱԼԱՊԷՆ

Զկնի յետս դառնալոյ Մահամատ Հասան խանին՝ Փանահ խանն, Քազմ խանն Ղարատաղայ, Հէյտար-Ղուլի խանն Նախիջևանայ և Շահվերտի խանն Գանձակայ, խորհուրդ արաբեալ՝ այսպէս հաւանեցան, թէ՛ Հաջի Չալապին բոլոր Շիրվանայ տէր և իշխան լեալ զմեզ ո՛չ յիշէ և ո՛չ ունի զճանապարհ հաշտութեան ընդ մեզ, ապա պարտիմք հայթայթել զհնարս նեղելոյ զնա և պատրաստել մարտ ընդդէմ նորա: Յետ որոյ զծածուկ սրտից իւրեանց ի ձեռն պատգամաւորաց և նամակաց ի յայտ ածին արքային Հերակլէ խանին, և նա ևս զհամաձայ-

¹²⁹ Քերիմ խանը երկարատև գահակալական կոիվներից հետո իրեն ենթարկեց գրեթե ողջ Իրանը և 1761–1779 թթ. իշխեց վեքիլ (լիազոր) հորջորջմամբ:

նութիւն և զհամակամութիւն ընդ նոսա յայսմ խորհուրդ յայտնեալ՝ ծանոյց նոցա, զի մեծաւ փութով ջան դիցեն և առանց ժամավաճառ լինելոյ դիմեսցեն անդր:

Այսոքիկ խանք զպատրաստութիւն ճանապարհորդութեան հոգացեալ՝ ժողովելով զգորս յուղի անկան դէպ ի սահմանս Գանձակայ, ուրանօր ի վեր քան զքաղաքն Գանձակ ի Ղզրդ-ղայս տեղւոջն հարին զբանակն՝ կառուցանելով զգեղեցկագոյն վրանս իւրեանց:

Իշխանն Հերակլէ նենգութեամբ զսոսա զչորեաին կապեաց ի կապանս գերութեան¹³⁰: Եւ ի նմին իսկ ժամու մին ի ծառայից Շահվերտի խանին հեծեալ ի ձի՝ ի փախուստ փութացաւ:

(11բ) Եւ յայնմ ժամանակի Հաջի Չալապին ևս վասն գումարելոյ զգորս ի Շիրուանայ հրաման տուեալ՝ մեծաւ պատրաստութեամբ եկն ի Մանքու-չար (Մինկեաչօփր), ուրանօր կացեալ սպասէր պատերազմի և ընդ առաջ ելանելոյ ինքեան: Ի սմին ժամու երևեցաւ նմա հեծեալ ոմն, զոր Հաջի Չալապին հրամայեաց անցուցանել նաւու ընդ գէտն Կուր: Եւ իբրև անցեալ՝ ներկայացաւ նմա և ասաց.

«Ղօճայ բապայ (Հայր ծերունի), զխանսն կալաւ վալին»:

Որում պատասխանի ետ Չալապին, թէ.

«Ես ազատեցից զնոսա և, ահա՛, դիմեմ վասն ազատութեան նոցա»:

Յետոյ մեծամեծք ամենայն ի խորհուրդ հաւաքեցան: Չալապին ի ժողովոյն նոցա վասն խորհրդոյ ըստ ա[յ]սմ առարկայի զիտաց զծածուկսն սրտից նոցա, ուստի և ի ժամու երթալոյ նոցա ի տեղի խորհրդեան հրամայեալ էր, թէ.

«Զինչ խորհուրդ և տեսանեսջի՛ք, յայնմ անց ընդ գետն Կուր անհրաժեշտ պարտի լինել»:

¹³⁰ Ըստ վրաց աղբյուրների՝ այս դեպքերը տեղի են ունեցել 1752 թ. (տե՛ս Մելիքսեթ-բեկ Լ., նշվ. աշխ., էջ 139-140, 169-170):

Որոց ի լսելն զայս բան նորա յետս դարձեալ՝ ո՛չ ևս չոգան ի խորհուրդ՝ ասելով, թէ.

«Մեք վասն այն ժողովիմք, զի ի՛ւ և է հնարիւք կարացուկ գտանել արգելանս անցից ընդ գետն, և եթէ կամիք անցանել, անշո՛ւշտ, հրամայեցէ՛ք զօրաց գնալ»:

Հրամայեաց Հաջի Չալապին կարի վաղվաղակի անցանել ընդ գետն Կուր:

Վալին, ի լսելն զայս դիպուած, մեծապէս զերկիւղի հարաւ, վասնզի մի անգամ ևս տեսեալ էր նորա նախքան զայն զներգործութիւն ձեռաց զօրացն Հաջի Չալապին, բայց յանձարութենէ ել ընդառաջ նորա (12ա) մերձ ի շէյխի նիզամի մարաղաք տեղին¹³¹, ուրանօր պատահեցաւ պատերազմ սաստիկ ընդ մէջ երկուցունց սոցա: Զօրք վրաց, զկնի յաղթելոյ յերեսաց զօրացն Չալապինն ընդ զօրապետացն իւրեանց, վալինն՝ առ չգտանելոյ հնարից դարձի ի բանակն իւրեանց, անդրէն ի փախուստ փութացան ի տեղւոջէ պատերազմին և կամեցան ի տունս իւրեան[ց] դառնալ՝ անդանօր ի Ղզլղայայ թողեալ զամենայն զգոյս և զծանրութիւն իւրեանց զվրանս:

Հաջի Չալապին, հետապնդեալ նոցա ի փախստեան երեք մղոնաւ ի վեր քան զՄնըղն¹³², մերձեցաւ ի Տիխիս հինգ մղոնեայ բացակայութեամբ ի քաղաքէն: Եւ զառաջս կալեալ ի փախուստ անկեալ զօրացն վրաց ի տեղիսն Շամքուր, Շամշատինլու և ի Ղազախ՝ զբազում անձինս ի կորուստ մատնեաց: Հաջի Չալապին ի հողն Բայդարու¹³³ կառուցեալ ամրոցս՝ կարգեաց զորդին իւր՝ Աղայ-Քիչի բէգն, ի վերայ թուրքաց եղելոց յայսկոյս Տիխիսայ կառավար և հրամանատու, իսկ զխանսն յերկիր իւրեանց առաքեալ՝ ինքն յետս դարձաւ ի Շիրուան:

¹³¹ Մարաղաքը թուրք. «մաղբարե» (դամբարան, գերեզման) բառի եղծված ձևն է: Խոսքը պարսիկ մեծ բանաստեղծ Նիզամու դամբարանի մասին է:

¹³² Խոսքը Խրամ գետի վրա գցված Սընըղ-քոյրիկի կամրջի մասին է:

¹³³ Թյուրքական բնակավայր, որը գտնվում է Խրամ և Կուր գետերի միջև:

Աղայ-Քիչի բէգն յայնոսիկ սահման զամս երիս վարեաց զիշխանութիւն իւր: Ի վերջոյ իշխան վալին վրաց, ժողովեալ զբազում զօրս ի Բաշաչղայ, ի Վրաստանէ, և չոգաւ վասն կորուսանելոյ զԱղայ-Քիչի բէգն: Ի լսելն զայս համբաւ, ոչ կարելով Աղայ-Քիչի բէգին ընդդէմ նորա զգլխի հարկանել՝ փախեաւ¹³⁴: Յառաջապահ զունդք ի զօրաց վալիին հասին նմա ի վերայ գետոյն Թաւուզայ: Զկնի պատերազմելոյ զքանի մի զանձինս ի կորուստ մատնեցին և զոմանս ևս ի գերի վարեցին, այլ ինքն (12բ) առանց վնասու եկն ի Շաքի:

Զօրք վալիին մինչ ի կամու[ր]ջն Խոռտաֆիրինայ գնացեալ՝ աւար հարին կարի յոյժ յերկրացն Գանձակայ և Ղարաբաղու:

ԳԱԼՈՒՍՏ ԱՖՇԱՐ ՖԱԹԱԼԻ ԽԱՆԻՆ ՈՒՐՄԵՑԻՈՅ Ի ՎԵՐԱՅ ՂԱՐԱԲԱՂԱՅ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ ՆՈՐԱ

Դատաւորն Ուրմու՝ Աֆշար Ֆաթալի խանն, որ էր մին ի սիրելեաց Նատիր շահին և յերևելի զօրապետաց նորա և միշտ յառաջախաղաց ի պատերազմի, նուաճեալ զբոլոր կողմունսն Ատրպատականի՝ բարձրացոյց յայնս զգրոշակ իշխանութեան իւրոյ: Նա բացի Փանահ խանայ ո՛չ զոք համարէր արգել հասանելոյ իւրոյ ի նպատակ և ընդդիմակաց ինքեան: Ընդ որում և կարի իմն թշնամացեալ՝ եօթնիցս պատերազմ յարոյց ընդդէմ նորա, և յիւրաքանչիւրում նուազի մեծաւ վնասու յետս դարձաւ:

¹³⁴ Այս տեղեկութիւնը համահունչ է վրացի պատմագիր Օման Խերխեուլիձեի այն հաղորդմանը, ըստ որի՝ «Երկոքյան թագավորները՝ Քարթլիի և Կախեթի (Թեյմուրազ II-ը և Գերակ II-ը – Ա. Մ.), չերքեզական զորքերով հանդերձ, Տփղիսից ելան: Գննց որ սրանք իջան Սողանլուղ, Գաջի-Չալաքի որդի Աղա-Քիչին և այլ խաները, որոնք սրա հետն էին, Բայդարը թողին և, վերադառնալով հասան Ղազախ» (տե՛ս Մելիքսեթ-բեկ Լ., նշվ. աշխ., էջ 175-176):

Հուսկ, ուրեմն, եկն ի Բալ[լ]ուջայ-ղայեայ բազմութեամբ զօրաց¹³⁵ և շուրջ զգետովն Խոջալուի յընդարձակ դաշտին, ընդ մի կողմն ճանապարհին, եհար զբանակն իւր՝ կառուցանելով անդանօր զամրոցս և պատնէշս, ուր զարդիս ևս նշանք որմոց և պարսպաց այնոցիկ տակաւին երևին: Եւ յանուկ Փաթալի բէգին կոչի այն ի միջի ժողովրդեան Փաթալի խան սանկեսաթի¹³⁶: Անդանօր ձմերեցաւ նա:

Ի սմին ժամանակի մելիքք Զրաբերդ և Թալիշ (13ա) գաւառակաց՝ հայազգի Մելիք-Աղամն և Մելիք-Ուսուբն, ևս կառուցին ի միոյ կողմանէ բանակի խանին զամրոցս ընդդէմ Փանահ խանին, որոյ նոյնպէս որմոյ և պարսպաց նշանք երևին անդրէն: Մնացին նոքա անդանօր ի տեղիսն յընթացս վեցամսեայ ժամանակի:

Ի սմին միջոցի թէպէտ Փաթալի խանն յարդարեաց քանիցս զպատերազմ, այլ բաց յապաշաւանաց ոչինչ ստացաւ: Վերջապէս միջնորդութեամբ յիշատակեալ մելիքաց առ մի նուազ ևս էլ սաստիկս ի պատերազմ, որում ընդառաջ ել անյապաղ Փանահ խանն ընդ անխոնջ և քաջասիրտ զօրաց Ղարաբաղու ի պատերազմ:

Իբրև ետես Փաթալի խանն, թէ յայսչափ հարուածոց և ի հետամտութենէ իւրմէ ի մարտ ոչինչ բաց յապաշաւանաց շահի, և հասանել ի նպատակ կամաց իւրոց ոչ կարէ, ի ձեռն պատգամաւորաց և միջնորդաց սկիզբն արար խաղաղութեան՝ ի մէջ անկանելոյ զխոռվութիւն ի բաց բառնալով: Փանահ խանն ևս, ըստ առածիս՝ «Ընդ առն դիւրախօս և խաղաղասէր զարժէ գոյ ծանրախօս», զխնդիր նորա և զպատգամն կալեալ՝

¹³⁵ Ըստ Սիմեոն Երևանցու հիշատակարանի՝ Ֆաթալի խանի արշավանքը դեպի Շուշի տեղի է ունեցել 1761 թ. (տե՛ս Դիւան հայոց պատմութեան, գիրք 9, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, էջ 57):

¹³⁶ Պետք է կարդալ «Ֆաթալի խանի սանգյար», այսինքն՝ «Ֆաթալի խանի ամբողջութիւն»:

ել ի տեսութիւն նորա տեղւոջն Աղաքօրփի¹³⁷, ուրանօր և եղին զպայման խաղաղութեան՝ հաստատեալ էին նոքա ընդ երդմամբ:

Վասն այն խնդրեաց ի Փանահ խանէն առաքել զորդին իւր զԻբրահիմ-Խալիլ աղայն առ ինքն՝ ասելով, թէ.

«Յետ այսր ի միջի իշխանութեան մերոյ և երկրաց չի՛ք և ոչինչ խտիր այլայլութեան, զոր յետ անցուցանելոյ նորա զքանի մի աւուրս առ իս, յարգանս ընդ մեծամեծաց իմոց և պատճառելոյ ինձ զմեծ զուրախութիւն ի տեսութենէ իւրմէ՝ կրկինս վերադարձուցից զնա առ ձեզ, որով կարի (13բ) շնորհակալու կացուալիք զիս»:

Փանահ խանն հաւատացեալ բանից նորա՝ զհարազատ որդին իւր զԻբրահիմ-Խալիլ աղայն, ընդ ճարտարախօս արանց, առաքեաց ի բանակն նորա:

Յորժամ համբաւս այս եհաս առ Յաթալի խանն, նա երեւեցուցանելով առերեսս զբազում ուրախութիւն՝ յատենակից զօրապետաց իւրոց, ի բարեկամաց և ի մեծամեծաց զոմանս առաքեաց ընդառաջ Իբրահիմ-Խալիլ աղային, և հրամայեաց նոցա՝ բերել զնա առ ինքն ի մեծապատիւ յարգանս:

Յետ անցուցանելոյ Իբրահիմ-Խալիլ աղին զաւուրս ինչ առ յիշեալ խանին՝ ետես, զի նա ո՛չ դարձուցանէ զինքն յետս, ուստի ապսպարեաց հօրն իւրում Փանահ խանայ, թէ.

«Ի նշանաց երևի, զի կամք են Փաթալի խանին տանել զիս ընդ ինքեան: Զձին իմ աշխէտ, որ կայ ի բերդիդ (Շուշի) անյապաղ ի ձեռն ոյր և իցէ առաքեա՛ ինձ, որով գոնէ կարացից գտանել զհնարս փախստեան ի ձեռաց սորա»:

Մինչև հասեալ ձիոյն ի բանակ Փաթալի խանին՝ նա առեալ ընդ ինքեան զԻբրահիմ աղայն, ընդ բոլոր զօրացն իւրոց, զնաց ի հայրենիս իւր¹³⁸:

¹³⁷ Կամուրջ Շուշի մոտակայքում:

¹³⁸ Ըստ Ա. Բաքիխանովի՝ Փանահ խանը պատանդ էր տվել իր որդուն (տես Бакиханов А., Гюлистан-Ирам, с. 130):

Ի լսելն զայս Փանահ խանայ բօթալի համբաւս՝ կարի իմն տրամեցաւ, և ժողովեալ զամենայն մեծամեծս իշխանութեան՝ խորհուրդ եհարց վասն ազատութեան որդւոյ իւրոյ հարազատի, թէ որո՞վ իւրիք մարթէ արդեօք մեզ գտանել զհնարս ազատութեան ի ձեռաց օձաբարոյ առն այնորիկ, և այնու վարակեալ ի հոգետանջ տրամութեան:

Յայսմ միջոցի Քարիմ խանն Զեանդ, որ էր այր ճոխացեալ հարստութեամբ, ի տէրութեան (14ա) Պարսից ի վեր երևեցաւ, և, ի պատճառս ո՛չ լինելոյ յերկրին Իրանայ ինքնակալ թագաւորի, զանձն իւր տեղապահ (վեքիլ) թագաւորի հրոչակեաց, որպէս թէ և ի ժամանակի կենդանութեան թագաւորին լեալ իցէ նորա յայնմ աստիճանի:

Ընդ մէջ սորա և յիշեալ Փաթալի խանին ի վեր երևեցաւ թշնամութիւն և խռովութիւն մեծ: Այս Քարիմ խան զեղբայրն իւր՝ զԱսկեանդար խանն, անթիւ բազմութեամբ զօրաց և մեծաւ պատրաստութեամբ մարտի առաքեաց ի վերայ Փաթալի խանին, որք ի սահմանս Ասպահանայ հանդիպեցան միմեանց ի պատերազմ անհաշտ, յորում և Ասկ[ե]անդար խանն սպանաւ և զօրք նորա յաղթեցան: Փաթալի զինչ ինչ տեղի ևս յերկրէն Իրանայ էառ ընդ իւրովն իշխանութեամբ:

Իբրև լուաւ Քարիմ զբօթալի համբաւ այս և հոգետանջ, ժողովեալ զբազում զօրս՝ յուղի անկաւ դէպ ի սահմանս Ատրպատականի, և նախքան զհասանելն յայս երկիր զմի հաւատարիմ այր և ճարտարբան ի միասին ընդ բարեկամական նամակաց առաքեաց առ Փանահ խանն՝ յայտնելով, թէ.

«Այժմ խռովարարն այն՝ Փաթալի խան, եղեալ զհիմն թշնամութեան՝ է մեզ արիւնապարտ, Զեզ ներքին թշնամի, որ երդմնազանց եղեալ՝ զեղբայրն իմ սպան և զորդին Զեր զԻբրահիմ-Խալիլ աղայն տարաւ: Զիմ զսիրտ տոչորեալ մահուամբ եղբօր իմոյ՝ զսէրն կարօտակէզ արարեալ: Յիւրաքանչիւրում աւուր յարուցանէ զմարտ ընդ ումեք իշխանաց: Ես ևս ընդ մէջ ածեալ զսուրն վրէժխնդրութեան՝ ընդդէմ նորա յարուցի զպա-

տերազմ: Վասն որոյ յարգոյաբար խնդրեմ ի տէրութենէ Ձերմէ, զի առանց յապաղանաց և յետաճգութեան ընդ Ձերով իշխանութեամբ եղեալ զօրօք հանդերձ արժանի (14բ) վարկջիք ընդ փոյթ ընկերելոյ ինձ, որովհետև զազատութիւնն հարազատ որդւոյ Ձերոյ, զվրէժխնդրութիւն վասն եղբոր իմոյ կալեալ ունիմ ինձ ի նպատակ»:

Փանահ խանն ևս, որ միշտ այսպիսի պարապոյ սպասէր և յԱստուծոյ խնդրէր անդադար զդատաստան Փաթալի խանայ, անյապաղ անհամար հեծելովք և բազում հետեակ զօրօք յընկերութիւն Քարիմ խանին փութացաւ և յերկրին Ատրպատականի խառնեցաւ ընդ Քարիմ խանայ: Եւ երկոքին ի միասին ընդդէմ Փաթալի խանին յարուցին զպատերազմ: Յորժամ հասին ի սահմանս Ուրմուտ՝ շուրջ զկողմամբ քաղաքին հարին զվրանս բանակաց իւրեանց:

Փաթալի խանն բազում զօրօք ելեալ ընդառաջ նոցա ի մարտ, յետ սակաւ ինչ նշանս մարտի յարուցանելոյ ընդդէմ նոցա, յաղթեալ յերեսաց նոցա՝ եմուտ ի բերդն իւր և ամրացաւ անդ: Զկնի անցանելոյ քանի մի աւուրց, տեսեալ զդարձ բաղտի իւրոյ, բացի հնազանդութենէ ոչ եզիտ օգուտ ինքեան, ուստի յանհնարս մտեալ՝ ապաւինեցաւ յորդորումն Քարիմ խանին, դարձաւ ինքնակամ ի հնազանդութիւն և հպատակութիւն սորա¹³⁹:

Եւ Քարիմ խանն զԻբրահիմ-խալիլ աղայն ազատեալ՝ ի միասին ընդ մեծագին պարզեաց, որոյ երկսայրի զարգարելոյ յակունս պատուականս, ճիւղ նոյնպէս զարգարելոյ ի զանազան զարդս և հրովարտակի ի մասին խանութեան ի վերայ Ղարաբաղու՝ զարձոյց Ղարաբաղ:

¹³⁹ Ուրմիայի բերդի պաշարումը տեսել է շուրջ իմն ամիս և ավարտվել Ֆաթալի խանի անձնատվությանը՝ 1763 թ. (տես՝ Строева Л., Керим-хан Зенд и ханы, «Иран. История и современность». Сборник статей. М., 1983, с. 93):

Եւ հրաւիրեալ զՓանահ խանն՝ խնդրեաց ի նմանէ գալ ի կողմանս Շիրազայ, վասն զբօսելոյ զաւուրս ինչ ընդ նմա (15ա) անդանօր: Փանահ խանն հաւանեցաւ ընդ այն¹⁴⁰:

Քարիմ խանն, առեալ ընդ ինքեան զՖաթալի խանն, ընկերութեամբ ընդ Փանայ խանայ փութացաւ ի Շիրազ:

Ի սահմանս Ասպահանայ զճանապարհացն հասին ի տեղին, ուր եղբայր Քարիմ խանին՝ սպանեալ Ասկեանդար խանն պատերազմեալ էր: Եւ թէպէտ մայր Քարիմ խանին կարի թախանձէր զնա, զի զՖաթալի խանն առ ի վրէժխնդրութեան եղբոր իւրոյ սպանցէ, բայց Քարիմ խանն վասն երդմանն ո՛չ համարձակեցաւ ընդ բան մօրն, մինչև ժամանեցին ի տեղին, ուր Քարիմ խանն եհարց ցՖաթալի խանն.

«Ճանաչե՞ս զայս տեղի»:

Որում Ֆաթալի խանն համարձակութեամբ արար զպատասխան, թէ.

«Այո՛, այս զԱսկեանդար խանն բարձի ի կենաց»:

Քարիմ խանն զարմացեալ, զայրացեալ ընդ համարձակ պատասխանին՝ նոյն ժամայն եհար զնա ի տեղւոջն և ի կենաց զբաւեաց:

Եւ զկնի ո՛չ բազում ինչ աւուրց ժամանակի յետ հասանելոյ նոցա ի Շիրազ՝ Փանահ խանն հիւանդացեալ մեռաւ¹⁴¹, զորոյ և զմարմինն կարի մեծաւ պատուով բերին ի Ղարաբաղ երկիրն յԱղդամ տեղին, զոր գնեալ էր նա ի կենդանութեան իւրում սեպհական արդեամբ[բ]ք իւրովք, և թաղեցին անդանօր¹⁴²:

¹⁴⁰ Առավել հավանական է թվում, որ Փանահ խանը Քերիմ խան Ձենդի մոտ էր գտնվում պատանդի կարգավիճակով: Այս տեսակետի օգտին է վկայում այն փաստը, որ այդ ժամանակ Քերիմ խանը որպես պատանդ իր հետ Շիրազ է տանում նաև Ղարաղաղի Քյազիմ խանին և Խոյի Շահբազ խան Գումբուլիին (տես՝ Կոստիկյան Ք., Ղարաբաղի XVIII դարի պատմությունն ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ի, «ՊԲՀ», 1999, N 2-3, էջ 355):

¹⁴¹ Իրականում Փանահ խանը 1763 թ. ողջ-ողջ հերձվել է Քերիմ խան Ձենդի հրամանով (տես՝ Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 62):

¹⁴² Հարազատները Փանահի դիակը տարան և թաղեցին Աղդամի մոտ գտնվող Իմարեթ վայրում:

Յետ մահուան Փանահ խանայ հարազատ որդի նորա Իբրահիմ-Խալիլ խանն ի 1173 ամի¹⁴³ (Փրկչին 1757) յինքն գրաւեալ զիշխանութեան ի վերայ Ղարաբաղու՝ (15թ) ո՛չ հնազանդէր այլևս թագաւորացն պարսից և օսմանեանց և այլոց ինքնագլուխ իշխանաց: Եւ երկրացն Ղարաբաղու, Շաքւոյ, Շիրուանու, Գանձակայ, Դաւրիժայ, Նախիջևանայ, Արտավիլայ, Խոյայ, Մարաղու և Իրանայ մինչ ի Ղափլանքիւճ¹⁴⁴, որ է սահման Արաղայ և Ատրպատականի, հրամանատու եղև, յորոց ի վերայ կարգել զոք իշխան կամ կառավար հրամանօք և կամօք սորա լինէր¹⁴⁵: Եւ ընդ կառավարչին Ավար գաւառակի երկրին Տաղստանայ Ումայ խանին՝ որդւոյ Նուսրալ խանին, բարեկամացեալ էառ զքոյր նորա զԲիքայ աղայն ինքեան ի կնութիւն: Ի ժամանակի հարկաւորութեան ի ձեռն զօրաց Տաղստանայ յաղթող լինէր շրջակայ թշնամեաց իւրոց, որպէս և քաջասիրտ զօրօքն Տաղստանայ առեալ գերկիրն Ղարատաղայ և զԲիւրդաշտ քաղաքի նորին կործանեալ՝ վեր ի վայր արար, նշանք, որոյ այժմ ևս երևին, ուր և կան ամբողջութեամբ աշտարակք և պարիսպք, ուստի և բնակիչք նորին ի փախուստ անկեալ՝ ցրուեցան յայլևայլ տեղիս: Զկառավարն Քուրտաշտայ զՄուստաֆայ խանն ձերբակալ արարեալ՝ վարեաց ի գերութիւն:

¹⁴³ Հիջրայի 1173 թ. սկսվել է 1759 թ. օգոստոսի 25-ին և ավարտվել 1760 թ. օգոստոսի 12-ին: Իրականում Իբրահիմ խանը իշխանության է անցել 1763 թ.:

¹⁴⁴ Ղափլանքուի լեռը գտնվում է Ատրպատականի Միանեի շրջանի հարավարևելյան մասում (տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 63):

¹⁴⁵ Այստեղ Ադիգոյալ-բեկն այնքան է գերագնահատել Իբրահիմ խանին, որ անգամ նրա երկի Բաքվի հրատարակիչներն են հարկադրված արձանագրել. «Դեղինակը թույլ է տալիս մեծ չափազանցություն: Իբրահիմ խանը երբեմն ուժեղ ազդեցություն է ունեցել միայն Ղարաղաղի, Արդեբիլի, Նախիջևանի և Գանձակի խաների վրա: Իսկ Շաքիի, Շիրվանի, Թավրիզի, Խոյի, Մարաղայի և Երևանի խաները երբեք կախված չեն եղել Իբրահիմ խանից» (տե՛ս Мирза Абу-гезалъ-бек, указ. соч., с. 74):

Եւ զկնի ձերբակալ առնելոյ զՄուստաֆայ խանն զոմանս ի խանացն Ղարատաղայ, Շահսէփանայ և այլոց ցեղից հպատակ ինքեան արար, զորոց և զկալուածս ի միասին ընդ գիւղօրէից երբեմն երբեմն բաշխէր զօրապետաց և ծառայից իւրոց ի պարզև, զի յարդեաց այնոցիկ շահեսցեն: Եւ թէպէտ Իբրահիմ խանն զանուն թագաւորութեան (16ա) ոչ ունէր, բայց խանք և սերունդք խանաց սահմանակից տեղեացն այնոցիկ կային ի պատանդի առ նմա:

Զկնի մահուան Զեանդ Քերիմ խանին¹⁴⁶ Աղայ Մհամմատ խանն՝ որդի Ղաճար Մհամմատ Հասան խանին, որ կայր ի պատանդի ի Շիրազ, ի փախուստ դարձաւ: Եւ յինքն գրաւելով զիշխանութիւն ի վերայ երկրացն Պարսից և Արաղայ, զքաղաքն Թէհրան աթոռանիստ արարեալ՝ ի 1176 ամի և Փրկչին 1760 ամի եմուտ յերկիրն Ատրպատականի, ընդ ձեռամբ իւրով նուաճելով զերկիրսն եղեալս ի հարաւային կողմանս Երասխ գետոյն, և անցեալ ի հիւսիսայնկողմանս Երասխ գետոյն, թէպէտ վասն տիրելոյ երկրացն Թալիշու և Երևանայ յարուցեալ էր զպատերազմս բազմապիսիս, բայց նուաճել զայնս չէր յաջողեալ նմա:

Եւ թէպէտ զառաջինն առաքելով վասն Իբրահիմ խանին զպարզևս՝ հրաւիրեալ էր զնա ի հպատակութիւն ինքեան, և ի միջի նոցա գտանիւր բարեկամութիւն լեզուի միայն ի վերին երեսս, բայց ի նմին ամի զկնի յետս դառնալոյ Աղայ Մհամմատ խանին յերկրէն Ատրպատականայ և թագաւորելոյն, ի միջի նորա և Իբրահիմ խանին ըստ դիպուածոյ իմիք ի վեր երևեցաւ խռովութիւն ինչ և թշնամութիւն: Աղայ Մհամմատ շահն դարձաւ դէպ ի սահմանս Շիրազայ և Պարսից, վասն ի բաց բառնալոյ զաղմուկ խռովութեան, ի վեր երևելոյ անդա-

¹⁴⁶ Քերիմ խան Զեանդ վախճանվել է 1779 թ. մարտի 2-ին (տե՛ս Шабани Р., указ. соч., с. 211):

նոր ձիտ* ըստ կամաց իւրոց խաղաղացուցանել զաղմուկսն զայնոսիկ, ի 1207 ամի (Փրկչին 1791 ամի), վասն նուաճելոյ զնահանգսն Վրաստանու, Երևանայ, (16բ) Թալիշու և Ղարաբաղու բազում զօրօք և ժողովովք եկն յերկիրն Ատրպատականայ: Եւ զեղբայրն իւր զԱլի-Ղուլի խանն, որ էր գլխաւոր և առաջին կառավարչաց իւրոց, ի միասին ընդ այլ խանաց մեծաւ բազմութեամբ զօրաց առաքեաց ի վերայ Երևանայ¹⁴⁷: Ինքն ընդ բազմութեան զօրաց՝ գումարելոյ յԱրաղայ, ի Պարսից, ի Խորասանայ և յԱտրպատականայ եկն և միով մղոնաւ Հեռի Շուշի բերդաքաղաքէ եհար զբանակն իւր բազմամարդ¹⁴⁸:

Իշխանն վրաց Հերակլէ խան, կառավարն Թալիշու¹⁴⁹ Մուստափայ խանն ընդ երդմամբ միաբանեցան ընդ Իբրահիմ խանին և դաշնադիր եղեն¹⁵⁰, զի մի՛ ցուցցեն ի կողմանէ իւ-

* Չեռագրում այսպես է:

¹⁴⁷ Ըստ Աբրահամ Աստապատցու հիշատակարանի՝ Աղա Մուհամմադ խանը «զեղբայրն իւր զԱլիղուլի խանն առաքեաց երկուտասան հազարօք առ Նախ-ջուանաւ ի վերայ Երևանայ, որոյ եկեալ բանակեցաւ հանդէպ բերդին, ուր եկն ընդ առաջ նորա աստուածապատիւ Յայրապետն ամենայն Յայոց տէր Ղուկաս երջանիկ կաթողիկոսն Սբ. Աթոռոյն Էջմիածնի, իրրեւ քաջ հովիւ եւ փեսայ՝ դնելով զանձն իւր ի վերայ հօտին եւ հարսին հոգեւորի: Եւ մատոյց մնա բազում ընծայս՝ ըստ արժանւոյն՝ ջանահնար լինելով յամենայնի զերծ պահել զՍուրբ Աթոռն ի գլխաւոր վնասուց. եւ առ այս՝ ծախեաց անդէն առ դրան նորա չափազանց դրամս, ոմանց բազում, եւ ոմանց սակաւ տալով» (տես՝ Թումանեանց Յ., Մի պատմական յիշատակութիւն Աղայ-Մահմադ-խանի մասին, «Բանասեր», Պարիս, 1903, թիւ 6-7, էջ 211):

¹⁴⁸ Աղա Մուհամմադ խանի բանակատեղին գտնվում էր «Նարաթ-խան» կամ «Շահ-յուրտ» կոչված վայրում (տես՝ Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 67):

¹⁴⁹ Չեռագրում այսպես է, սակայն պետք է լինի Շիրվանի:

¹⁵⁰ Այս տեղեկությունը հաստատում է նաև իրանցի պալատական պատմագիր Մուհամմադ Սարավին իր «Թարիխ-ե Մուհամմադի» երկում, որտեղ գրում է. «Եւք փնտրելով Իբրահիմ խանը մենզաբար միանում է Թիֆլիսի վալիին: Հաղթական հերոսի (Աղա Մուհամմադ խանի - Ա. Մ.) ահեղ զորքի ահից Իբրահիմ խանը անհրաժեշտ է համարում օգնություն խնդրել Շիրվանի ու Շամախու, Ղուբայի, Դերբենդի կառավարիչներին և, ապավինելով անօգուտ դաշինքին ու

րեանց զհպատակութիւն Աղայ Մհամմատ շահին և մի՛ կալցեն զճանապարհն ծառայելոյ նմա: Եւ որչափ ինչ մարթ լիցի օգնական և թիկնապահ միմեանց լեալ՝ մի՛ թողցեն զիրեարս անհոգութեամբ: Եւ զոմանս ի ժողովրդականացն Ղարաբաղու առաքեաց ի կողմն Վրաստանու, զոմանս առ Մուստափայ խանն Շիրուանու, որ ի կողմանէ Իբրահիմ խանի կարգեալն էր անդանօր՝ ի թիւս բարեկամաց նորա համարիւր, իսկ ի մնացելոց ոմանք ընդ գիւղականաց, որք կային ընդ իշխանութեամբ յիշատակեալ խանին, ի լերինս բնակեցան, ոմանք ևս ի ներքս ի քաղաքին, իւրաքանչիւր յիւրում տեղւոջ մնային անշարժ: Եւ ժողովեալ զբազում հետեակս, զհեծեալս հանդերձ մեծաւ պատրաստութեամբ յարուցին զպատերազմ:

(17ա) Աղայ Մհամմատ շահն պաշարեալ զբերդն՝ մնաց անդանօր յընթացս երեսուն և երից աւուրց, և առաքեաց զպատգամաւորս և զթուղթս բարեկամական և զբազում միջնորդս, զի կարասցէ ինքեան հնազանդեցուցանել զԻբրահիմ խանն հանդերձ բնակչօք Ղարաբաղու: Բայց չկարացեալ հասանել ի նպատակ իւր՝ զայս բան ոտանաւոր ասացեալն ի Ալ-յիդ Մհամ[մ]ատէ Իւրֆիէ առաքեաց նմին.

«Տեղան քեզ քարինք յերկնից բարանաց,
այլ դու յիմարեալ կաս ընդդիմակաց,
յայդ ի յապակի ի նիւթ գիւրաբեկ,
պահել զամրութիւն խափուստ պարսպաց»:

Զի Շիշայ (Շուշի) ի լեզու թուրքաց է ապակին:

(22ա)* Յորժամ այս թուղթ նորա եհաս առ Իբրահիմ խանն, առաջինն յաւագորեարս նորա այր հանճարեղ և զգո-

զինակցութեանը, գոռոզաբար համառում է» (տես՝ Կոստիկյան Բ., Իրանի պալատական պատմագիր Սարավին Աղա Մուհամմադ խանի 1795 թ. Ղարաբաղյան արշավանքի մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVIII, Ե., 2011, էջ 342-343):

* Չեռագրի 17բ-21բ էջերը չգրված են:

նամիտ Մօլլայ Փանահ անունն ի նմին իսկ յայնմ ժամու ի միւս երեսն թղթոյ նորա գրեալ զայս բան ոտանաւոր՝ յետս առաքեաց նմա ի պատասխանի.

«Զի թէ նա է՝ պահպան իմ, զոր ես գիտեմ
զչիչն ի ծոց՝ քարանց պահէ, որպէս դիտեմ»:

Իբրև այս պատասխանի նորա առ Աղայ Մհամմատ շահն եհաս, ի սաստիկ բարկութենէն գողցես կորուսեալ զուղ իւր ի գլխոյն՝ հրամայեաց վաղվաղակի արձակել ի բերդն զահեղ ուսմբս թնդանօթաց, և գկնի շարունակելոյ զայսպիսի զիւր մարտ՝ ետես, զի Իբրահիմ խանն, որպէս աներկիւղ ոք ո՛չ երկընչի յայնպիսի սաստից նորա, և զօրք իւր զօրացն Ղարապաղու ընդ[դ]իմակաց լինել ո՛չ կարեն, ասէ.

«Գուցէ և յետոյ զօրք Ղարապաղու յաղթող ինքեան գտցեն»:

Ուստի խորհուրդք ի մէջ առին աւագանիք տէրութեան նորա, թէ՛ պարտ է ի կիսոյ վնասուն յետս դառնալ (զիանլըղ եարբսընան), եթէ ոչ ի խորութիւն արիւնարբու ծովուս և ի յերկիւղալից տեղիսս կորուսցուք զբազմութիւն անփորձ զօրաց մերոց և ո՛չ ոք ի մէնջ կեցցէ, որ դառնալ կարիցէ ի հայրենիս իւր յիրան: Սմին իրի անյապաղ դարձան յետս:

Ի սմին միջոցի և մելիքն Զրաբերդու Մելիք-Մեծլումն, որ առ պակասութեան խելացն յետս կալով յԻբրահիմ խանէն՝ յարեցաւ ընդ Ջաւատ խանն Գանձակայ, այսպէս խորհուրդ ետ, թէ.

«Ըստ որում յաղթութիւն այսր առապար երկրի ոչ անկաւ ի ձեռս ձեր, և դուք առ այն ոչ ձեռնհաս գտայք, ուստի ի պաշարումն Տիփսիսայ փութալ և առնուլ զայն, զի եթէ անհաս ի նպատակ դարձցիս այսրէն, յայնժամ (22թ) ժողովուրդք Իրանայ ժողով ապստամբութեան ստացին»:

Աղայ Մհամմատ շահն զբանս զայս կարի պատշաճ վարկուցեալ՝ դարձաւ դէպի Վրաստան:

Իրագեկ զայսմանէ լեալ՝ Իբրահիմ խանն ի ձեռն թեթեւագնաց հրեշտակաց և միջնորդաց ոմանց յայտնեաց վալիին Վրաստանու, թէ.

«Աղայ Մհամմատ շահն չկարացեալ ձեռնահաս գտնանել յառումն Շուշի քաղաքիս և ի նուաճումն սորին, այժմ մեծաքանակ պատրաստութեամբ դառնայ դէպի ձեզ, վասն առնելոյ զքաղաքդ Տիփսիս, ուստի զոր ինչ հնարս մարթիք հնարել առ յետադարձութիւն և յարգելումն հասանելոյ նորա ի նպատակ, մի՛ թողուք զայն»:

Ի հասանիլ այսր համբաւոյ ի լուր վալիին՝ յայտնեալ զայնմանէ վալիին Բաշաչղայ Սիւլէյման խանին¹⁵¹, որ էր թոռն իւր, և այլոց ազգականաց իւրոց, յորոց ի վերայ բաժանեալ էր նա Վրաստանն, զօգնութիւնս ի նոցանէ խնդրեաց առ ի զդէմ ունելոյ Աղայ Մհամմատ շահին: Բայց քանզի վալին էր այր հինաւուրց, որոյ էին ամք ի վեր քան եօթանասուն, տակաւին անհամբեր և անհանգիստ, և թէպէտ ո՛չ կամեր ի կողմանէ իւրմէ, զի և յաւուրս զառամութեան իւրոյ անհոգութիւն վասն արգելման թշնամանաց երևեսցի, և զօրք օտարազգեաց մտցին ի սահմանս Վրաստանու, բայց ոչ ոք յազգականաց նորա, ի մասին հակառակութեան իրիք եղելոյ ի միջի նոցա, եցոյց զօգնութիւն նմին և ոչ գնաց առ նա, բացի վալիէն Բաշաչղայ՝ ի Սիւլէյման խանայ, որ զզորս հազար զօրականս առաքեալ էր: Վալին թէպէտ գրեաց զսաստիկ հրաման և կարգեաց զհաստատ գործավարս, բայց նոքա պղերզք պարապեալ ի զուարճութեան կենաց (23ա) և համակեալ ի փափկութեան (քէյֆ)՝ ո՛չ ետուն զզօրս: Վալին յանձարութենէ՛ ընդ յիշեալ զորս հազար զօրաց ժողովեալ և զոմանս ի հպատակեաց ինքեան ի ծառայից, ի գործավարաց և ի ժողովրդենէն զազախ-

¹⁵¹ Ակատի ունի Իմերեթի թագավոր Սոլումոն II-ին (1790–1805), որը 1790 թ. ճանաչել էր իր պապի՝ Յերակլ II-ի քաղաքական առաջնությունը և միացել 1783 թ. Գեորգիևսկի պայմանագրին:

Թուրքաց զհեծելազորս¹⁵², ել անյապաղ ընդառաջ նորա՝ առ տալոյ զարգելման մտից Աղայ Մհամմատ շահին ի սահմանս Վրաստանու: Եկեալ հասեալ ի գաւառակն Ղազախայ մերձ Ինճայ գետոյն՝ եհար զբանակ իւր, ուրանօր և թէպէտ սպասէր օգնութեան ինչ ի նոցանէ ինքեան, բայց ո՛չ ետես:

Յորժամ Աղայ Մհամմատ շահն մուտ գործեաց յաշխարհն Գանձակայ, վալին յինճայ գետոյն յետս դարձաւ առ անճարութեան: Եւ վալիին եղելոյն ի գաւառին Ահաթայ, որ թոռն նորա էր, և յանուն նորին կոչիւր վասն ամրութեան ճանապարհին, առաքելով զթուղթ՝ ինքն մնաց ի Տիխիս ընդ սակաւաթիւ ժողովոյն այնմիկ¹⁵³:

Աղայ Մհամմատ շահն ևս անթիւ բազմութեամբ եկեալ ի տեղին ի Սողանլղ՝ եհար զբանակն, և զգլխերն անդանօր կացեալ՝ ընդ առաւօտն յարձակեցաւ ի վերայ Տիխիսայ: Բայց վալիին ևս ընդ այնմ ժողովոյ առեալ զճանրութիւն մարտին, զթնդանօթս և զայլ հանդերձանս պատերազմին՝ եհաս ի ջուրն Ֆրունաս, ուրանօր այժմ մաքսատուն կայ և անուանի: Եւ անդէն յարդարեցաւ պատերազմ զերկուց կողմանց: Ոմանք ի զօրականացն քաջասրտաց և ի զօրապետացն Հերակլէ խանին ընդդիմացեալ զօրացն պարսից՝ զժամս բազումս ո՛չ յառաջադէմ ի պատերազմ լինել: Եւ ըստ դիպուածոյ (23ր) ընդ առաւօտն ամպ արջնաթոյր պատեալ էր զխօրօք և զձորօք լերանց, սմին իրի զօրք պարսից յանճարութենէ ի գազաթն կոյս բարձու լերին չոզան: Իբրև յետս խաղացին ամպք թանճրամածք և երկիրն լուսաւորեցաւ, հայեցեալ զօրացն վրաց՝ տեսին զզօրս պարսից անցեալ ընդ քաղաքն և պատեալ շուրջանակի զտամբք իւրեանց: Վալին իբրև ետես զայս այսպէս, ժամ պա-

¹⁵² Աղա Մուհամմադ խանին դիմակայելու համար Գերակ II-ին հաջողվել էր հավաքել ընդամենը 7000 իռզու (տես Արասխանեանց Ա., Կովկասը հարիւր տարի առաջ: Շահ Աղա-Մահմադ-խանը Թիֆլիսում, «Մուրճ», 1895, N 9-10, էջ 1266):

¹⁵³ Ռ. Տիտանյանի հրապարակման մեջ այս անհաջող թարգմանված նախադասությունը բացակայում է (հմտ. Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 168):

րապոյ գտեալ՝ եմուտ ի պալատն, ուստի և առեալ զճիւղոր մի և զջորեպան ի փախուստ փութացեալ՝ էանց ընդ կամուրջն Հալուայ-բարայ, գնաց դէպ ի լերինսն Կրեկլըխանայ¹⁵⁴:

Զօրք պարսից մտեալ ի քաղաքն ի Տիխիս¹⁵⁵՝ զոմանս ի ընակչացն ճարակ սրոյ ետուն, զոմանս ի գերութիւն վարեցին, և զայլս բազումս կապեալ ի կապանս՝ ի ձեռն զօրաց իւրեանց դիւարարոյից տանջէին: Զամենայն ինչս քաղաքին՝ յետ այնորիկ զբարձրագագաթ պալատն զայն¹⁵⁶, ընդ այլ բազում բարձրաբերձ աշտարակաց կործանեալ՝ զճայն դարձի հնչեցին¹⁵⁷: Եւ յետս դարձեալ՝ ձմեռեցին ի Մուղան:

Վալին, ժողովեալ զմնացեալ ազգականս և զթոռունս իւր ի միասին ընդ թաւատաց ի Դուշլթ գաւառակին, այսպէս խորհուրդ արար, թէ.

«Աւուրք կենաց իմոց ի վախճան հասեալ են և բաժակ կենդանութեան իմոց լցեալ՝ մերձ է ի հեղուլ, յետ այսր ո՛չ վայել է ինձ նստել յանկիւնս իշխանութեան Աղայ Մհամմատ շահին, իբրև պատանդ հնազանդ լեալ նմա՝ ձայնի հրամանաց նորա լսել: Ուստի առ յարմարելոյ բերմանց ժամանակին արժան է զմին յազգականաց իմոց ընդ ձեզ առաքել առ ոտս Աղայ Մհամմատ շահին ի պատանդ»:

Ի սմին միջոցի համբաւ (24ա) դարձի Աղայ Մհամմատ շահին եհաս առ վալին, որ փութացեալ զամենայն անցս և զորպիսութիւնս գրութեամբ յայտնեաց Ռուսաց մեծի կայսերութեան Եկատերինեայ:

¹⁵⁴ Խոսքը Կարակալխանի լեռների մասին է, որոնք գտնվում են Արագլի գետից հյուսիս-արևելք:

¹⁵⁵ Աղա Մուհամմադ խանի զորքերը Թիֆլիս են ներխուժել 1795 թ. սեպտեմբերի 12-ին:

¹⁵⁶ Այդ մասին Սերովյե Պատկանյանը գրում է. «Ձարքունականն պալատ, նախ՝ ունայնս ի գանձուց առնէին և ապա՝ հրով այրէին» (տես Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատենագիրք ԺԵ-ԺԹ դար, Թիֆլիս, 1912, էջ 368):

¹⁵⁷ Աղա Մուհամմադ խանը Թիֆլիսից հեռացել է 1795 թ. սեպտեմբերի 20-ին:

Կայսերուհին առ կարեկցութեան և օգնութեան հրամայեաց զգերաստիճան գեներալ օտ ինֆանդերիի գրաֆ Ջուբովին, զի զօրօք բազմօք և կարի պատրաստութեամբ հասցէ յօգնութիւն վալիին ընդդէմ Աղայ Մհամմատ շահն: Եւ նորին գերաստիճանութիւնն ընդ զօրաց իւրոց¹⁵⁸ հասեալ յանապատն Դարբանդու¹⁵⁹՝ եհար անդանօր զբանակն իւր, գերկիրսն յայսկոյս Կովկասու եղեալս մինչ ի սահմանս Ղարապաղու նուաճեաց ընդ իշխանութեամբ իւրով, յաղթեալ ամենայն ընդդիմակակից քաջամարտ զօրօքն իւրովք՝ ձմեռեցաւ ի Սալիեան:

Ի հասանելն այսր համբաւոյ յականջս Իբրահիմ խանին՝ զորդին իւր՝ զԱբուլ Փաթիհ խանն, ի միասին ընդ զանազան ընծայից առաքեաց առ գերաստիճան գրաֆ Ջուբովին, և յայտնելով ևս ի կողմանէ իւրմէ օգոստափառ Տէրութեան Ռուսաց զներքին մտերիմ ծառայութիւն իւր և հպատակութիւն, գրեաց յանուն կայսերուհւոյն Եկատերինեայ զխնդիրս: Եւ զօրապետն գերաստիճան ընկալեալ զԱբուլ Փաթիհ խանն մեծաւ յարգանօք և ի կարի պատուով, հարկաւորեալ մեծարանաց արժանացոյց զնա և զխնդիր հօր սորա՝ Իբրահիմ խանին առաքեաց ընդ ճանապարհն Դարբանդու և Ղզլարու առ նորին մեծութիւնն կայսերուհւոյն Եկատերինեայ: Որ նոյնպէս ի յարգանս ընկալեալ զխնդիր նորա՝ ի ձեռն միոյ ի կենեզայ առաքեաց վասն Իբրահիմ խանին զպարգևս և զբազում ընծայս, և նա մեծի ողորմութեան (24ր) ի կողմանէ իւրմէ և կարի մարդասիրութեան արքայավայել ապաւինութեան ակնկալ արար: Եւ զմի գաւազան, զարդարեալ յակու[ն]սն պատուականս և ի մարդարիտս մեծագինս, առաքեաց խնունդ Մօլլայ Փանահայ Վաղրֆ անուանելոյն:

¹⁵⁸ Գեներալ Վ. Ջուբովի զորքը բաղկացած էր 12.323 զինվորից, որից 6.190-ը՝ հետևակ (տե՛ս Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. III, СПб., 1886, с. 93):

¹⁵⁹ Դերբենդի բանակիները գեներալ Վ. Ջուբովին եմ համընկել 1796 թ. մայիսի 10-ին (տե՛ս Дубровин Н., указ. соч., с. 115):

Իբրև լուան զայս բան շրջակայ խանք և զհնազանդութիւն Իբրահիմ խանին տէրութեան Ռուսաց՝ գրեալ զթուղթ, ի յայտ ածին յիշատակեալ խանին, թե.

«Որովհետև մեք ընդ հնազանդութեամբ Ձերով և ընդ ծառայութեամբ գտանիմք, ուստի ի հնազանդիլն Ձեր Տէրութեան Ռուսաց՝ մեք ևս ո՛չ ի բաց լինել ունիմք ի դոյնօրինակ հնազանդութենէ և երբեք մի՛ ելցէ ի մէնջ ձայն ինչ ընդդիմութեան և հակառակութեան. և խորհուրդ ինչ ընդդէմ Տէրութեան Ռուսաց ամենևիմք ո՛չ տեղի ունի ի միտս մեր»:

Իբրահիմ խանն զնամակսն այնց խանաց, այսինքն է՝ Միր Մուստաֆայ խանին թալիշու և միւս Մուստաֆայ խանին Շիրվանու, Ջաւատ խանին Գանձակայ ևս և կառավարացն Նախիջևանայ և Ղարապաղայ, և զխնդիրս նոցա առաջի արար զօրապետին: Վալին Վրաստանու ևս, թէև իբրև և զայլ խանս էր ի վաղուց տէր կարողութեան և հնագոյն իշխան քան զնոսա, բայց ըստ ամենայնի ի խորհուրդ ինչ զմեծամեծ իրողութեանց և զփոքունց առանց համաձայնութեան և հաւանութեան Իբրահիմ խանին ո՛չ մտանէր, վասն զի կառավարն Ավարու¹⁶⁰ և այլ մեծամեծք Տաղիստանայ վասն արենակցութեան և բարեկամութեան հնազանդեալ էին յիշեալ Իբրահիմ խանին:

Եւ եթէ ընդ մէջ յիշատակեալ խանին և (25ա) վալիին Վրաստանու թշնամութիւն ինչ և հակառակութիւն ի վեր երեւեալ լինէր, յայնժամ ըստ հրամանի խանին Ումմայ խանն ի միասին ընդ այլ խանացն Տաղիստանու հանդերձ զօրօք իւրեանց բազմօք յարձակեալ ի վերայ Վրաստանու՝ զաւարի հարկանէին: Որպէս ի 1199 ամի¹⁶¹ ի միջի վալիին և Իբրահիմ խանին խզեալ սիրոյ կապանաց՝ երևեցաւ խոռվութիւն ինչ: Վասն որոյ յիշատակեալ [խանն] հրամայեաց Ումմայ խանին, զի գնացեալ նորա ի Վրաստան՝ որչափ ինչ մարթ իցէ, գեր-

¹⁶⁰ Ձեռագրում Ավարու է, ինչը գրչական սխալ է:

¹⁶¹ Չիքրայի 1199 թ. համապատասխանում է 1784/1785 թ.: Չիշյալ արշավանքը տեղի է ունեցել 1785 թ.:

կիրն զայն զաւարի հարցէ և զբնակիչ ի գերութիւն վարեացէ: Ումմայ խանն պատրաստութեամբ մեծաւ և բազմաթիւ զօրօք փութանակի զնացեալ՝ էառ զԿուսուշխանայ¹⁶² (Ախտալայ) զամրոցն, և զոմանս ի բնակչաց այնր ի սուր սուսերի մաշեաց, զբազումս ի գերի վարեաց, և ի շրջակայ սահմանաց աւարս բազումս արարեալ՝ դարձան յերկիրն Ախլցխու առ Սուլէյման փաշայն, ուրանօր և ձմեռեցաւ: Այլ ի դառնալն չև հասեալ յԱխալց(խ)եայ՝ մուտ գործեաց յերկիրն Վրաստանու և զբերդըն Դուխանայ¹⁶³, որ ընդ մէջ ճանապարհին և յանցս զօրաց ուրանօր կնեազ Աբաշիր¹⁶⁴ հանդերձ բոլոր գերդաստանաւն իւրով և ընտանեօք բնակեալ էր, և էր տեղի ինչ ընտիր ամրապինտ և անմատոյց պաշարեաց, և զկնի նուաճելոյ զայն ընդ իշխանութեամբ՝ զոմանս ի բնակչաց այնր ճարակ սրոյ ետ, զոմանս պնտեաց ի կապանս գերութեան, և զմին ի դստերաց¹⁶⁵ յիշեալ կնեազին ընդ այլ բազմապիսի ընծայից առաքեաց Իբրահիմ խանայ և զոմն ի դստերաց նորա էառ Ումմայ խանն ինքեան կնութեան:

Իբրահիմ խանն այսպիսի պատուով և բարձրութեամբ հրամանատու էր խանացն Շաքւոյ, Շիրուանայ, (25թ) Գանձակայ, Ղարաաղայ, Իրանայ, Խոյայ, Թալիշու, Նախիջևանայ, Դաւրէթայ, Շահսէփանայ և խանն Շաղաղիու¹⁶⁶: Իսկ վալին Տփլիսայ առ զգուշութեան զյօդ բարեկամութեան վերստին

¹⁶² Գտնվում է Գաղպատի և Սանահինի մոտ ու տեղի հանքերի անուսով կոչվում է Գյումուշխանե, որը նշանակում է արծաթի հանք:

¹⁶³ Պետք է կարդալ Դուշեթ:

¹⁶⁴ Խոսքը իշխան Եվգենի Աբաշիձեի մասին է:

¹⁶⁵ Խոսքը իշխան Ե. Աբաշիձեի դուստր Ջավահիր խանուհի մասին է, որն, այդպիսով, դարձավ Իբրահիմ խանի հինգերորդ կինը (տե՛ս АКАК, т. II, Тифлис, 1868, д. 1415, с. 695):

¹⁶⁶ Շաղաղիների քրդական ցեղը, որը հիմնականում բնակվում էր Մուղանի ու Սարաթի միջև, երկար ժամանակ ապրելով շահսևան ցեղերի հարևանությամբ՝ ընդունել էր շիա մահմեդականություն և դարձել թուրքալեզու (տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 75):

կապեաց ընդ խանին ակամայ կամօք, և այսպէս կային նոքա ի հնազանդութիւն և ի հպատակ ծառայութիւն նորա:

Ըստ դիպուածոյ մահուան կայսերուհւոյն Ռուսաց¹⁶⁷, սահմանելոյ ի վերին դիպութենէ, ստացաւ յիշեալ գերաստիճան զօրապետն զհրաման դարձի ի հայրենիս իւր¹⁶⁸: Եւ սա ի կատարումն հրամանի առեալ զբազմաթիւ զօրս իւր՝ վերադարձաւ:

Իբրահիմ խանն յետ լսելոյ զհամբաւս զայս յայտնեաց վալիին Վրաստանու, թէ.

«Ես ի միասին ընդ յաղթող զօրացն Ղարաաղաղու և Տաղիստանայ ելանեմ, ահա՛, ի կողմն Գանձակայ: Դուք ևս ընդ բազմաթիւ զօրաց ի Վրաստանայ փութացարո՛ւք ընդ կողմն ընդ այն յընկերիլ ինձ և ի միասին նուաճեսցուք զԳանձակ ընդ իշխանութեամբ մերով՝ տալով նոցա վասն խարդախութեան վարուց նոցա զարժանին զպատիժ, վասնզի երբեմն լեալ էր Ջաւատ խանն Գանձակայ պատճառ կործանման և աւերման Տփլիսայ և յուզող խռովութեանն ննջելոյ»:

Վալին, ժողովեալ զբազմաթիւ զօրս մեծաւ պատրաստութեամբ հանդերձ, եկն և պաշարեալ զԳանձակ՝ էառ ընդ իշխանութեամբ: Մելիք-Մէջլումն ի նմին պատերազմի սպանաւ¹⁶⁹: Ջաւատ խանն հնազանդեալ հպատակեցաւ՝ յանձն առնելով զանփոփոխ ծառայութիւն և զյօժարամիտ հպատակութիւն:

Վալին զկնի աւերմանցն Աղայ Մհամմատ շահին ո՛չ ևս եմուտ ի Տփլիս, այլ բնակելով ի Կախլթ յետ երկուց ամաց

¹⁶⁷ Կայսրուհի Եկատերինա II-ը վախճանվել է 1796 թ. նոյեմբերի 6-ին:

¹⁶⁸ Եկատերինա II-ին հաջորդած Պավել I-ը հետ կանչեց ռուսական զորքերը Անդրկովկասից:

¹⁶⁹ Մելիք-Մեջլումը սպանվել է 1796 թ. (այդ մասին տե՛ս «Մեղու Գայաստանի», Տփլիս, 1863, N 16, էջ 160, Գայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 225):

վախճանեցաւ¹⁷⁰՝ փոխարկեալ զաթոռ (26ա) արքայութեան ի տապան գերեզմանի:

Ձմեծ որդին իւր՝ զԳէօրկէն խանն, որ էր ժառանգ վալիին էօծ յարքայ, այլ եղբարք նորա, որք են՝ Իլիւն խան, Փարնուազ խանն, Աղեքսանդր միրզայն, ո՛չ հաճոյ գտան ընդ այս հրաման, վասնզի տքա ծնեալ էին ի միոյ կնոջէ, բայց Գիւրկէն խանն՝ յայլմէ կնոջէ¹⁷¹: Իւրաքանչիւր ոք ի միոյ կողմանէ ապստամբեալ՝ սկիզբն արարին պատերազմաց ընդդէմ յիշեալ վալիին, յորոց Իսկեանդար (Աղեքսանդր) միրզայն տիրապետեալ Ղազախ, Բօջչալու և Շամշատին գաւառակաց՝ ո՛չ հնազանդէր Գիւրկին խանին:

Եւ Գիւրկին խանն, որ էր նոր վալին, առ անճարութեան արձակեալ յարանց իւրոց, և զոռճիկս բազումս եբեր ինքեան օգնական զգորս ի Տաղիստանայ և օգնութեամբ նոցա, որպէս և ժողովրդեանն Կախիթու և ոմանց ի վրաց անտի, եկեալ՝ էանց ընդ ղշլաղն Քեասաման և եմուտ ի սահմանս Ղազախու: Աղեքսանդր միրզայն, տեսեալ զտկարութիւն իւր, յանճարութենէ ի փախուստ անկեալ՝ եկն յերկիրն Ղարապաղու¹⁷²:

Վալին ի բնակչաց Ղազախայ և Բօջչալուք զքանի մի խոռվայոյզ արս և չարաբարոյս պատժեալ՝ ետ ապա հրաման զօրացն իւրոց գերկիրն Ղարսայ յաւար հարկանել, զգաւառակսն այնր երկրի որչափ ինչ մարթ լիցի կոխան առնել հեծելագօրաց, ուստի քաջամարտ զօրքն ըստ հրամանի վալիին՝ աւարեալ եկին առ վալին, և վալին անդրէն յետս դարձեալ՝ եմուտ ի Տփլիս:

¹⁷⁰ Չերակլ II-ը վախճանվել է 1798 թ. հունվարի 11-ին Թելավում (տե՛ս Дубровин Н., Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, СПб., 1897, с. 1):

¹⁷¹ Վրաց վերջին արքա Գեորգի XII-ը ծնվել էր Չերակլ II-ի առաջին կնոջից, իսկ արքայազներ Յուլոնը, Ալեքսանդրը և Փառնավազը ծնվել էին Չերակլի երկրորդ կնոջից՝ Դարեջան Դադիանիից (տե՛ս АКАК, т. I, Тифлис, 1866, д. 161, с. 199):

¹⁷² Վրաց արքայազն Ալեքսանդրը Ղարաբաղ է եկել 1801 թ. մարտի սկզբին (տե՛ս АКАК, т. I, д. 320, с. 284-285):

Որովհետև Աղեքսանդր միրզայն փախեան ի Ղարապաղ, միւս արքայազոււնք վրաց ևս զպահպանութեան անձանց իւրեանց եթ հոգային:

(26բ) ՅԱՂԱԳՍ ԿՐԿՆԱԿԻ ԳԱԼՍՏԵԱՆ
ԱՂԱՅ ՄՀԱՄՄԱՏ ՇԱՀԻՆ Ի ՎԵՐԱՅ ՂԱՐԱՊԱՂԱՅ,
ԵՒ ԳՆԱԼՈՅ ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԻՆ Ի ԲԱԼԱՔԵԱՆ

Իբրև լուաւ Աղայ Մհամմատ շահն զդարձ զօրապետին ոռուսաց և զօրաց նոցա, կրկնակի խորհեցաւ առնուլ զՂարապաղ, վասն որոյ ի ժամանակի գարնան անհամար զօրք գողցես ի համար աստեղաց երկնից և կաթեաց անձրևաց, ի կողմն Ատրապատականին յուղի անկաւ: Եւ զի յընթացս երից ամաց դիպեալ էր կարի յոյժ պակասութիւն բերմանց երկրի ի Ղարապաղ, ուստի, ի հասանելն զօրաց պարսից ընդ Աղայ Մհամմատ շահին յեզր Երասխ գետոյն, Իբրահիմ խանն, որ գիտեր անհնար գոլ այնուհետև բնակելոյ ի բերդն Շուշի և ընդդիմանալոյ այնպիսի զօրաւոր թշնամւոյն, առեալ զբոլոր գերդաստան իւր ընդ այլ ամենայն ազգականաց իւրոց, եղբարց և ընդ ոմանց ի մտերիմ բեկաց գերդաստանօք իւրեանց հանդերձ չոգան ի Ջարու Թալայ: Եւ նասիր խանն՝ փեսայն նորա, Շահսեան Աթայ-խանն և Սիւլէյման խանն Շաքուեցի, որք նոյնպէս փեսայ նորա էին, ընդ այլ հուչակաւոր և ծանօթագոյն բեկաց Ղարապաղու, ճանապարհորդակից եղեն յիշեալ խանին:

Աղայ Մհամմատ շահն յեզր գետոյն Երասխայ լուեալ զայս դիպուած՝ ի թիկունս նոցա առաքեաց զգորս, զի թէ հնար լիցի կալցին զնա բոլոր գերդաստանօք և հպատակօք նմին հանդերձ: Որոց հասեալ ի (27ա) մերձակայ կամրջի Թարթար գետոյն՝ յարդարեցին յերկուց կողմանց զգոռ պատերազմ, և յայնժամ պարսիկք, բացի կրեալ վնասուց, ոչինչ ո՛չ տարան ընդ ինքեանս: Իբրահիմ խանն ընդ այլ հպատակաց և ընդ ընկերաց, անցեալ ընդ գետն Կուր առանց իրիք վնասու, եմուտ ի

Ջարու Թալայ և ի Բալաքեան: Այլ զճանապարհացն ոմանք ի լեզկաց ըստ հրամանի Աղայ Մհամմատ շահին ելեալ ընդ առաջ Իբրահիմ խանին ջան եղին ունել զնա և ածել առ Մհամմատ շահն: Մերձ էր ի պատահիլ պատերազմի, բայց կինն Իբրահիմ խանին՝ Բիքայ աղայն, որ էր քոյր իշխանին Ավարու Ումմայ խանին, քարոզիւք և խրատուք արգելոյր զնոսա մինչև ցայն, երբ Մհամմատ Թաֆի բէկն Ղարապաղու զհամբաւ սպանման Աղայ Մհամմատ շահին հասոյց յիշեալ գերաստիճան խանին ի Բալաքեան՝ հանդերձ գլխովն շահին:

Աղայ Մհամմատ շահն, մտեալ ի Շուշի քաղաք, տարածեաց զնեղութեան զձեռն իւր ի չարչարել զբնակիչսն և որպէս զքարբ խածանէր զմեղաւորս և զանմեղս, և զբազումս ի մեծամեծաց, ի ծանօթից, ի բէկաց և յաղալարաց կալեալ՝ եղ ի բանտի, ամբարձ զձեռն իւր չարչարանաց և նեղութեան և յիւրաքանչիւր ի կողմն երկրիս: (27բ) Եւ յետ ընթացից միոյ շաբաթու ի միում գիշերի ցասուցեալ բարկութեամբ վասն սակաւ իմն սխալանաց ի վերայ Սաֆար Ալի բէկին և Աբաս բէկին, որք առ նմա էին ի թիւս արանց հաւատարմաց և խորհրդակից իսկ նորա, ասէ ցնոսա.

«Ի վաղիւ ընդ առաւօտն ի ծագել արեգական զլոյս իւր յերկիր զգլուխս ձեր անջատեցից ի մարմնոյ ձերմէ, և ի գլխոց բնակչաց երկրիս Ղարապաղու արարեալ զբուրգ ինչ բարձրաբերձ՝ ի գագաթ այն դնել ունիմ զգլուխս ձեր և վարդագոյն արեամբ ձերով զղաշտն Ղարապաղ (սեաւ այգի) արարից վարդարան իմն»:

Եւ վասնզի նոքա գիտէին ստուգիւ, զի բանս Աղայ Մհամմատ շահին չէր ինչ փոփոխութիւն, և ջերմագին բանք միջնորդաց և բարեխօսաց ո՛չ ունիցին այնուհետև զներգործութիւն ինչ ի ցրտասառոյց երկաթ սրտի նորա, ուստի յանճարութենէ խորհուրդ ի մէջ առին, զի ի նմին գիշերի զգործ սպանման նորա ի գլուխ տարցին: Եւ ի ժամուն, որ մերձ էր յառաւօտն, յորում ժամու և Աղայ Մհամմատ շահն խորդայր ի

խորին քուն, մուտ յառանձնոցն նորա գործեալ և ի սուր երկսայրի զմարմին նորա ծակոտեալ՝ խոցոտեցին¹⁷³, և արարին զայն որպէս զրահն Դաւթի (նկարէն)¹⁷⁴, զգլուխ նորա ի մարմնոյ ի բաց բարձին, և առեալ զբազպանն (բաղբանտ), զթագն և զմարգարտեայ հմայեակն (հմայիլ), զինքեանս առ Սատղ խանն Շաղաղի հասուցին¹⁷⁵ և զղիպուածն ի յայտ ածին:

Սատղ խանն բանից այսոց ոչ հաւատայր, վասնզի ի կողմանէ շահին զմիամտեալ՝ հանապազ երկնչէր ի նմանէ, և զբանս այսոց նենգութիւն շահին համարեալ՝ (28ա) կարծէր լինել ի շահէն: Ի վերջոյ կարի ծանր ծանր երդմամբ հաւատացուցին զՍատղ խանն բանից իւրեանց, բայց կարի ահիւ և դողութեամբ և յերկիւղ մեծագին, ի պալատ որդւոյ Իբրահիմ խանին՝ Մհամմատ Հիւսէին աղայի, յորում բնակէր Աղայ Մհամմատ շահն, մուտ գործեցին, յորոց Սաֆար Ալի բէկն զառաջինն եմուտ յառանձնոցն և կալեալ ի միոյ կողմանէ մահճի, ընդ որով կայր մարմին շահին, ի վեր բարձրացոյց զայն և կրկնակի զսուրն երկսայրի մխեաց ի սիրտ նորա: Սատղ բէկին հայեցեալ ընդ այս զղիպուած՝ ուշաթափ լինէր և զնոյն զայն զբազպանն, զթագն և զհմայեակն առեալ՝ դարձաւ ի տեղի իւր, և զգօրսն Շաղաղու ժողովեալ ի չուելն ի բերդէն, թէ՛

¹⁷³ Ըստ ավանդության՝ մահից առաջ շահն արտասանել է հետևյալ խոսքերը. «Թշառական, դու սպանեցիր Իրանը» (տե՛ս «Տարագ», 1890, թիւ 10, էջ 142): Ռ. Տիտանյանի կազմած «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին» գրքում այս «պատմական անցքը» ներկայացված է որպես անանուհի հեղինակի ստեղծագործություն (էջ 195), սակայն սույն գործի ռուսերեն բնագրից պարզվում է, որ դրա հեղինակը Գ. Ստենբոկն է (տե՛ս Стенбок Гр., Ага-Мухаммед-шах в Шуше, «Зурна», закавказский альманах, издание С. Вердеревского, Тифлис, 1855, с. 266):

¹⁷⁴ Ըստ Հին Կտակարանի մի ավանդության՝ Դավիթ թագավորի գրաիւր մարտերից մեկում պատառ-պատառ է լինում:

¹⁷⁵ Ենթադրաբար Սատղի խանը Աղա Մուհամմադ շահի դեմ կազմակերպված դավադրության ղեկավարն էր (տե՛ս Դիւան հայոց պատմութեան, գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893, էջ 32-33, գիրք Ժ, Մանր մատենագիրք, Թիֆլիս, 1912, էջ 448, Ахмед-бек Джаваншир, указ. соч., с. 82-85):

շահն առաքէ զիս զկնի Իբրահիմ խանին, և ի սպանողացն շահին զԱբրաս բէկն տարաւ ընդ ինքեան, իսկ Սաֆար Ալի բէկն մնաց ի բերդի անդ:

Ձկնի ելից Սատղ խանին ի բերդէն յընթացս երկուց ժամուց համբաւ սպանման շահին հռչակք հարաւ: Խանք պարսից, ի լսելն զգրպուածս զայս, յերկիւղէ այսր շփոթեալ՝ իւրաքանչիւր ոք ի նոցանէ ընդ ընկերաց իւրեանց և ծառայից առանձին առանձին դասուք ի փախուստ փութացան:

Բնակիչքն քաղաքին մեծաւ փութաջանութեամբ և սաստիկ յարձակմամբ մտեալ ի պալատ շահին՝ յափշտակեցին զզինչս զօրացն պարսից ի ձեռս բնակչաց անկելոցն: Եւ ի յաւարելն զամենայն զգարդս թագաւորութեան՝ զոսկիս, զարծաթս և զմարգարիտս պատուականս, եղբօր որդին Իբրահիմ խանին՝ Մհամմատ բէկն, մտեալ ի պալատն՝ մնացեալ զանձուց անդրէն (28թ) տիրեաց, զանօթս և զգարդս զամենայն ընդ ոսկւոյ, արծաթոյ և այլ մեծագին մարգարտաց առեալ ընդ իշխանութեամբ՝ հրամայեաց տանել զայնս ի տուն իւր, և նուաճեալ զիշխանութիւն թագաւորութեան տիրապետեաց գոյից տէրութեան՝ առաքեալ զգլուխն Աղայ Մհամմատ շահին ի ձեռն Մհամմատ Թաֆի բէկին ի Բալաքեան առ Իբրահիմ խանն:

Իբրահիմ խանն, յորժամ միամտեցաւ ի յաղմկէ շփոթութեանց Աղայ Մհամմատ շահին, զգլուխն ուրախութեամբ և զուարճութեամբ առաքեաց վալիին Վրաստանու: Յետ քանի մի աւուրց զհարազատ որդին իւր զժառանգն իշխանութեան՝ զՄեհտի-Ղուլի աղայն, առաքեաց ի Ղարապաղ առ ի տալ զանդորութիւն սրտից բնակչաց քաղաքին և զհանգիստ: Եւ զկնի նորա զՄհամմատ Հասան աղայն, որ էր աւագ որդի իւր, յուղարկեաց ի կողմն Ղարապաղու¹⁷⁶: Եւ Իբրահիմ խանն,

¹⁷⁶ Այս նախադասութեանը հաջորդում է «Стр Уоллэ Фамсак, որ Վաղֆ (գիտնական) անուանիր, և էր հայրենեօքն ի Ղազախու գաւառէն, գրեաց առ մօլլայ Վալի Վտատին առ սիրոյ և բարեկամութեան եղելոյ ի միջի նոցա, զայս զուար-

զկնի անցանելոյ սակաւ ժամանակի, եկն ի Ղարապաղ և ըստ աւագնոյն նիստ առ յաթոռ իշխանութեան իւրոյ:

Ձթիւ սպանման Աղայ Մհամմատ շահին ոմանք ասեն զոյ ի 1212, իսկ այլք ի 1211 ամի¹⁷⁷, բայց ճշմարիտ երևի վերջինն:

(29ա) ՅԱՂԱԳՍ ԿՐԿՆԱԿԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՋՕՐԱՑՆ ՌՈՒՍԱՑ ՅԱՅՍԿՈՅՍ ԿՈՎԿԱՍՈՒ

Իբրև Գիւրկին խանն նստաւ յաթոռ արքայութեանն վալիութեան, և ի տէրութեան Իրանայ զկնի մահուան Աղայ Մհամմատ շահին Փաթալի շահն Ղաճար¹⁷⁸ ի տեղի նորա նըստաւ յաթոռ թագաւորութեան:

Վալին ի կողմանէ Յունաց (Օսմանեան), Իրանայ, Տաղիստանայ, ի վերայ այսր ամենայնի նակ ի թշնամեաց եղբարցն ո՛չ սակաւս երկնչէր: Ուստի զմեծ որդին իւր՝ զԴաւիթ Միրզայն, ի միասին ընդ պաղատախառն և աղերսալի խնդրանաց առաքեալ առ Նորին Կայսերական Մեծութիւնն ամենողորմած արքայն Ռուսաց Պօղոսն Պետրոսեան՝ յայտնեաց նմա, թէ.

«Ի միջի այսչափ այլազգեաց ես միայն կամ և յիւրաքանչիւրում ժամու ի պահպանութիւն զգուշութեան խոնճեալ եմ: Եւ զանցս կենաց մերոց և զհանգամանք գիտեն և մեծամեծք Տէրութեան Ձերոյ: Այլ և նեղութիւնք, անիրաւութիւնք և ոճիրք չարութեան արարեալն յԱղայ Մհամմատ շահէ առ մեզ յայտ իսկ են, զորս անմարթ է լեզու ի ճարտարաբան գրչի ի

ճախօս չափաբանութիւն» նախադասութիւնը, որն ակնհայտորեն իր տեղում չէ: Խոսքը բանաստեղծ Վազիֆի (1717–1797)՝ Վիդադիին ուղղված երգիծական բանաստեղծութեան մասին է (տե՛ս История Азербайджана, т. I, Баку, 1958, с. 388):
¹⁷⁷ Հիջրայի 1211 թ. համապատասխանում է 1796 թ., իսկ հիջրայի 1212 թիվը՝ 1797 թ.: Իրականում Աղա Մուհամմադ շահը սպանվել է 1797 թ. հունիսի 6-ին (տե՛ս Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, док. № 321, с. 461):

¹⁷⁸ Աղա Մուհամմադ շահի սպանութիւնից հետո գահ բարձրացավ նրա եղբորորդի Բաբախանը, որը Ֆաթալի շահ անվամբ 1797–1834 թթ. գահակալեց Իրանում:

յայտ և ճառել զայնս, վասն որոյ խնդրեմ ամենախոնարհաբար ի Կայսերական Մեծութենէ Ձերմէ անպիղծ պահպանելոյ զպատիւ ազգի և պաշտպանելոյ կանոնաց դաւանութեան և օրինաց՝ տալ ինձ զօգնութիւն, և զի ի ձեռն քաջայաղթ (29բ) դրոշակաց Ձերոց ի բաց փարատեսցուք զխաւար նեղութեան և չարչարանաց անօրէն թշնամեացն»:

Ուստի զՅարսուան բէկն, որ էր ի հնագոյն ազնուաց և այր ընտիր, և յարժանաւատ թաւատացն Վրաստանու և կնեազ Ջաբջարազէ¹⁷⁹ տոհմ անուանեալ, յորմէ և ի վաղուց ծանօթ էր պալատականաց Նորին Կայսերական Մեծութեան, զկնի Դաւիթ Միրզային առաքեաց առ կայսրն:

Եւ Նորին Մեծութիւն ամենողորմ կայսերն ի ծովածաւալ ողորմութենէն և յառիւծական հոգւոյն շարժեալ՝ զգեներալ Լազարովն միով գնդով զօրաց հանդերձ առաքեաց, զի պահպանութեամբ սահմանացն Վրաստանու ցուցցին անդանօր զպարտուպատշաճն փութաշանութիւն, և շտատսկիյ սովէտնիկ Կուալանկին¹⁸⁰՝ այր հաւատարմագոյն, նշանակեաց մնալ ի Վրաստան առ վալիին: Յիշատակեալ անձինք մտեալ ի Տրփիս կացին առ վալիին¹⁸¹:

Եւ յետ անցանելոյ միոյ ամի Ումմայ խանն առեալ զքսան հազար զօրս ի Տաղիստանայ՝ եկն, թէ.

«Որովհետեւ առեալ ես դու զզօրս ոռուսաց քեզ յապաւէն և զանսուտ սէրն վաղեմի ի բաց բարձեր ի սրտէդ, ուստի և ես գնացեալ զռուսսն յայնմ երկրէ արտաքսելով՝ զՏփիսիսն ի միասին ընդ սահմանացն աւերեցից և ամայացուցից»:

Ի հասանիլ ձայնի այսր համբաւոյ յականջս վալիին՝ ո՛չ սակաւս շուարեալ շփոթեցաւ, և ի ներքուստ զգանազան չար

¹⁷⁹ Խոսքը Գարսևան ճավճավածի մասին է, որը 1784–1802 թթ. եղել է Վրաստանի ներկայացուցիչը ռուսական արքունիքում:

¹⁸⁰ Խոսքը Վրաստանում Ռուսաստանի նախարար Պ. Կովալենսկու մասին է:

¹⁸¹ Վրաստանում Ռուսաստանի նախարար Պ. Կովալենսկին Թիֆլիս է հասել 1799 թ. նոյեմբերի 8-ին, իսկ գեներալ-մայոր Լազարևի գլխավորած ռուսական զորագունդը՝ 1799 թ. նոյեմբերի 26-ին (տե՛ս ԱԿԱԿ, տ. I, գ. II, ձ. 6, c. 98):

խորհուրդ խորհեցաւ, վասնզի ահաբեկ լեալ էր յերկիւղէ անտի, մնացելոյ ի Մհամմատ շահէն, որ քաղաքն (30ա) Տփիսիս աւերեալ էր, և ի յիշատակէ և [դ]առնադէտ դիպուածոյն զդոզանի հարկանէր: Բնակիչք Տփիսիսայ խորհուրդ ի մէջ առին ի փախուստ անկանել: Յորոց իւրաքանչիւր ոք զպահպանութենէ անձին և եթ հոգայր և կամէր ելանել յայլ տեղի:

Յիշատակեալ գեներալն թէ և գործեաց զանչափ զփոյթ և եցոյց զկարի ջանս, զի մի՛ թողեալ զՏփիսիս՝ ի բաց լինիցին ի հայրենեաց, բայց սակայն բնակիչք Տփիսիսայ փակեալ զլսելիս անկանջաց անհոգութեամբ՝ ո՛չ անսացին նմա, զի չէր երբէք տեսեալ նոցա մինչ ցայնժամ գործունէյութիւն զօրացն ոռուսաց և ո՛չ ի տեղւոյ իմիք փորձեալ զնոսա: Գեներալն ի միտ առեալ գիտաց, զի խրատք նորա ի սիրտս բնակչացն Տփիսիսայ չունին զներգործութիւն և կաթիլ անձրեաց խորհրդոց նորա ո՛չ թափանցանեն ընդ քարանցեալ սիրտս այնր ժողովրդեան: Նմին իրի յայտնապէս ծանոյց բնակչացն Վրաստանու, թէ.

«Դուք մի՛ ի փախուստ անկանիք ի քաղաքէն և ընդ վայր մի՛ թողուք զհայրենիս: Ես հանդերձ զօրօքն ոռուսաց ջան եղեալ ընդառաջ ելից այնր ազգի և եթէ յաղթեցից նոցա՝ յոյժ բարւոք, իսկ եթէ յաղթեցայց յերեսաց նոցա և ի փախուստ դարձայց, յայնժամ դուք և ի փախուստ փութասջիք իւրաքանչիւր ոք ի ձէնջ յայլեայլ տեղիս»:

Բնակիչք Վրաստանու, լուեալ զայս, հանգեան ի վրդովեալ սրտից իւրեանց՝ տալով անձանց զանդորրութիւն և սփոփանս: Ուստի դեներալն, ժողովեալ զզօրս իւր զյաղթող, ել ընդառաջ (30բ) Ումմայ խանին: Ի ներքոյ Սաղարաջու գեղջ և ի վերայ Կբրայ գետոյն¹⁸² մերձ ի յերեկոյ յարդարեցաւ ընդ մէջ արիւնարբու զօրացն պատերազմն ամենասաստիկ¹⁸³:

¹⁸² Խոսքը Իորի (Ղըբըր) գետի մասին է:

¹⁸³ Օմար խանի գլխավորած Դաղստանի զորքի և ռուս-վրացական միացյալ ուժերի միջև ճակատամարտը տեղի է ունեցել 1800 թ. նոյեմբերի 7-ին, Իորի գետի ափին գտնվող Կակաբետ գյուղի մոտ: Լեզգիներն այդ մարտում կորցրել են ավելի քան 1500 հոգու (տե՛ս ԱԿԱԿ, տ. I, ձ. 109, c. 168; ձ. 111, c. 170-175):

Զօրացն Տաղիստանայ, Հայեցեալ ընդ զօրս ոռուսաց, տեսին զնա գոլ գունդ փոքր, յորմէ և զարմանք կալաւ զնոսա, թէ՛ զիա՞րդ նոքա այսպիսի սակաւութեամբ ի պատերազմն համարձակին, շրջին նուրբ (տկար) ստիւք ընդ դժուարաշրջիկ անապատն տէրութեանս: Եւ ի նմին իսկ յայնմ տեղուջ հարին երկոքին կողմանքն զբանակս մնալ անդանօր: Ոմանք ի մեծամեծաց լեզկաց խորհուրդ արարին.

«Այն է արժան, զի այժմ ելցուք ի պատերազմն և զհանդէս մարտի յարդարեսցուք, և ի ձայն հրացանից և թնդանօթաց արկցուք զաղաղակ շփոթի (ի սեղան) յերեսս երկրի, և զօրութիւն ահեղ ներգործութեան սուսերաց մերոց ցուցցուք այսց մերոց անձնապարծ թշնամեաց՝ տալով զնոսա զամենեսին ճարակ այնց արիւնարբու սուսերաց մերոց յիսպառ ապականութիւն նոցա, զկորուստ յաւիտենական»:

Վասն որոյ Աղա Փանիւն¹⁸⁴ զօրացն ետ հրաման, զի պատեալ շուրջանակի զբանակաւն ղենարալին՝ առցեն զշրջակայ անցս նորին և զնոսա որպէս զմատանի արկցեն յանձուկս պաշարման, և զամենեսին զնոսա կալեալ՝ կենդանոյն իբր զգերիս բերցեն առ ինքն: Զօրք Տաղիստանայ, ըստ հրամանի հրամանատուաց իւրեանց, ջան եղին, և իբրև հասին ի չորս կոյս ոռուսաց, ղեներալն ի նմին իսկ յայնմ ժամու կարի քաջութեամբ (31ա) հրամայեաց, զի այնպաղ պատրաստեսցեն զահեղասաստ և զչանթառաք թնդանօթան, և քաջագործք զինուորք «ուրա՞» գոչեսցին՝ յարձակեալ իւրեանց ի վերայ նոցա:

Զօրք Տաղիստանայ Հայեցեալ՝ տեսին, զի թնդանօթք նոցա զերկիր կացուցանել ունին որպէս զծով հրոյ, և գունդք ոռուսաց զժողովս նոցա հալածական արասցեն՝ ցան և ցիր ցրուեալ զնոսա: Ուստի ո՛չ կարացեալ ընդդէմ նոցա կալ, թողլով զպատերազմն՝ ի փախուստ փութացան, և ի ձեռս ոռուսաց անկաւ յ[ը]նչից նոցա, ի զինուց, ի կենդանեաց և յայլոց բազ-

մաց իրաց անթիւ և անհամար: Իսկ մնացեալք փախուցեալ խառնեցան ընդ իւրեանց զօրաց՝ յայտնելով նոցա զհանգամանս անցիցն: Եւ նոքա լուեալ զայս համբաւ՝ զահի հարեալ ասէին ընդ միմեանս.

«Մեզ ևս առ զարկանելոյ զանձինս ընդ ամօթով՝ հարկ է յանձին ունել և մի՛ դանդաղիլ ի քաջութիւն սրտի և ի պատրաստութիւն պատերազմի»:

Ղեներալն ի սմին միջոցի հրամայեաց հարկանել զթրմբուկսն ի նշան դադարելոյ, և ապա առեալ զյաղթող զօրս իւր՝ հասոյց զինքն յամրոցս նոցա և քաջասիրտ յարձակմունս և յաներկիւղ սպառնալիս զժողովս նոցա ցրուեաց:

Ումայ խանն թէև ընդ այլ մեծամեծաց իւրոց եցոյց անդանօր զփութաջանութիւն և զժրութիւն, զի գոնէ կարացէ նենգութեամբ զայնոսիկ զիւր վայրենաբարոյ քաջացուցանել (Չուրաթլու անել), զի ի վախճանի սրտապինդ լիցին ի կատարումն հրամանի իւրոյ, սակայն ոչ ի գլուխ (31բ) տարաւ զայն, զի յառաջին ահեղ յարձակմանէ զօրացն ոռուսաց երկուցեալ էին:

Եւ իբրև սկսաւ օրն տարածամել, լեզկիք ի փախուստ փութացան, և մինչ ի սահմանս Գանձակայ ոչ ուրեք առեալ հանգիստ՝ զնացին որպէս զհողմն երազընթաց: Եւ կամք նոցա այն էր, զի անտի անցեալ՝ եկեսցին ի Ղարապաղ ձմերել անդանօր, իսկ ի ժամանակս գարնան ի Հայրենիս իւրեանց դարձցին, զի ի պատճառս ձիւնալից գոլոյ լերանց չէր մարթ ի նպատակ իւրեանց հասանիլ:

Բնակիչք Գանձակայ իրազեկ զայսմանէ լեալ՝ ի միասին ընդ ժողովոյ իւրեանց եկին և զոմանս ի մնացելոց նոցա անողորմաբար ընկերակից վաղեմի ընկերաց իւրեանց արարին՝ առաքելով զնոսա զկնի նոցա (իմա՝ վասն առաջին անկելոցն ի պատերազմին)¹⁸⁵:

¹⁸⁴ Բնագրում այսպես է, սակայն խոսքը Օմար (Ումայ) խանի մասին է:

¹⁸⁵ Օմար խանի գորքի մնացորդների վրա գանձակեցիների հարձակման մասին տեսն AKAK, т. I, д. 127, с. 183: Այստեղ լեզգիները կորցրել են շուրջ 100 հոգու:

Լեզվիք ևս, ո՛չ ուրեք յապագեալ, կարի նեղութեամբք և չարչարանօք փախեան ի կողմն Ճառու, ուրանօր և ձմերեցի[ն]¹⁸⁶: Ումմա խանն անդանօր հիւանդացեալ՝ չուեաց յերկրէ ընդ անդարձ ճանապարհն¹⁸⁷, որոյ և զմարմին թաղեցին անդէն: Լեզվիք վասն մահուան նորա կրկինս, առաւել քան զառաջինն, սուգ առին՝ հարեալ զտրտմութիւն մեծ:

Յիշեալ ղեներալն ի նմին ժամու առաքեաց զարս ի Տրփխիս: Իբրև այս համբաւ ի Վրաստան եհաս, ո՛չ ոք հաւատայր, և թէպէտ զքանի մի գլուխս սպանելոց նոցա ևս առաքեալ էր ի Տփխիս, բայց և այնպէս չհաւատային: (Ի նմին իսկ յայնմ ժամանակի ի Տփխիս էի ես՝ շարազրոզս այս պատմութեան, (32ա), որ է զարապաղցի Միրզայ Ատիկեօզալ-բէկն):

Զկնի քանի մի աւուրց տէր ղեներալն մեծաւ պատուով և փառօք մուտ գործեաց ի Վրաստան: Եւ բնակիչք Տփխիսայ կատարեցին զհանդէս ուրախութեան և խնդութեան: Յայնմ ժամանակէ բնակչաց Վրաստանու և այլոց բազմաց քաջութիւն զօրացն ոռուսաց յայտնեցաւ առաւել քան զչափն, զի ի հազուագիւտ ղիպուածոց մին էր յաղթութիւնն այնչափ սակաւթիւ զօրօք այնչափ բազմութեան զօրաց թշնամեաց և ցանուցիր ցրուելն զնոսա: Յետ որոյ և պատիւ ղեներալին և քաջութիւնն զօրաց ոռուսաց հազարապատիկ քան զառաջինն զհռչակի հարաւ: Այսպիսի քաջագործութիւնք ղեներալին այս անկարօտ են գովասանութեան:

Յետ այսորիկ վալին ամ մի ևս կենդանի մնացեալ, յաւուրս ձմերան հիւանդացեալ՝ մեռաւ¹⁸⁸: Եղբարք նորա մեծաւ փութով ժողովեալ ի Քարթուլի գաւառէն զբազում զօրս և զժողովս՝ եկին ի վերայ Տփխիսայ, զի զմեծ եղբայրն իւրեանց,

զի լուան Միրզայն ջալի¹⁸⁹ կարգեսցին և իշխան ամենայնի¹⁹⁰: Եկեալ ի Հաբու հայ գիւղն, որ ի վեր քան զՏփխիս, անդանօր մնացին:

Ղեներալն ևս առեալ զյաղթող զօրս, եղեալս ընդ իշխանութեամբ իւրով, ել ընդառաջ նոցա և զնոսա մինչ ի Բաշաչղն հալածական արար և յետս դարձեալ՝ զմեծ որդին վալիի զԴաւիթ Միրզայն տեղապահ վալիութեան կարգեաց¹⁹¹ և մինչ ի ժամանակս գարնան այսպէս մնաց:

Եւ յայնմ գարնան ղեներալ օտ ինֆանտերիի էնվէն¹⁹², որ ի Լինիային բնակեալ էր, (32բ) որոյ և զաստիճանն ին[ս]քեկտօր առձայնէին, եկեալ ի Տփխիս՝ սկիզբն արար կարգելոյ զդատարան: Եւ զչորս անձինս ի թաւատազնէից ընտրեալ՝ նշանակեաց զնոսա դատաւոր¹⁹³, որոց և հրամայեաց նստել ի վերայ աթոռոյ դատաւորութեան, զի զհարկաւորեալ զգործս և զխնդիրս ըստ [հ]անձնարարութեան յիշեալ ղեներալին վճռեսցեն և տացեն զպարտուպատշաճն վախճան այնց, և ինքն յետս դարձաւ: Յընթացս միոյ ամի ըստ այսմ շարունակեցաւ և մնաց այնպէս:

¹⁸⁹ Պետք է կարդալ վալի:

¹⁹⁰ Այստեղ հեղինակը ցանկանում է ասել, որ Գեորգի XII-ի եղբայրները նրա մահից հետո ցանկանում էին վալի կարգել իրենց ավագ եղբորը: Յուլոն Միրզային:

¹⁹¹ Վրաստանում ոռուսական զորքերի հրամանատարը Պետերբուրգից նախօրոք ստացել էր գաղտնի կարգադրություն՝ Գեորգի XII-ի որդի արքայազն Դավիթի գահակալությունը թույլ չտալու վերաբերյալ (տես *Бердзенишвили Н., Джавахишвили И., Джанашиа С., История Грузии*, ч. I, Тбилиси, 1950, с. 448):

¹⁹² Խոսքը գեներալ Կ. Կնորինգի մասին է, որը Կովկասյան Գծից Թիֆլիս է եկել 1801 թ. մայիսի 24-ին (տես *ԱԿԱԿ*, տ. I, ճ. 536, с. 420):

¹⁹³ 1801 թ. հունիսին կազմվել է վրացական կառավարությունը, որի մեջ մտնում էին չորս մղիվանքեկեր՝ Չաալ Բարաթովը, Իոանն Չոլակաևը, Իգնատիոս Թումանովը և Սուլխան Թումանովը (տես *ԱԿԱԿ*, տ. I, ճ. 542, с. 425):

¹⁸⁶ Օմար խանի Ջառում ծննդն ու մասին տես *ԱԿԱԿ*, տ. I, ճ. 132, с. 187:

¹⁸⁷ Օմար խանը մահացել է 1801 թ. մարտի 10-ին, Բայլականում (տես *ԱԿԱԿ*, տ. I, ճ. 424, с. 332; *Дубровин Н.*, Георгий XII..., с. 157):

¹⁸⁸ Գեորգի XII-ը վախճանվել է 1800 թ. դեկտեմբերի 28-ին:

Յետ այնորիկ կենեազ Յիցիանովն¹⁹⁴, որ յայսկոյս կովկասու տէր և հրամանատու եղեալ¹⁹⁵ ընդ իւր բերելով զկանոնս կուբերնիայի ի Տփլիս, եբաց զկուբերնիայ և սկիզբն արար բանալ դատարանաց և դիւանատանց: Արքայազունք վրաց, որք բոլորեքեան էին յայնմ ժամանակի ի Տփլիս և ի Վրաստան, ընդ այս հրաման և կարգադրութիւն ոչ հաւանեալ՝ զվազեմի կարգադրութիւն և զկանոնս իւրեանց կամէին, յորմէ արարին զվատ խորհուրդս և զունայնաբանութիւն ի յայտ ամին:

Թէպէտ կենեազ Յիցիանովն բարեկամութեամբ զսրտառուչ խրատս մատոյց նոցա և կարգայր յականջս նոցա զբազմապիսի քարոզս վայելուչս՝ ի միասին ընդ այլ օգտաւէտ խրատուց, սակայն նոքա չընկալեալ զայն՝ ո՛չ յետս կացին ի վատթար խորհրդոց իւրեանց:

Վերջապէս հայեցեալ ընդ նոսա կենեազն ետես, (33ա) զի ո՛չ լինի հնար ընդունելոյ նոցա, և զկապ պնդութեան սրտից նոցա խրատուք, քարոզիւք ո՛չ կարէ բանալ, ուստի զամենեւին կալեալ՝ բռնութեամբ առաքեաց ի Ռուսաստան¹⁹⁶, ի թիւս որոց և կին վալիին՝ Դատափալ անուն, եցոյց զզանցնառնութիւն, գնալով ընդ ուղին հակառակութեան՝ ընթանայր թշնամութեամբ: Վասն որոյ կենեազ Յիցիանովն զղեներալ Լազրովն առաքեաց, զի գնացեալ առ նա՝ ի խրատս սրտառուչս և ի քարոզս մեղմալիս դարձուցէ զնա ի համաձայնութիւն ընդ այն հրաման:

Գնացեալ ղեներալի ըստ հրամանի կենեազին, թէև կարդաց յականջս նորա զքարոզս և զխրատս, այլ ոչ կարաց տալ

¹⁹⁴ Պավել Յիցիանովը (1754–1806) ռուսացած վրացի էր, սերուն էր Յիցիշվիլի իշխանական տնից: Նրա պապը՝ Պատա Յիցիշվիլիս, 1725 թ. Ռուսաստան էր տեղափոխվել Քարթլիի Վախթանգ VI թագավորի հետ:

¹⁹⁵ Իշխան Պ. Յիցիանովը Վրաստանի կառավարչապետ է նշանակվել 1802 թ. սեպտեմբերի 8-ին (տե՛ս ԱԿԱԿ, Կ. II, Ը. 1, Ը. 3):

¹⁹⁶ Վրաց արքայազներ Վախթանգը և Ղավիթը Պետերբուրգ են ուղարկվել 1803 թ. փետրվարի 19-ին (տե՛ս ԱԿԱԿ, Կ. II, Ը. 109, Ը. 65; Ը. 112, Ը. 69):

նմա ընդունել զայնս: Եւ յիշատակեալ կինն զաղաչանս ղեներալին չընկալեալ՝ մոռանալով ևս զբարեգործութիւնս արարեալս ի յիշատակեալ ղեներալին մասին ազատութեանն Վրաստանու, առեալ զերկսայրն՝ վիրաւորեաց զնա¹⁹⁷: Լուեալ կենեազ Յիցիանովին զհամբաւս զայս՝ հրամայեաց զնա ևս բռնութեամբ և չարչարանօք տանել¹⁹⁸: Եւ այսպէս, յազգականաց վալիին յայնմ երկրի ո՛չ ոք մնաց:

Որովհետև բնակիչք Վրաստանու բոլորովին հանգիստ եղեն և յամենայն կողմանց միամտութիւն եղև, յայնժամ լեզկիք ճառու և Բալաքանայ ըստ հին սովորութեան և վաղեմի օրինաց յարձակեալ՝ յերկիրն Վրաստանու ի բնակչացն կալեալ՝ (33բ) գերի վարէին, և ո՛չ թողուին զվատթար արարս իւրեանց¹⁹⁹:

Կենեազն թէպէտ զրեաց զխրատական հրամանս և ասէ, թէ. «Վաղեմի այն ժամանակ էր վալիին, իսկ այժմ ժամանակ զերաստիճան կայսեր միոյ, [զի]՞ ժամանակ է, զի ի վատ գործոց ձերոց անարժանեաց յամենայնի իշխանութեանն յետս դարձի՛ք, զի, ասէ, յայդպիսի գործոց բաց յապաշաւանաց և ի վնասուց չունիք քաղել և զոչինչ պտուղս»:

Բայց նոքա յայնմ մասին անհոգացեալ՝ յանվայել և ի վատ գործոց իւրեանց ոչ յետս դադարէին: Վերջապէս կենեազն առեալ զսակաւ ինչ զօրս՝ ետ ի մտի խրատել զնոսա, ուստի չոգաւ ի կողմն Տաղիստանայ:

¹⁹⁷ Գեներալ-մայոր Լազարը սպանվել է 1803 թ. ապրիլի 19-ին վրաց նախկին թագուհի Մարիայի կողմից (տե՛ս ԱԿԱԿ, Կ. II, Ը. 196, Ը. 114):

¹⁹⁸ Վրաց նախկին թագուհի Դարիան Ռուսաստան է ուղարկվել 1803 թ. հոկտեմբերի 25-ին (տե՛ս ԱԿԱԿ, Կ. II, Ը. 167, Ը. 102-103):

¹⁹⁹ Ղաղստանի լեռնականների ավարառուական արշավանքների մասին տե՛ս **Неверовский А.**, Краткий исторический взгляд на Северный и Средний Дагестан до уничтожения влияния лезгинов на Закавказье, СПб., 1848; **Блиев М., Дегоев В.**, Кавказская война, М., 1994, Ը. 117-123:

* Չեռագրում այսպես է:

Լեզվիք ի լսելն զայս համբաւ՝ ժողովեալ պատրաստեցան և եկեալ հարին զբանակն իւրեանց շուրջանակի զգետովն Կանիկ²⁰⁰ և սպասին գալստեան զօրացն ռուսաց: Եւ այսպէս խորհուրդ արարին նոքա, զի արգելցին ի մտից ընդ սահմանս Ճառու Թալու գյաղթողս զօրս ռուսաց և ընդդէմ նոցա զրգուեցին զպատերազմ, բայց ո՛չ ի միտ առին, զի խռիւ ինչ ո՛չ կարէ ընդդիմանալ հրոյ բորբոքելոյ և սուրն ո՛չ կարէ փոփոխել, զի վերին նախախնամութեանն զպատուհան:

Զօրք ռուսաց իբրև հասին ի գետն Ղաչիկ, որպէս զբազէ քաջակիրթ ի յորս, անցքն ընդ գետն վաղվաղակի և ձայն հրացանաց թշնամւոյն համարեալ որպէս զբերկրառիթ երգս քնարաց, և զնոյլ սուսերաց (34ա) նոցա իբր զբաժակի զինւոյ ուրախարար, յընթացս ական թօթափելոյ զզօրսն գայնոսիկ զբազմախոռով և աղմկայոյզ ո՛չ թողին, զորս և մինչ ի Բալաքեանն, որ առ ամբուլթիւնն էր նոցա տեղի պապատանի, հալածականս արարին՝ տալով նոցա զարժանին պատիժ, զի մի՛ համարձակիցին նոքա միւս ևս տանել ի Վրաստանաց զգերիս և զաւարս և ընդ շաւիղ վաղեմի սովորութեան իւրեանց մի՛ զնասցեն²⁰¹:

Եւ զօրս նշանակեաց մնալ ի հողն Ճառու: Եւ զղեներալն մայիօր կնեազ Օրբելիանովն և զղեներալ մայիօր Ֆուլակովն²⁰² կարգեաց յաստիճանի զօրապետութեան և յանձնակատար, զի ի լեզկաց եթէ գործ ինչ հակառակ և նշան ինչ խռովութեան ի վեր երևեսցի՝ ի վրէժխնդրութիւն նոցա և ի պատուհաս մի՛ թողցեն ցուցանել զպարտուպատշաճն փոյթ և ջանասիրութիւն

²⁰⁰ Խոսքն Ալազան գետի մասին է:

²⁰¹ Ռուսական գորքերի արշավանքը Ջառ տեղի է ունեցել 1803 թ. մարտի 29-ից 31-ը (տե՛ս АКАК, т. II, д. 1387, с. 685; Дубровин Н., Закавказье от 1803–1806 года, СПб., 1866, с. 98):

²⁰² Խոսքը գնեւերալ-մայրո Վասիլի Գուլակովի մասին է, որը զոհվել է 1804 թ. հունվարի 15-ին լեզգիների դեմ մղած մարտում (տե՛ս Потто В., Кавказская война. Т. 1. От древнейших времен до Ермолова, М., 2007, с. 269):

և արգելեալ՝ մի՛ թոյլ տացին, զի բնակչաց Վրաստանու հասուցին զվնաս ինչ և զնեղութիւն:

Եւ ինքն յետս դարձեալ՝ եկն ի յետագայ ամի և եմուտ ի Վրաստան: Եւ գրեալ զնամակ ի վերայ Գանձակայ Ճաւատ խանին՝ հրաւիրեաց զնա ի հպատակութիւն և ի հնազանդութիւն հրամանաց մեծի և բազմազօր թագաւորութեան Թուսաց²⁰³, ի բաց լինելով ի հակառակութենէ և յընդդիմութենէ զործավարացն տէրութեան և ընդ ճանապարհ յանցաւորութեան մի՛ զնասցէ, զի ի հակառակութենէ ընդդէմ (34բ) մեծազօր տէրութեան բաց յապաշաւանաց ո՛չ քաղիցէ զպտուղ ինչ, եթէ ո՛չ զապաշաւանս:

Ճաւատ խանն զանցեալ զխրատու նորա և զմեղմալի քարոզիւն և անտեղի վարկուցեալ՝ ո՛չ ընկալաւ զայնս:

Կնեազ Յիցիանովն յաղթական զօրօք ի կողմն Գանձակայ ունելով զհեծելազօրս ևս ի թաւատաց, յազնուաւորաց ի Ղազախայ, ի Շամսատիւլուայ՝ չոգաւ դէպ ի կողմն այն: Ի հասանիլ այսր յաղթող զօրաց ի սահմանս Գանձակայ, Ճաւատ խանն ևս առեալ զժողով զօրաց իւրոց՝ ել ընդառաջ նոցա, ետ պատերազմ յեռամղոն (վերստ) բացակայութեան ի Գանձակայ, և բաղխեալ թեթև իմն ընդ զօրսն՝ յաղթեալ, ապա ի փախուստ դարձաւ և մազապուր[ծ] և կիսամահ հասուցեալ զինքն ի բերդն՝ սկիզբն արար պահպանութեան այնորիկ:

Զօրք կնեազին մտեալ ի քաղաքն՝ պատեցան շուրջանակի զբերդիւն և յընթացս միոյ ամսոյ անդանօր մնացեալ, ի միում գիշերի, որ էր Ֆեաթիր բայրամին²⁰⁴, սկիզբն արարին ելանել ընդ սանդուղս ի գլուխ պարսպին: Եւ յերկուց կողմանց զելերոզսն ի վերայ պարսպին Ջաւատ խանն քաջասիրտ յարձակմամբ ի վայր հոսեաց: Եւ ի վերջոյ ռմբաձգութենէ մայիօր

²⁰³ Իշխան Յիցիանովի նամակները Ջավաղ խանին տե՛ս АКАК, т. II, д. 1172, с. 588; д. 1175–1179, с. 590–591:

²⁰⁴ Տե՛րը – մահմեդական հավատի տոներից է, երբ բացվում է մահմեդականների պատը:

Լիսանեվիչին ի պարսպաց կենդանութեան իւրոյ ի վայր հոսեալ՝ աւանդեաց զհոգին: Եւ անդրէն առ նմին զինուորք ի չորից կողմանց յարձակեալ՝ մուտ գործեցին ի բերդն²⁰⁵, և զայն օր մեծի հանդիսի (բայրամին) խաւարեցոյց ի վերայ (35ա) բնակչաց Գանձակայ: Եւ յընթացս երից ժամուց պարապեալ ի կոտորումն և ի հեղումն անպարտ արեան բնակչաց՝ զպարիսպսն և զընդարձակ հրապարակն դարձուցին ի դոյն կարմրեբրանգ վարդի:

Իսկ յետ երից ժամուց հրամայեաց կուսակալն (Յիցիանով) զադարել ի հեղլոյ զարիւնս և յետս կալ յայնպիսի գործոց և ի մնացելոց ի բերանոյ սրոյ զմատնեալսն կապանաց գերութեան՝ ածել առ ինքն: Զկնի յաղթող գտանելոյ գերաստիճան կուսակալին՝ զրոյր գերզաստանս բնակչաց քաղաքին ի քաղաքն, և զագգականս ձաւատ խանին ի մզկիթն տանելով, եղ զնոսա ի միում տան՝ ի վերայ նոցա զպահապանս զգուշաւորս կա[ր]գելով:

Եւ անդանօր կարգեաց ապա զդատարանս, զկառավարս և տալով բնակչաց երկրին զմիամտութիւն և մխիթարութիւն՝ չոգաւ ի վրաստան:

(35բ) ՅԱՂԱԳՍ ԳՆԱԼՈՅ ԿՆԵԱԶ ՑԻՑԻԱՆՈՎՆ Ի ԿՈՂՄՆ
ԵՐԵՎԱՆՈՒ ԶԿՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅԱՂԹՈՂ ԼԻՆԵԼՈՅՆ
ԵՎ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՅՆ ԱՌԱՆՑ ԱՌՆԼՈՅ ԶԵՐԵՎԱՆ

Յորժամ Յիցիանով եմուտ ի քաղաքն Տփլիս, յայնմ ձմեռան զպատրաստութիւն զօրաց տեսեալ՝ ի ժամանակի գարնան յուղի անկաւ դէպի կողմն Երևանայ²⁰⁶: Մհամմատ խանն²⁰⁷

²⁰⁵ Գանձակի քերդը գրավվել է 1804 թ. հունվարի 3-ին (տե՛ս ԱԿԱԿ, Կ. II, Ժ. 1182, Կ. 592):

²⁰⁶ Իշխան Յիցիանովի գլխավորած ռուսական բանակը Երևանին մոտեցել է 1804 թ. հունիսի վերջին (տե՛ս ԱԿԱԿ, Կ. II, Ժ. 1232, Կ. 615):

²⁰⁷ Մուհամմադ խանը եղել է Երևանի կառավարիչը 1784–1805 թթ.: 1805 թ. Ֆաթալի շահը ազատել է նրան այդ պաշտոնից:

Երևանայ զբազմապիսի նամակս մի զկնի միւսոյն զրեալ առ կնեագն՝ յայտնեաց նմա, զի նա առանց յետաձգութեան փութացեալ դէպի յԵրևան՝ զլայնատարած դաշտն (զընդարձակ երկիրն) այնր սահմանի նուաճեսցէ ընդ հովանեաւ իւրոց յաղթ դրոշակաց, զի ասէ:

«Ի գալ քաջայաղթ զօրացդ զբանալիսն բերդին առաջարկել ունիմ և առաքել զայնս առ ձեզ՝ ընթանալով արդարեւ ընդ ճանապարհ հնազանդութեան և հպատակութեան մեծի տէրութեան Ռուսաց»:

Քեալբալայի խանն²⁰⁸՝ կառավարն Նախիջևանայ, կայր յայնմ ժամանակի յԵրևան: Թէպէտ Մհամմատ խանն ինքնագլուխ և անկախ զումեքէ, սակայն կարգաւորութիւն գործոց և կառավարութեան վախճան առնուին ըստ խորհրդոյ, համաձայնութեան և բարեհաճութեան Քեալբալայի խանին:

Եւ կուսակալն չուեալ բազմութեամբ մեծաւ՝ եկն և եհար զբանակն իւր ի դաշտին էջմիածնայ:

(36ա) Ի տէրութենէն Իրանայ ևս Աբբաս-Միրզայն, որ էր դեռ մանուկ դեռահասակ, գլխաւոր իշխան զօրաց եղեալ՝ ի միասին ընդ մեծամեծաց և գերաստիճան սարտարաց և այնչափ զօրաց ելեալ ընդառաջ կնեագ սարտար Յիցիանովին և ի պատերազմ ընդ նմա եկեալ էր:

Ի դաշտին էջմիածնայ հանդիպեալ միմեանց՝ յարդարեցին զգոռ պատերազմն այնպիսի սաստկութեամբ, մինչ ի փուլոյ երկրի խաւար կալաւ զերեսս երկնից, որ և ո՛չ թողոյր ի գիշերի նշմարել զաստեղս: Իսկ ի նշուլից սուսերաց խաւարեցաւ ճառագայթ արեգական: Ըստ որում, առաջին անգամն էր պա-

²⁰⁸ Նախիջևանի Քյալբալի խանը հայտնի էր նաև «կույր խան» անունով, քանի որ կուրացվել էր Աղա Մուհամմադ խանի կողմից, և գրկվելով խանի պաշտոնից՝ ապաստան գտել Երևանի Մուհամմադ խանի մոտ (տե՛ս Присоединение Восточной Армении к России. Сборник документов, Կ. I, Երևան, 1972, Կ. 650):

տերազմի ռուսաց ընդ պարսից²⁰⁹: Վերջինքս այսօրիկ ի ռուսաց ո՛չ այնչափ երկնչէին:

Զօրք ռուսաց ի նմին մարտի բաժանեցան յերիս դասս, ի վերայ որոց զօրք պարսից այնպիսի իմն եղանակաւ արձակեցան, մինչ լուսաւէտն աշխարհ զխաւարի հարաւ առաջի աչաց նոցա, և ի բազմութենէ մարմնոց սպանելոցն լայնատարած դաշտն և խորք և ձորք զհաւասարութեան ընդ բարձրաբերձ լեռանց զգեցան: Զօրք ռուսաց, անգէտ գոլով զորպիսութենէ հանգամանաց իրերաց, իւրաքանչիւր ոք այսպէս կարծէր, որպէս թէ՛ միւս գունդք իւրեանց յաղթեալ և ցրուեալ իցեն, այլ իբրև օղն ի բաց փարատեաց զխաւար թանձրամած և լոյսն տարածեաց զթևս իւր, ռուսք հայեցեալ՝ տեսին զզօրս իւրեանց անվնաս և (36բ) առանց պակասութեան:

Բայց զօրք պարսից, հայեցեալ ընդ այս դիպուած, զսպանեալսն զամենեսին ինքեանց գտին, և խոզք դաշտաց ներկեալ էին յարենէ նոցա ի գոյն կարմիր վարդի կարմրեբանգ: Յետոյ զսանձ կարողութեան ի ձեռաց ի բաց լքին, և սահեցան ոտք նոցա ի հաստատութենէ, և փութացան ի փախուստ, և ի սաստկութենէ երկիւղի զմերձեցեալ յերևան և չուեալ ի տեղի ինչ, որ ի վեր քան զքաղաքն՝ Քինակիր անուն (գուցէ՛ Քանաքեռ), կարի յոյժ ամուր հարեալ զբանակն իւրեանց՝ անդանօր բացին զվաճառատեղիս:

Յիցիանովն հանգիստ առեալ ընդ զօրաց իւրոց, ապա զկնի նոցա յարձակեցաւ, և ի ժամուն մերձ յերեկոյեան պահն եհաս զօրացն պարսից, որք հայեցեալ ընդ այն և թողեալ զամենայն զվրանս իւրեանց ընդ այն ամենայն ծանրութեան իւրեանց՝ փախեան²¹⁰: Զօրք ռուսաց, զի նոցանէ մնացեալ իրսն

և զաւարսն, որք անթիւ և անհամար էին ի բազմութենէ, յէտ նուաճելոյ զամենայն ընդ իշխանութեամբ՝ չուեալ անտի պաշարեցին զերևան²¹¹:

Ֆաթհալի* շահն յետ առաքելոյ զԱբբաս-Միրզայն ինքն ևս զկնի նորա անչափ բազմութեամբ զօրաց, հանդերձ և մեծաւ ամբօխիւ ի ժողովրդեանն՝ յուղի անկաւ, եկն, որոյ ի գալն զճանապարհայն լուաւ զհամբաւ յաղթեալ լինելոյ Աբբաս-Միրզային յերեսաց ռուսաց: Եւ իբրև կայծակն և հողմ եկեալ ի Տավալու²¹² (37ա) անուն տեղին, հանդիպեալ միմեանց, և ի վեր քան զերևան ընդ զօրաց ռուսաց զմարտ ամենայն սաստկութեամբ:

Եւ, որպէս յայտ է, ոմանք ի քաջասիրտ զօրապետաց յերևելեաց պարսից հեծեալ ի ձի՝ միայնակ [ի] մէջ զօրաց ռուսաց յարձակէին, զգլուխս ոմանց ի նոցանէ ի բաց բարձեալ ի մարմնոյն՝ յետս գային: Բայց և այնպէս ևս անկարացեալ ի գլուխ տանել զգործ ինչ, առանց հասանելոյ ի նպատակ կամաց իւրեանց՝ յետս դարձան, և հարեալ զվաճառանոց և զբանակ նստէին: Եւ արգելուին զանցս տանողացն վասն զօրաց ռուսաց զպաշարս:

Զօրք ռուսաց պատեցան շուրջանակի զքաղաքաւն Երևանայ, բայց զօրք պարսից զնքօք պատեալ՝ զանցս երթեկութեան հատին և զճանապարհն այնպէս արգելին, զի կնեազք վրաց, որ ընդ Յիցիանովին ելեալ էին ի մարտ, ի փախչելն հանդիպեալ պարսից՝ մատնեցան կապանաց²¹³:

Ֆաթալի շահն Փիրկուլի մարզպանն ի միասին ընդ Աղէքսանդր Միրզայի, որ վալին էր Վրաստանու, առաքեաց ի

²⁰⁹ Էջմիածնի ճակատամարտը տեղի է ունեցել 1804 թ. հունիսի 20-ին (տե՛ս ԱԿԱԿ, տ. II, ժ. 1231, շ. 615):

²¹⁰ Քանաքեռի մոտ պարսկական բանակատեղիի ոչնչացումը տեղի է ունեցել 1804 թ. հունիսի 30-ին (տե՛ս ԱԿԱԿ, տ. II, ժ. 1668, շ. 809; Присоединение Восточной Армении к России, т. I, док. № 185, с. 227):

²¹¹ Երևանի պաշարումը սկսվել է 1804 թ. հուլիսի 2-ից (տե՛ս ԱԿԱԿ, տ. II, ժ. 1668, շ. 810; Присоединение Восточной Армении к России, т. I, док. № 185, с. 228):

* Չեռագրում Ֆաթալի շահ է:

²¹² Խոսքն Արարատ գյուղի մասին է:

²¹³ Պարսիկների կողմից վրաց ազնվականների գերման մասին տե՛ս ԱԿԱԿ, տ. II, ժ. 1672, շ. 811; Присоединение Восточной Армении к России, т. I, № 185, с. 235:

Տփխիս: Յորմէ նախ ժողովուրդք Ղազախ Բօշչալուի յետ կա-
ցին ի տէրութենէ Ռուսաց և ապստամբեցան ի Հպատակութենէ
այնմ²¹⁴: Նասիբ բէկն, որ ի պատերազմին Գանձակայ ցուցեալ
էր զբազում ծառայութիւնս և զհաւատարմութիւն, ընդ որում
էր և ղեներալ-մայիօր Լիսանեվիչն, բացի շամաստինլուեցուց
և ի բնակչաց քաղաքին Տփխիսայ, (37բ) բոլոր ժողովուրդք
վրանաբնակք, գիւղականք ևս և արքայազունք վրաց, որ փա-
խուստ անկեալ էին ի Բաշաչոզ, եկեալ՝ յարեցան ի վալին և
ձայն ապստամբութեան և հակառակութեան բարձրացուցին՝
պաշարեալ Ղարաքիլիսայ գեղջն եղեալ սակաւաթիւ զինուորս
ռուսաց, ի միասին ընդ բնակչաց այնր գեղջ, այլ յետ ժամա-
նակի տկարացան յառնլոյ գայն:

Կնեազ Յիցիանովն վասն պակասութեան պաշարաց զօ-
րաց իւրոց զմայիօր Կանդարովն²¹⁵, զոր Ղարայ մայիօր²¹⁶
անուանէին, ի միասին ընդ յիսուն և վեց զինուորաց և ընդ
որդւոյ Մելիք-Աբովի՝ Ռուստամ բէկին²¹⁷, ծառայիւք նորա
հանդերձ, առաքեաց ի Վրաստան՝ բերել զպաշար վասն զօրաց
իւրոց և անյապաղ հասուցանել ի բանակն:

Զօրք պարսից, իրազեկ գայամանէ եղեալ, գնացին: [Զօրք
ռուսաց] զկնի գերիս աւուր պատերազմելով՝ տանէին զպա-

²¹⁴ Ղազախի և Բորչալուի թաթարների՝ պարսիկների կողմն անցնելու մասին տես Ֆաթալի շահի ֆերմանը կարարդին, չեչեն և օս իշխաններին, բեկերին, ավագներին և ժողովրդին (ԱԿԱԿ, տ. II, ձ. 1689, с. 820-821):

²¹⁵ Ձեռագրում այսպես է: Խոսքը ցարական բանակի մայոր, ազգությամբ լեւ Օսիպ Մոնտրեզորի (1767–1804) մասին է: Նա 1804 թ. մասնակցել է Երևանի բերդի պաշարմանը: Չոխվել է 1804 թ. օգոստոսի 21-ին, Փամբակի Ղուրսալի գյուղի մոտ Փիր-Կուլի խանի և վրաց խռովարար արքայազն Ալեքսանդրի զորքերի դեմ սղած անհավասար մարտում (նրա ջոկատի սխրանքի մասին տես **Потто В.**, Кавказская война, т. 1, с. 282-284):

²¹⁶ «Ղարա-մայոր» – թուրք. «սև մայոր»:

²¹⁷ Ռուստոմ բեկը պարսից զորապետ Փիր-Կուլի խանի 8000 զինվորներից բաղկացած խմբի դեմ մարտում, Փամբակի Ղուրսալի գյուղի մոտ ծանր վիրավորվել է, գերվել ու տարվել Թավրիզ, ուր էլ 1805 թ. գլխատվել է Աբբաս-Միրզայի հրամանով (տես Երիցեան Ա., Հայերի մասնակցութիւնը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետութիւնների մէջ, «Փորձ», 1877–1878, N 2, էջ 395):

շարն: Իսկ ի հասանելն ի Մենկեազ Փիրկուլի սարտարին մարզպանն և վալիագնեայցն՝ ի յայտ ածեն զօրք պարսիկք, թէ:

«Ահա՛ յընթացս երից աւուրց պատերազմեմք ընդ սոսա և ո՛չ միայն սոքա, այլև մեք իսկ գլխովին մահու հափ վաստակեալ եմք, ուստի հարկ է ձեզ գալ մեզ յօգնութիւն»:

Եւ Փիրկուլի մարզպանն ի միասին ընդ վալիգատայից յօգնութիւն նոցա հասեալ՝ յարեցաւ ի նոսա և յառաւօտէ մինչ ցերեկոյ պատերազմեալ՝ ո՛չ սակաւ զանձինս ի չիք դարձուցին: Եւ մինչև էր վիրաւորեալ մայիօրն, հանդէս մարտին կայր դեռ ի ջերմութեան, (38ա) այլ յորժամ յիշատակեալ մայիօրն վիրաւորեցաւ յերից տեղեաց, դադարեցաւ պատերազմն, մայիօրն մեռաւ, և պաղեցան սիրտք զօրաց նորա: Եւ ցրուեցան բոլոր զինուորքն, յորոց և հայք փախուցեալ մտին յայր մի, ամրացան անդանօր՝ արարեալ զայն ինքեանց տեղի ապաստանի, բայց ի վախճանի մատնեցան կապանաց գերութեան:

Եւ անդուստ յետս դարձեալ՝ զՂարաքիլիսայն պաշարեալ մնացին անդանօր՝ զփոշի խոռվութեանն և աղմկին հասուցեալ մինչ ի կամարս երկնից:

Նահանգապետն ի Տփխիսայ զբազում պաշարս երկերիւր կառօք ընդ քանի մի զինու[ո]րաց առաքեաց վասն զօրաց կուսակալին, որք յորժամ հասին ի մեծ ամարանոցն, անդանօր բնակեալ ժողովուրդք եկեալ՝ պաշարեցին զանցս նոցա: Զինուորք ռուսաց յորժամ տեսին զանցս իւրեանց ընդ պաշարմամբ թշնամացեալ բնակչաց, ի նմին յայնմ տեղւոջ զկառան պատնեչ ինքեանց արարեալ՝ կացին անդանօր: Եւ մի հօտ յոչխարաց նոցա բերեալ՝ յամրոցն իւրեանց պարսպեցան ընդդէմ նոցա ի մարտի և ի պահպանութիւն անձանց իւրեանց: Եւ նոքա թէպէտ ցուցին զոչ սակաւ փոյթ և զջանասիրութիւն, բայց առնուլ զպատնէչն նոցա և զամրոց տկարացան:

Վերջապէս ի պատճառս կարի շփոթութեան իւրեանց, զայս ի յայտ ածեալ Փիրկուլի մարզպանին՝ օգնութիւն խընդ-

րէին (38բ) ի նմանէ, որ և վաղվաղակի եհաս յօգնութիւն նոցա: Եւ թէպէտ եցոյց զբազում ջանս և զհնարս կարևորս, այլ անկարացաւ նուաճել զպատնէշն զայն, և ճոպան կարծեաց նոցա կարճեցաւ ի կարթելոյ զնոսա: Վերջապէս, առանց հասանելոյ ի նպատակ, կարի ավաշաւանօք և շառագունեալ ի քրքրտանց ամօթոյ և լալական ակօք ի բազում կարօտութենէ էջ, որպէս զոլոռն արտասուաց որ յաչաց, ի ստորոտս Աղլաղան լերանց²¹⁸:

Յորժամ դիպուածս այս ի Տփլիսի գհոնակի հասաւ, ղեներալ ոմն ընդ երեք հարիւր զինուորաց և չորից մեծամեծ թընդանօթաց առաքեցաւ յօգնութիւն նոցա՝ առ ի անվնաս հասուցանելոյ զպաշարսն ընդ նոսա ի բանակ զօրաց կուսակալին: Իբրև յիշեալ ղեներալն եհաս նոցա և յարեցաւ ընդ զօրաց՝ եղելոց ի նմին պատնշի, յետ այնր ո՛չ ոք համարձակեցաւ ելանել ընդդէմ նոցա: Փիրկուլի մարզպանն ո՛չ ևս կամեցաւ ելանել ի մարտ: Եւ նոքա զպաշարն առանց վնասու հասուցին ի Ղարաքիլիսայ:

Կենազ Յիցիւանովն յորժամ ետես, զի պաշարն եկն ի Ղարաքիլիսայ և բերդն ի ձեռս ո՛չ անկանի, և հիւանդութիւն ջերման ի զօրսն ուսաց հանդիպեալ նեղէ զնոսա²¹⁹, վասն որոյ յետս դարձեալ²²⁰՝ եկն ի Ղարաքիլիսայ²²¹ և անդանօր բաժանեաց զպաշարն ի վերայ զօրաց իւրոց: (39ա) Փիրկուլի մարզ-

²¹⁸ Խոսքը Գեղամա լեռների մասին է:

²¹⁹ Հիվանդություններից օրական մահանում էր 10-20 մարդ (տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1801–1879 թթ.), Ե., 1959, էջ 288):

²²⁰ 1804 թ. սեպտեմբերի 2-ին, մութ գիշերով, երբ բերդում և շրջակայքում խորին լռություն է տիրել, Յիցիւանովը հավաքել է զորքերը և Երևանից մեկնել էջմիածին և այնտեղից էլ, մի օր մնալուց հետո, մահանցել, վերադարձել է Թիֆլիս (տե՛ս Շահազիզ Ե., Հին Երևանը, Ե., 2003, էջ 144): Ընդ որում, պարսիկների ձեռքը չնկնելու պատրվակով Յիցիւանովն իր հետ է վերցրել նաև Մայր Աթոռի գանձերը (տե՛ս Присоединение Восточной Армении к России, т. I, док. № 185, с. 239; док. № 199, с. 278):

²²¹ Իշխան Յիցիւանովի զորքերը Ղարաքիլիսա են հասել 1804 թ. սեպտեմբերի 14-ին (տե՛ս Присоединение Восточной Армении к России, т. I, док. № 185, с. 240):

պանն և վալիագնեայք ի տեսանելն զանցս զայս՝ յանճարութենէ վաղվաղակի յետս դարձան:

Բնակիչք Բօջջալուի և այլ հասարակութիւնք Վրաստանու, որ ի հաստարմատ տէրութենէ Ռուսաց յետս կացեալ և ապստամբեալ էին յայնմանէ, կամեցան չուել անտի և գալ ի Ղարապաղ՝ թողլով զբնիկ զվաղեմի բնակութիւնս իւրեանց: Զորմէ իրագեկ եղեալ՝ մայիօր Լիսանեվիչն և Նայիբ բէկն եկին անդանօր և ետուն նոցա զսրտառուէ խրատս, և քարոզս կարդալով՝ (42ա)* յականջս նոցա տային սրտից նոցա զհանգիստ և զմխիթարութիւն:

Եւ զնոսա յապաղեալ՝ անդանօր պահեցին մինչև կուսակալն Յիցիւանով մուտ գործեաց ի սահմանս Վրաստանու, և զմեծամեծս այնց հասարակութեանց հրամայեաց բերել առ ինքն ի գիւղն ի Սառաղլու, որոց զճաշակս իշավարնգով²²² սաստիկ դառնութեան և տրտմութեան համեմեալ՝ ասէ ցնոսա.

«Զի՞նչ էր պատճառն ապստամբութեան ձերոյ յայսմ հաստարմատ տէրութենէ»:

Նոքա չգտեալ և ո՛չ զմի ինչ ի պատասխանի, փակեալ զբերանս իւրեանց ի կնիք լուծեան՝ կային անմուռնչ: Եւ յանճարութենէ սկիզբն արարին աղերսախառն աղաչանաց առ կենեազ Յիցիւանովն, որոյ այնպիսի հանգամ[ան]ս շարժեցաւ ի գութ իւր ծովաքանակ, և հրամայեաց նոցա և ասէ.

«Որովհետև վատթար գործք ձեր անիրաւ արկին ի պատճառս յիմարութեան ձերոյ, զձեզ յայս մահառիթ տեղի և երկիւղալի և անմտութիւն մատնեաց ևս կապանաց նեղութեան և վշտաց դառնաղէտ, վասն որոյ ես ի նենգութենէ ձերմէ և հակառակութենէ, որ ի տէրութեանն Ռուսաց, ներելով յետս դարձուցի զբերսս իմ ի խրատելոյ զձեզ դատաստանօք չարչարա-

* Չեռագրի 39բ–41բ էջերը չգրված են:

²²² Այստեղ հեղինակը ցանկանում է ասել, որ իշխան Պ. Յիցիւանովը չափազանց խիստ տոնով է խոսել ապստամբների ներկայացուցիչների հետ:

նաց, բայց պարտիք զամենայն ինչ, զոր առեալ էք ի Վրաստանէ՝ յետս դարձուցանել և տալ լիովին տեսարց իւրեանց»:

Յետ այնր կուսակալն կնեազ եմուտ ի Վրաստան, և զկնիքանի մի աւուրց պնդեալ զհետ ապստամբելոց և ոմանց բնակելոց ի լեբրինս՝ խաղաղացոյց զնոսա: Եւ յետ աւարտելոյ զայս ամենայն՝ օտարս իւր դարձաւ և եմուտ ի Տփլիս, և անդանօր ձմերեալ՝ յաւուրս գարնան եկն ի Գանձակ:

(42բ) ՅԱՂԱԳՍ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՆԵԱԶ ՑԻՑԻԱՆՈՎԻՆ
ԸՆԴ ԻՐԱՆԻՄ ԵՒ ՍԱԼԻՄ ԽԱՆԱՑՆ

Կնեազ Յիցիանովն մտեալ ի Գանձակ՝ ի դաշտին եհար զբանակ զօրաց իւրոց: Եւ զկառավարն Ղարաբաղու զԻբրահիմ խանն և զփեսայն նորա զՍալիմ խանն, որ ի կողմանէ Իբրահիմ խանին կարգեալ կայր յերկրին Շաքւոյ կառավարն և խան և օգնութեամբ նորա թիկն ածէր զբարձի իշխանութեան, նամակօք և ի ձեռն դեսպանաց հրաւիրեաց ի հպատակութիւն տէրութեան Ռուսաց:

Յիշատակեալ խանք ընկալեալ զհրաւէր նորա՝ Իբրահիմ խանն ի Ղարաբաղայ, և Սալիմ խանն ի Շաքւոյ, և կնեազ Յիցիանովն ի Գանձակայ եկեալ ի Քիւրաք-չայ՝ տեսին զմիմեանս, ի միջի որոց եղեն խորհուրդ, խօսակցութիւնք և երդումն առ իրեարս, ուրանօր և սկիզբն արարին խաղաղութեան յերկուց կողմանց և երդամբք և դաշնադրութեամբք արարեալ զկարգադրութիւն՝ խօսեցան ընդ միմեանս զհաշտութիւն²²³: Ուստի տէր կուսակալն հարիւր զինուորս նշանակեաց ի միասին ընդ մայիօր Լիսանեվիչին ի Ղարաբաղ, զորս երէց որդին

²²³ Իշխան Պ. Յիցիանովի և Իբրահիմ խանի միջև Քյուրակ-չայի պայմանագիրը կնքվել է 1805 թ. մայիսի 14-ին (տե՛ս АКАК, т. II, д. 1436, с. 705; Дубровин Н., Закавказье от 1803—1806 года, с. 406-407): Իշխան Պ. Յիցիանովի և Շաքիի Սելիմ խանի միջև պայմանագիրը կնքվել է 1805 թ. մայիսի 21-ին (տե՛ս АКАК, т. II, д. 1437, с. 705):

Իբրահիմ խանի՝ Մհամ[մ]ատ Հիւսէին աղայն առեալ՝ եբեր ի Շուշի բերդաքաղաքն, և նոյնչափ զինուորս յերկիրն Շաքւոյ առաքեաց: Եւ ինքն պարապէր ի հաստատութեան բարեկարգութեանց կանոնաց և օրինաց Վրաստանու և Բաշաչղայ, որոյ կամք ըստ մեծի մասին էր զմիջավայրն երկուց ծովուց ընդ ձեռամբ նուաճեալ զկողմունսն բանալ, զի երթեկութիւն ժողովրդեան մարթ լիցի ընդ երկուս իսկ ծովսն: Վասն որոյ սկզբնաւորեաց շինել զբերդն Սիլյային²²⁴ Սեաւ ծովու:

Յետ այնր ևս կամեցաւ զԲազուն ևս նուաճել ընդ իշխանութեամբ: Այնր աղազաւ դարձեալ ի Տփլիս, անդուստ անհամար բազմութեամբ զօրաց խաղաց դէպի Բազու՝ առ նուաճելոյ զայն ընդ (43ա) իւրև: Եւ յԻբրահիմ խանէն ևս խնդրեաց զօգնութիւն, և նա տուեալ զխորհուրդ՝ զիւր զհարազատ որդին զՄեհտի-Ղուլի աղայն առաքեաց յօգնութիւն ի Շիրվան կոյս, որովհետև Մուստաֆայ խանն Շիրվանու, որ յանցս յաղթող զօրաց կայր, ապստամբեալ ի մեծագոյն տէրութեանէն Ռուսաց՝ զնայր ընդ ուղին թշնամութեան ընդդէմ նոցա և քաջասիրտ կացեալ կայր ի վերայ ճանապարհին թշնամութեան:

Տէր կուսակալն ըստ խորհրդոյ նորա կալեալ ինքեան ի նպատակ զճանապարհն Շիրվանայ՝ զարթուցանել ի քնոյ անհոգութեան զխանն տեղւոյն արժանի վարկուցեալ՝ յուղի անկաւ դէպի կողմն Շիրվանու: Մուստաֆայ խանն, ի լսելն զայն զահի հարեալ՝ ի միասին ընդ հպատակաց իւրոց և զօրաց, չոգաւ ի Փիթ լեառն կոյս, տեղի ինչ ամուր, և անդանօր արարեալ զայն ինքեան ամրոց պատնշի նստաւ: Իսկ յետ հասանելոյ տեառն կուսակալին ընդ մէջ նոցա ի վեր երևեալ բարեկամութեան՝ կապեցին զդաշն հաշտութեան²²⁵: Եւ քանիցս տէր կուսակալն ընդ միում ձիաւորի գնաց ի տեսութիւն Մուստա-

²²⁴ Խոսքը Ռեդուտ-Կալե ամրոցի մասին է, որը գտնվում է Մեմզրեկիայում:

²²⁵ Շիրվանի Մուսթաֆա խանը իշխան Յիցիանովին հպատակություն է հայտնել և ցրա հետ պայմանագիր կնքել 1805 թ. դեկտեմբերի 25-ին (տե՛ս АКАК, т. II, д. 1366, с. 674, 676-677; Дубровин Н., Закавказье от 1803—1806 года, с. 474):

Փայ խանին, յորոց ի խօսիլն ընդ միմեանց Մուստաֆայ խանն առ բարեկամութեան իւրոյ ասաց ցկուսակալն.

«Շրջելն քո այդպէս միայնակ պատճառել ունի զվնաս բարեբաղտ անձին քում և հասուցանել զգեան»:

Որում կուսակալն պատասխանեաց և ասէ.

«Գերաստիճան կայսրն մեր ունի իբրև զիս զբազում միլիոն զինուորս (սալդաթ), և եթէ ես մեռանիցիմ՝ չի՛ք ինչ փոյթ արդա՛րև զինէն, և չի՛ք ինչ խտիր ընդ իս և ընդ սոսկական զինուորի ուրեք ի բազմաց անտի»:

Անտի գնաց ի կողմն Բազուայ, զոր և պաշարեաց և՛ ի կողմանէ ծովուն, և՛ ցամաքի²²⁶: Յետ անցանելոյ ժամանակի աւուրց ինչ Հիւսէին-Ղուլի խանն ի ձեռն միջնորդաց և բարեխօսաց ումանց սկիզբն արար հպատակութեան և եղ կանոնս հաշտութեան, (43թ) այլ՝ նենգապատիր և մարդելոյզ բանիւք: Կուսակալն, հաւատացեալ բանից նորա, արտաքոյ քաղաքին հարեալ զբանակն իւր՝ նստաւ անդանօր: Եւ ի վերջոյ Հիւսէին-Ղուլի խանն ի ձեռն հրաւիրակաց խնդրեաց ի տէր կուսակալէն, և ասէ.

«Վասն ինչ-ինչ ծածուկ խնդրանաց և բերանացի ասացուածոց արժան է Ձեզ զալ ի բերդն Բազուայ»:

Եւ տէր կուսակալն, գոլով այր կարի պարզամիտ և մաքուր ի սրտէ, ոչինչ առեալ ի միտ ի նենգապատիր հրաւիրանաց նորա՝ չոգաւ ի բերդն Բազուայ: Եւ ի մերձենալ նորա ի դրունս բերդին՝ մերձեցաւ առ նա խանն, և կալեալ զձեռաց իրերաց՝ խօսիլ սկսան, յորում ժամու Իբրահիմ բէգն, որ էր հաւատարիմ ծառայ Հիւսէին-Ղուլի խանին, տմարդութեամբ և միով հրացանաւ զկուսակալն վիրաւորեաց, որ ի նմին իսկ ժամու փոխեցաւ ի հանդերձեալն²²⁷:

²²⁶ Ուսական զորքերի կողմից Բաքվի պաշարման մասին տե՛ս АКАК, т. II, д. 1521, с. 745:

²²⁷ Իշխան Պ. Յիցիանովը դավադրաբար սպանվել է 1806 թ. փետրվարի 8-ին (տե՛ս Потто В., Кавказская война, т. 1, с. 257):

Յետ որոյ Հիւսէին-Ղուլի խանն զգիպուածս զայս համարեալ գերագոյն ծառայութիւն՝ յայտնեաց զայնմանէ տէրութեանն Պարսից ի ձեռն սուրհանդակի²²⁸: Եւ ի պարսից զօրք անթիւ անհամար եկեալ՝ լցին զանապատն Բազուայ, արարեալ զայն ի բազմութենէ մեծաց և փոքունց ընտիր ժողովրդեան և զօրաց ի նմանութիւն ժողովոյ աւուրն դատաստանի:

Ջօրք ուսաց յետ լսելոյ և տեսանելոյ զգիպուածս զայս, ի յետադարձութենէ ընդ ցամաքն երկուցեալ, նստեալ ի նաւս՝ գնացին ի Սարու կղզին²²⁹:

Ժողովուրդ այսր երկրի հայեցեալ ընդ օրէնս Իրանայ՝ զհետ պնդեցան բնական օրինաց, և մերձ էր յայնոսիկ երկիրսն ի վեր երեւիլ խռովութեանց:

Այլ տէր ղեներալ-մայեօր Սուետովն²³⁰, որ էր (44ա) զըլխաւոր կառավար՝ բնակեալ ի Շաքի²³¹, զսիրտս ժողովրդեան խաղաղիցոյց՝ տալով սրտից մեծաց և փոքունց զհանդարտութիւն և զանդորրութիւն, և կատարէր զպաշտօն կուսակալութեան:

Մինչ յետ անցանելոյ վեց կամ եօթն ամսոց տէր ղեներալ-Ֆերտմարչալ զրաֆ Գուտովիչն²³² հաստատեալ ի պաշտաման կուսակալին եկն, և յորժամ մուտ գործեալ ի Տփլիս՝ նստաւ ի վերայ աթոռոյ իշխանութեան, զկնի անցանելոյ քանի մի ժամանակաց երաց զճանապարհ պատերազմի ընդ Փաշային Օս-

²²⁸ Պ. Յիցիանովի հատված գլուխն ուղարկվել է Թեհրան՝ պարսից Ֆաթալի շահին (տե՛ս Потто В., Кавказская война, т. 1, с. 258):

²²⁹ Ձեռագրում այսպես է, սակայն պետք է լինի Աստրախան (հմմտ. Мирза Адигезаль-бек, указ. соч., с. 108):

²³⁰ Խոսքը գեներալ-մայոր Պյոտր Նեսվետսկի մասին է:

²³¹ Ձեռագրում այսպես է, սակայն պետք է լինի Փամբակ:

²³² Գուդովիչ Իվան (1741–1820) – ռուս ռազմական գործիչ, կոմս, գեներալ-ֆելդմարշալ: 1806 թ. նշանակվել է Կովկասի կառավարչապետ: 1808 թ. նրա երևանյան արշավանքը ծախողվել է: 1809–1812 թթ. եղել է գլխավոր զորահրամանատար Մոսկվայում, Պետական խորհրդի անդամ, սենատոր: 1812-ի փետրվարից՝ պաշտոնաթող:

մանեան²³³: Եւ յիշատակեալ զրաֆ զպարտուպատշաճն պատ-
րաստութիւն և զանչափ պիտանիս, զորս և ո՛չ Հանճարեղ
միտք կարէ ընդ թուով Համարոյ արկանել, պատրաստեալ՝
գտէր Սուետովն ի միասին ընդ յաղթող զօրաց եթող ի Կիւմրի,
ինքն ընդ յաղթական արդարասէր դասուց զօրաց ի կողմն
Ախարքալաքայ իբր զհեղեղ գարնան յարձակեցաւ:

Եւ ի նմին ժամանակի Համշի-գատայ Սալիմ Ֆաշայն էր
յԱնդրբիանուպօլ իշխան և կառավար գործոց: Լուեալ զայսոսիկ
զհամբաւս, առ բազում երկիւղի և ներքին սարսափանաց զահի
հարեալ, զգալիութեան զգեցաւ զգոյն: Բայց և այնպէս վասն
պահպանութեան Ախալքալաքայ և ընդդիմութեան ականաւոր
զօրացն նշանակեալ զզօրս առաքեաց՝ մոռացեալ յամենայնի
զայս առած, թէ՛ «Յորդահոս հեղեղաց խուլն ո՛չ կարէ դէմ
առնուլ, և արհեստն դիւթութեան զսահմանեալն ի վերին տես-
չութենէ ո՛չ կարէ արգելուլ»:

Տէր զրաֆն ի միասին ընդ արդարախոհ և քաջայաղթ զօ-
րացն առանց յապաղանաց զգաշտն Ախարքալաքայ զարդա-
րեաց ի զարդ բազմերանդ վրանաց ահաւոր բանակի և քաջա-
սիրտ զօրօք իւրովք զքաղաքն էարկ յանձուկս (44ր) պաշար-
ման ի չորից կողմանց՝ ի նմանութիւն մատանւոյ, որ յինքեան
ուռնիցի զմատն²³⁴: Մնացին անդանօր յընթացս եօթն աւուրց,
ապա պատրաստեալ զսանդուղս ընդ պարիսպն՝ յարձակեցան ի
վերայ քաղաքին²³⁵: Եւ ի սիրտս բնակչաց տեղւոյն արկեալ
զխռովութիւն շփոթի՝ յերրորդ ժամէ յառաջ քան զառաւօտն
շարունակեցին զպատերազմն արիւնահեղ: Եւ յետ անցանելոյ

²³³ Օսմանյան Թուրքիան Ռուսաստանին պատերազմ է հայտարարել 1806 թ. դեկտեմբերի 18(30)-ին:

²³⁴ Ախալքալաքի բերդը ռուսական զորքերը պաշարել են 1807 թ. մայիսին (տես ԱԿԱԿ, Կ. III, Тифлис, 1869, д. 942, с. 542):

²³⁵ Ախալքալաքի գրոհը սկսվել է 1807 թ. մայիսի 9-ի լուսադեմին: Գրոհի ըն-
թացքում ռուսական կողմը տվել է 897 զոհ և վիրավոր (տես Михайловский-
Данилевский А., Описание турецкой войны в царствование императора Александ-
ра, с 1806-го до 1812-го года, ч. I, СПб., 1843, с. 78-79; АԿԱԿ, Կ. III, д. 944, с. 543):

երից ժամուց յառաւօտէ զրաֆն Հայեցեալ՝ ետես, որ ո՛չ երևի
ուստեք նշան ինչ յաղթութեան: Վասն որոյ առանց Հասանե-
լոյ ի նպատակ կամաց՝ յետս դարձաւ և ի նմին գիշերի անդա-
նօր մնացեալ՝ ընդ առաւօտն ի կողմն Վրաստանու յուղի ան-
կաւ: Եւ ի մտանելն ի Տիխիս՝ եհաս ի լուր նորա համբաւ լինե-
լոյ Ռուսուր Ֆաշայի գլխաւոր զօրաց և գալստեան նորա վասն
պատերազմի ի Ղարս:

Ղարֆն վաղվաղակի հոգացեալ զարժանին պատրաստու-
թիւն՝ դիմեաց ի Կիւմրի: Եւ ի վերայ Արփաչայ գետոյն Հան-
դիպեալ միմեանց՝ զրգուցին զպատերազմ²³⁶: Եւ ի ժամուն, որ
մերձ յերեկոյ, զօրք օսմանեան յաղթեալ յերեսաց նոցա՝ թողին
զբազմաքանակ աւարս ընդ թնդանօթից բազմաց ի ձեռս քա-
ջայաղթ զօրացն ռուսաց²³⁷: Ի բազմապիսի յարգանս և ի պա-
տիւ բաղձալի դարձաւ կուսակալն ըստ կամաց իւրոց ի Տիխիս:

Ի ժամանակի ձմերան մեծաւ պատրաստութեամբ յուղի
անկաւ ի կողմն Երևանայ: Եւ ի կողմանէ Ղարաբաղայ զղենե-
րալ Խաթունցովն²³⁸ ընդ բազմութեան ժողովոյ և ընդ քաջա-
սիրտ դասուց զօրաց առաքեաց վասն առման երկրին Նա-
խ[ի]ջևանայ: Նախ[ի]ջևան առեալ եղև²³⁹, (45ա) բայց Երևան
մնաց յանձուկս պաշարման²⁴⁰: Յետ անցանելոյ ժամանակաց

²³⁶ Արփաչայի ճակատամարտը տեղի է ունեցել 1807 թ. հունիսի 18-ին (տես ԱԿԱԿ, Կ. III, д. 957, с. 548):

²³⁷ Արփաչայի ճակատամարտում 6000-անոց ռուսական բանակը ջախջախիչ հաղթանակ է տարել շուրջ 20000-անոց թուրքական բանակի նկատմամբ՝ տա-
լով ընդամենը 82 զոհ ու վիրավոր և առգրավելով 8 թնդանոթ (տես Михайлов-
ский-Данилевский А., указ. соч., с. 85):

²³⁸ Ձեռագրում այսպես է, սակայն խոսքը գեներալ-մայոր Ներսիսի մասին է, որի զորքը 1808 թ. հոկտեմբերի 28-ին Ղարաբաքայում հաղթել է Արբաս-Սիր-
գայի բանակին (տես Присоединение Восточной Армении к России, т. I, с. 480):

²³⁹ Ռուսական զորքերի կողմից Նախիջևանի գրավման մասին տես ԱԿԱԿ, Կ. III, д. 895, с. 508; Присоединение Восточной Армении к России, т. I, док. № 423, с. 480:

²⁴⁰ Երևանի պաշարումը սկսվել է 1808 թ. հոկտեմբերից (տես ԱԿԱԿ, Կ. III, д. 875, с. 496):

ելին ի վերայ Երևանայ²⁴¹, ուրանօր արարեալ զանչափ արիւն-հեղութիւն, ի կորուստ մատնելով զբազում անձինս և ի վերջոյ ի միտ առեալ զանձեռնհասութիւն իւրեանց ի նպատակ՝ զձայն թմբ[ու]կի յետադարձութեան բարձրացուցին²⁴²:

Եւ զկնի մտանելոյ ի Տփլիս զենեռալ օտ ինֆանթերիի Դուրմասովն²⁴³ հաստատեալ ի պաշտօն կուսակալութեան ի կողմանէ հաստահիմն տէրութեան՝ եկն ի Տփլիս, և զղրաֆն առաքեցին ի Ռուսաստան: Նոր կուսակալն զխաղաղութիւնն բարւոք քան զխռովութիւնն վարկուցեալ՝ հաշտեցաւ ընդ տէրութեան Օսմանեան:

Եւ թէպէտ զհանդէս պատերազմի ընդ պարսից ո՛չ թողոյր միշտ սառուցեալ և զաղարեալ, և ո՛չ երբէք զաչս արթնութեան իւրոյ խնոյր, ակնկալեալ ի կողմանէ Իրանայ տեսանել զխաղաղութիւն և զանդորրութիւն, թող զայն, զի մեծամեծք տէրութեան Պարսից զիշխանսն մեծի տերութեան Ռուսաց միամիտ արարին և անհոգ, այլ Մհամատ Ալի Միրզայն²⁴⁴ ի ծածուկ անցեալ ընդ սահմանս՝ եկեալ էր ի կողմանս Վրաստանու: Եւ զԲօջալուն աւարեալ, զանչափ վնասս հասուցանելով՝ տարեալ էր անտի աւարս յոյժ, ի միասին ընդ բազմապիսի գերեաց²⁴⁵:

²⁴¹ Ռուսական զորքերի կողմից Երևանի գրոհը տեղի է ունեցել 1808 թ. նոյեմբերի 17-ին և ավարտվել անհաջողությամբ (տե՛ս Присоединение Восточной Армении к России, т. I, док. № 423, с. 481-482; док. № 427, с. 508-509):

²⁴² 1808 թ. նոյեմբերի 30-ին ռուսական զորքերը վերացնում են Երևանի պաշարումը և, մեծ դժվարությամբ անցնելով ծյունածածկ ճամապարհը, դեկտեմբերի 6-ին վերադառնում են Վրաստան (տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 305):

²⁴³ Տորմասով Ալեքսանդր (1752–1818) – ռուս ռազմական գործիչ, կոմս, հեծելազորի գեներալ: 1809–1811 թթ. Կովկասի կառավարչապետ: 1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից:

²⁴⁴ Մուհամմեդ Ալի Միրզան Ֆաթալի շահի երկրորդ որդին էր: Եղել է Քերման-շահի կառավարիչը: Վախճանվել է 1820 թ. (տե՛ս Берже А., Фетх-Али-шах и его дети, «Русская старина», СПб., 1886, N VI, с. 554):

²⁴⁵ Մուհամմեդ Ալի Միրզայի զորախմբի Բորչալու ներխուժելու մասին տե՛ս АКАК, т. IV, Тифлис, 1870, д. 1075, с. 695:

Երկու ամօք յետոյ քան զայս, յամին 1811, զմարզպանն Երևանայ զՀիւսէին խանն ի միասին ընդ արքայազն Աղէքսանդր Միրզային վրացւոյ առաքեցին ի կողմն Վրաստանու, զի գնացեալ յԱննկայ²⁴⁶՝ անդուստ զխռովութիւն և զաղմուկ արկցեն ի Վրաստան²⁴⁷ և զմտեալ՝ խռովութիւնն բորբոքեցեն օրաւուր: Տէր Դուրմասովն կուսակալ իրազէկ զայսմանէ (45ր) լեալ, անցեալ ընդ Շամքօր՝ եհար զբանակն մերձ ի կամուրջն Սատրայ: Եւ տուեալ զգօրս զենեռալ-լէյտենանտ Պա[վ]լովիչին և զենեռալ Լիսանեվիչին՝ առաքեաց ընդառաջ Հիւսէին խան սարտարայ դէպ յԱխալայ: Այսոքիկ քաջայաղթ զօրք գնացեալ ի ժամուն, յորում արեգակն զլոյս տունջեան տակաւ տակաւ հաւաքեալ մտանէր, զաւուրս նոցա դարձուցին ի խաւար՝ զգեցուցեալ նոցա զսեւագոյն հանդերձ սգոյ: Եւ յեղակարծումն յարձակեալ ի վերայ զօրաց պարսից՝ կոտորեցին զնոսա²⁴⁸, զոմանս տուեալ ճարակ սրոյ և զոմանս մատնելով կապանաց գերութեան, իսկ որք փրծանն ի բերանոյ արիւնարբու սրոյն՝ հեծեալ ի ձի կամ հետիոտս շփոթեալ ի փախուստ փութացան: Յորոց և զբազումս ընդ մէջ ճանապարհին զօրք օսմանեան առին յաւարի զինչս ի նոցանէ: Իսկ մնացեալքն կարի նուաղեալ, ի դառնագին նեղութիւնս և կարի վշտակրութիւն հասին ի սահմանս Երևանայ:

Հիւսէին խան սարտարն զամօթի հարեալ՝ երկեաւ ի տէրութենէ Պարսից, վասն որոյ և փախեաւ ի Բեհօրօլլի բերդն: Եւ

²⁴⁶ Պետք է կարդալ «յԱխալայ»:

²⁴⁷ 1810 թ. գարնանը կրկին փորձ արվեց ստեղծելու հակառուսական միավորում, որում ակտիվ դերակատարներ դարձան Երևանի սարդար Յուսեին Կուլի խանը, Ախալցխայի Շերիֆ փաշան, վրաց արքայազն Ալեքսանդր և Իմերեթի թագավոր Սոլոմոնը (տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք I, Ե., 2010, էջ 235):

²⁴⁸ Գնդապետ Լիսանեվիչի զորաջոկատի հարձակումը պարսկական ճամբարի վրա տեղի է ունեցել 1810 թ. սեպտեմբերի 4-ի լույս 5-ի կեսգիշերին: Այդ հարձակման ընթացքում պարսկական կողմը կորցրել է շուրջ 700 հոգու, իսկ ռուսական բանակը սովել է ընդամենը 21 զոհ և վիրավոր (տե՛ս Михайловский-Данилевский А. Описание турецкой войны в царствование императора Александра, ч. II, СПб., 1843, с. 113–115):

զկնի քանի մի ժամանակի միամիտ արարեալ՝ զնա ածին ի տեղի իւր:

Ի յաջորդ ամին տէր Տուրմասովն չոգաւ ի Ռուսաստան: Ի 1812 ամի զմարկիզ Պավլովիչն²⁴⁹ Մեծ ինքնակալն տէրութեան Ռուսաց հաստատեալ ի պաշտօն կուսակալութեան՝ առաքեաց, որ յետ մտանելոյ իւրոյ ի Տփլիս՝ փութացաւ յերկիրն Գանձակ, ի միտս ելանելոյ ի Բազուլայ: Զձապատ խանն²⁵⁰, որ հանդերձ գերդաստանաւ իւրով և ընդ քանի մի խանաց պարսից կայր ի բանտի, արձակեալ՝ (46ա) զնաց անտի դէպի կողմն Բազուլայ²⁵¹:

Յայսմ միջոցի բնակիչք Կախեթու և Կողու ապստամբեալ՝ զնային զճանապարհն թշնամութեան²⁵²: Եւ պօլկովնիկ Ջաֆար-Ղուլի աղայն ևս, որ էր թոռն Իբրահիմ խանին, ի Ղարաբաղայ ի փախուստ անկեալ՝ էանց ի Պարսկաստան, և ի միասին ընդ զօրաց Նայիր-Սուլթանայ Աբ[ը]աս-Միրզայի եկեալ զբատալիօնն (գոռնդն զօրաց ռուսաց), որ կայր ի Ղիրզի՝ ցրուեաց²⁵³:

Մարկիզն, լուեալ զայսոսիկ զազմկայոյզ զհամբաւս, յետս դարձեալ ի Բազուլայ՝ եկն առ Մուստաֆայ խանն Շիրվանու, ուրանօր մանրամասնաբար տեղեկացեալ զհանգամա-

²⁴⁹ Պաուլուչի Ֆիլիպ (1779–1849) – զինվորական և պետական գործիչ, մարկիզ: Ազգությամբ իտալացի: 1807-ին գնդապետի կոչումով ծառայութեամբ ևս անցել ռուսական բանակում, կատարել է դիվանագիտական հանձնարարություններ, մասնակցել է Թուրքիայի և Շվեդիայի դեմ պատերազմներին: 1811 թ. հունիսի 6-ին նշանակվել է Կովկասի կառավարչապետ: 1812 թ. հոկտեմբերից Ռիզայի զինվորական նահանգապետն էր: 1829-ին վերադարձել է Իտալիա:

²⁵⁰ Այստեղ բարգամիչը սխալվել է: Խոսքը միայն Ջավադ խանի գերդաստանի մասին է (տե՛ս ԱԿԱԿ, Կ. Վ, Թիֆլիս, 1873, ժ. 167, ս. 119; ժ. 169, ս. 119-120):

²⁵¹ Մարկիզ Պաուլուչի Բաբուլում գտնվել է 1812 թ. փետրվարին (տե՛ս ԱԿԱԿ, Կ. Վ, ժ. 88, ս. 59):

²⁵² Կախեթի ապստամբությունը սկսվել է 1812 թ. հունվարի 31-ին Ախմետա գյուղում և շուտով տարածվել ողջ շրջանում (տե՛ս Օչերկի Իստորիա Գրուզիա, Կ. Վ, Թբիլիսի, 1990, ս. 54):

²⁵³ Աբրաս-Միրզայի զորքերի հարձակման մասին տե՛ս ԱԿԱԿ, Կ. Վ, ժ. 88, ս. 59:

նաց դիպուկածոյն ի Ղիրզի՝ եկն ի Ղարաբաղ, ուր և զայրացուցեալ դառնագինս ոմանց ի բնակչացն՝ զՄեհտի-Ղուլի խանն արգել ի բանտի օր մի: Եւ կոչեալ զմէլիք Ջիմշուտն Մէլիք-Շահնազարեան հայազգի՝ եհան նմա ապտակ ընդ երեսուն:

Եւ ի նմին իսկ յայնմ գիշերի եհաս նմա թուղթ ի կնոջէ իւրմէ, թէ վիրք Կախեթայ ապստամբեալ են²⁵⁴: Ուստի կուսակալն անյապաղ փութացաւ ի Տփլիս: Թէպէտ զճանապարհայն յերթալն իւր երկնչէր ի բնակչաց Ղազախու, բայց նոքա ելեալ ընդառաջ կուսակալին՝ զկարի ծառայութիւն և զմտերմութիւն ցուցին:

Կուսակալն հասեալ ի Տփլիս²⁵⁵՝ քանից[ս] յարձակեցաւ ի վերայ վրաց: Ի զօրաց ի Տփլիսայ ի պատիժ ապստամբեալ վրաց ոմանք ետուն զպատերազմ, իսկ ոմանք հպատակեալ՝ զնացին զճանապարհն հնազանդութեան²⁵⁶: Ի սմին իսկ յայսմ միջոցի զգալստենէ զաղղիացւոց, այսինքն է՝ Պօնաբօրտ Նաբալիօնի, ի Ռուսաստան կային ինչ-ինչ զրոյցք:

Զմարկիզ Պավլովիչն զրկեալ յաստիճանէ կուսակալութեան՝ առաքեցին ի Ռուսաստան, և ի տեղի նորա (46բ) զղեներալ Բատաշովն²⁵⁷ հաստատեցին կուսակալ: Յետ գալստեան նորա ի Վրաստան, յամին Քրիստոսի 1816, սկիզբն արարաւ հաշտութեան և խաղաղութեան ընդ տէրութեանն Պարսից: Իսկ ի կողմանէ Իրանայ Միրզայ Աբիւլ-Հասան խանն, եկեալ ի միասին ընդ բազմութեան ժողովոյ ի Ղարաջայ, եղին զսկիզբն

²⁵⁴ Կախեթի ապստամբության մասին տե՛ս Маркова О., Восстание в Кахети в 1812 г., М., 1951; Очерки истории Грузии, т. V, с. 54-56:

²⁵⁵ Մարկիզ Պաուլուչի Գարաբաղից դուրս է եկել 1812 թ. մարտի 21-ին և հինգ օր անց հասել Թիֆլիս (տե՛ս ԱԿԱԿ, Կ. Վ, ժ. 97, ս. 75):

²⁵⁶ Կախեթի ապստամբությունը վերջնականապես ճնշվել է 1812 թ. մարտի 10-ին (տե՛ս ԱԿԱԿ, Կ. Վ, ժ. 97, ս. 80):

²⁵⁷ Ռոիշչև Լիկոլայ (1754–1835) – ռուս զինվորական և պետական գործիչ, գեներալ: Մասնակցել է 1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմին: 1812 թ. փետրվարի 16-ին նշանակվել է Կովկասի կառավարչապետ: Ռուսաստանի անունից ստորագրել է Գյուլիստանի 1813 թ. հաշտության պայմանագիրը: 1817-ից՝ սենատոր էր:

խաղաղութեան և հաշտութեան, որ ի Կիւլստան²⁵⁸, յորմէ աշխարհ բազմախռով և աղմկալից եզիտ զհանգիստ և զանդորրութիւն:

Եւ յետ ժամանակաց ինչ գլխատակեալ ղեներալն ի բաց հանեալ ի կուսակալութենէն՝ կացուցին ի տեղի նորա զղեներալ Երմալովն, որոյ եկեալ²⁵⁹՝ ամենայն գործոց երկրին վերահասութիւն առնելով՝ զնէր ուրեք ուրեք ի նորոյ ղկանոնս ըստ աւանդութեան և սովորութեան երկրին: Երմալովն յետ զալըստեան իւրոյ չոգաւ ի Պարսս²⁶⁰՝ ի Սուլթանիայ, և անդանոր զհաշտութիւնն նախորդին իւրոյ Բատիչովայ ի ներկայութեան Ֆաթհալի շահին նորոգեաց, ուրանոր և ի մասին սահմանաց, որ ընդ մէջ երկու տէրութեան ի վեր երեւեցաւ բազմապիսի խօսակցութիւնք և զրոյցք: Թէպէտ նորին Կայսերական Մեծութեանն կամք էին նախամտադրեալ նշանակել զՂափլաւթուն ի սահման, այլ ղեներալ Երմալովն հայեցեալ յընթացս գործոյն՝ ի պատճառս ինչ ինչ իրաց զԵրասխ գետն ընտրեաց ի սահման:

Ի սմին ժամանակի խանք Ղարաբաղայ և Շիրվանու՝ ղեներալ-մայեօր Մեհտի-Ղուլի խանն և ղեներալ-լէյտենանտ Մուստաֆայ խանն, ի փախուստ գնացին յերկիրն Պարսից²⁶¹:

²⁵⁸ Գյուլիստանի պայմանագիրը կնքվել է 1813 թ. հոկտեմբերի 12-ին (տե՛ս Договоры России с Востоком, политические и торговые. Собрал и издал Т. Юзефович, СПб., 1869, с. 208–214):

²⁵⁹ Գեներալ Ալեքսեյ Երմոլովը Թիֆլիս է եկել 1816 թ. հոկտեմբերի 10-ին (տե՛ս Записки А. П. Ермолова. 1798–1826 гг., М., 1991, с. 270):

²⁶⁰ Ա. Պ. Երմոլովի դեսպանության մասին տե՛ս Չակոբյան Չ., Ուղեգրություններ, հ. 2, Ե., 1934, էջ 499–612, կամ՝ Kotzebue, Moritz von, Narrative of a Journey into Persia, in the suite of the Imperial Russian Embassy, in the Year 1817, London, 1819; Поготи М., А. П. Ермолов. Материалы для его биографии, М., 1864, с. 196–231; Берже А., Посольство А. П. Ермолова в Персию (Исторический очерк), СПб., 1877; Нерсисян М., Записки декабриста Е. Е. Лачинова о путешествии А. П. Ермолова в Иран в 1817 г., «Историко-филологический журнал», 1967, N 1, с. 105–116:

²⁶¹ Շիրվանի Մուստաֆա խանը Իրան է փախել 1820 թ. օգոստոսի 19-ին (տե՛ս АКАК, т. VI, ч. I, Тифлис, 1874, д. 1212, с. 810), իսկ Ղարաբաղի Մեհի-Ղուլի խանը՝ 1822 թ. նոյեմբերի 21-ին (տե՛ս АКАК, т. VI, ч. I, д. 1293, с. 848; д. 1294, с. 849; Поготи В., Кавказская война. Т. 2. Ермоловское время, М., 2007, с. 519):

Եւ Իսմայիլ խանն Շաքւոյ չուեաց նոյնպէս ի փախուստ²⁶²: Այս երեքին երկիրք, յորոց իւրաքանչիւրն էր ընդ առանձին խանութեամբ, հպատակեալ հնազանդեցան մեծի տէրութեան Ռուսաց և յարեցան յայն:

Երմալով յայտոսիկ ի տեղիս (47ա) բացեալ զիրաւարանս՝ նշանակեաց յայնոսիկ դատաւորս և կարգեաց կառավարիչս, և զամենայն զգործսն յանձն արար կատարել ըստ սահմանեալ յինքենէ կանոնաց և կարգադրութեանց:

ՅԱՂԱԳՍ ԿՐԿԵԱԿԻ ԹՇՆԱՄՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ ԸՆԴ ՌՈՒՍԱՑ ԵՒ ԳՐԳՌՈՒԹԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Խաղաղութիւն և հաշտութիւն ընդ մէջ երկուց տէրութեանց, հաստատեալն ի դաշինս և յերդմունս, կային հաստատ ի վերայ վաղեմի կարգադրութեան մինչ ցմահ մեծի ինքնակալ Կայսերն Ռուսաց Աղէքսանդրի Պալլով[ի]չին, որ ի 1826 ամին Քրիստոսի²⁶³: Ըստ ինչ-ինչ չարագրգիւ խորհրդոց²⁶⁴ տէրութեանն Պարսից, զերծեալ զհամաձայնութեանն զհիմն հաշտութեան, զերծաւ ի միտս մարտից պատերազմի: Համբաւ զայս-

²⁶² Այստեղ, ըստ երևութիւն, թարգմանիչը սխալվել է (հմմտ. Мирза Адигезальбек, указ. соч., с. 114): Իրականում Շաքիի Իսմայիլ խանը 1819 թ. հոկտեմբերի 24-ին մահացել է հարբեցողութեան (տե՛ս АКАК, т. VI, ч. I, д. 1096, с. 738; Поготи В., Кавказская война, т. 2, с. 508):

²⁶³ Ալեքսանդր I-ը վախճանվել է 1825 թ. նոյեմբ. 19 (դեկտ. 1)-ին Տազանրոգում:

²⁶⁴ Խոսքն Իրանում Անգլիայի վարած քաղաքականության մասին է: Այդ մասին պատմաբան Ալ. Երիցյանը գրում է. «Երիտասարդ շահադադն չորսպատել էր իրեան անգլիական սպաներով և զիշեր ու ցերեկ զբաղուած էր իւր զօրքերը եւրոպական ձևով ռազմելովը: Անգլիացիք առատապէս բացել էին իրեանց քսակը և չէին խնայում Աբբաս-Միրզայի համար ո՛չ ոսկի, ո՛չ զէնք» (տե՛ս Երիցեան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիզ, 1894, էջ 183): Այդ մերձեցումն իր սուր ծայրով առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ (տե՛ս Новая история стран зарубежного Востока, т. I, М., 1952, с. 368–369; История Ирана, М., 1977, с. 230–231):

մանէ ի բերանս և ի լեզուս մեծաց և փոքունց զհռչակի հարաւ: Մեծայարգ տէրութիւնն Ռուսաց, չհաւատացեալ ճշմարտութեան այսր համբաւոյ, զհռչակեալ հանգամանս և զլուսն զամենայն սուտ և անգոյ համարէր:

Յայսմ միջոցի ի կողմանէ Նորին Կայսերական Մեծութեան ամենողորմած թագաւորին Ռուսաց կնեազ Մլնաչիկովն նշանակեցաւ դեսպան յաշխարհն Իրանայ առ թագաւորութիւնն Պարսից: Եկեալ նորա ի Ղարաբաղ՝ էանց ընդ կամուրջն Խուտաֆիրինայ²⁶⁵, որ ի վերայ Երասխ գետոյն, և զնաց յիրան²⁶⁶: Եւ այս դիպուած պատճառեաց մեծաց և փոքունց զմիամտութիւն և զանդորրութիւն այնպէս, մինչ ի (47բ) պահապանաց, որ ի սահմանս, լուեալ զիսկական զհամբաւն զճըշմարիտ, արգելուին ի պատիժս և ի պատուհաս՝ յայտնելով, զի զայսպիսի զհամբաւ և զլուր ահարկու մի՛ յայտնեսցին, զի ի կողմանէ տէրութեան բացի յանդիմանութենէ և ի նախատանաց չունին ստանալ ինչ: Բայց և այնպէս սաստեին պահապանացն ի գործս իւրեանց պատրաստ և զգոյշ լինիլ և արթուն յամենայնի:

Վերոյիշատակեալ դեսպանն անցեալ ընդ Դավրէժ՝ յերթալ իւրում հանդիպեցաւ զօրացն պարսից ի Յովջան, բայց անմարթացաւ ի յայտ ածել զխորհրդոյ իւրմէ տէրութեան և մեծամեծաց այնորիկ:

Չօրք պարսից ընդ զանազան տեղիս սկիզբն արարին սպրդիլ ի սահմանս Ռուսաց, այն է՝ Հիւսէին խան սարտարն և Հասան խան ընդ կողմն Երևանայ ի Ղարաբաղիսայ և ի Շուրակէլ, Ամիր խան սարտարն և Մեհտի-Ղուլի խանն ընդ կողմն Նախիջևանայ, Ղարաբաբայի և Սիսիանայ ի վերայ Շուշու:

²⁶⁵ Իշխան Ա. Ս. Մենչիկովը խուդափերիմի կամրջի մոտ եղել է 1826 թ. մայիսի 23-ին (տե՛ս АКАК, т. VI, ч. II, Тифлис, 1875, д. 620, с. 344):

²⁶⁶ Ա. Ս. Մենչիկովի դեսպանության մասին տե՛ս Бартоломей Ф., Посольство князя Меншикова в Персию в 1826 году, «Русская старина», 1904, N IV, с. 65–92; **Балаян Б.**, Дипломатическая история русско-иранских войн и присоединения Восточной Армении к России, Ереван, 1988, с. 147–154:

բերդին, Իբրահիմ խան սարտարն և Մուստաֆայ խանն Շիրվանու՝ մեծաւ բազմութեամբ հանդերձ դէպի Շիրվան, Հիւսէին խանն և Հաջի խանն Շաքուեցի՝ ի միասին ընդ իւրայնոցն ի վերայ Նուխի քաղաքի: Եւ սակաւ զօրք ևս նշանակեցան ի Թալիշ և ի Լանքարան:

Եւ ինքն Աբբաս-Միրզայն անցեալ ընդ կամուրջն Խուտաֆիրինայ, ունելով ընդ ինքեան զթնդանօթական կարաւանն, զհետեւակս և զհեծելագօրս, որոյ թիւ հասանէր մինչ ի վաթսուն հազարս²⁶⁷՝ դիմեաց ի վերայ Աւետարանոց գեղջ, ուրանօր ի նմին ժամանակի ամենայն զօրք ուսաց կային հանդերձ բոլորովմբ գործեօք և ամենայն պատրաստութեամբ: Եւ յանցանելն իւր ընդ գետն Երասխ գքանի մի զազախու (48ա) (այրուձի զինուոր ուսաց), որ գետոյն պարապէին ի լուացմունս, անդանօր ի տեղուջն կոտորեաց: Եւ անդուստ ի հաւանեցուցանելոյ և ի յորդորանաց ոմանց զարաբաղցուց (իմա՛ զթուրք բէկան)՝ յարձակեցան ի վերայ պատալիօնին (գնդի զօրաց ուսաց), եղելոյ ի Կօրէս և ի Կոռ[ն]իձոր գիւղօրայս Սիւնեաց, որոց հրամայեալ էր անյապաղ և առանց յետաձգութեան գերծանիլ ի բերդն ի Շուշի:

Եւ պարուչիկ Սաֆար-Ալի բէկն, որ յայնժամ էր կառավարիչ (նայիբ) Զանկազուր գաւառակին Սիւնեաց, էր առաջնորդ և ուղեցոյց գնդի զօրացն ուսաց: Զճանապարհայն, առընթեր Կոռ[ն]իձոր գեղջ, զօրք պարսից հանդիպեալ զօրացն ուսաց՝ յարդարեցին զպատերազմ յերկուց կողմանց: Եւ թէպէտ զօրք ուսաց ջանային գերծանիլ ի Հաքարու գետն, բայց ի միոյ կողմանէ ծարաւն և տօթ արեգական, ի միւս կողմանէ ծանօթութիւն տեղեացն Ղարաբաղու բնակչաց (իմա՛ զթուրքս) և զարաչօրու քրտաց, նաև միախուռն յարձակմունք ի վերայ նոցա շուրջանակի, արգել եղեն ճանապարհորդութեան նոցա:

²⁶⁷ Պարսկական 60000-անոց բանակը, Աբբաս-Միրզայի գլխավորությամբ, ռուսական սահմանները ներխուժել է 1826 թ. հուլիսի 15-ին:

Ղարաբաղցի կապիտան Հաջի Աղալարն (թուրք), իրագեկ զխորհրդոյ զօրացն ուսաց եղեալ, ընդ բէկաց ոմանց (թուրք), ժողովեալ զճիւղերս և զհետեակս ի քրտաց միմեանց, և արգել զանցս ուսաց յայսկոյս գետոյն (իմա՛ դէպի Շուշի), ընդ որ ո՛չ ոք ի զինուորաց ուսաց անցանել կարէր, յորոց և զոմանս ի սուր սուսերի մաշեցին և զոմանս կապանաց գերութեան մատնեցին²⁶⁸։ Եւ ի գնդէ անտի զօրացն ո՛չ ոք կարաց փրծանիլ ի ձեռաց նոցա և ի փախուստ փութալ անդուստ։ Զկալեալ գերիսն առեալ՝ գնացին ի Կորիս (48թ) առ Հաջի Աղալարն ի հիւր։ Անդուստ զպօլկովնիկ Նազուսովն և զմայեօր Կավալանսկին ի միասին ընդ կալանաւոր զինուորաց և այլոց յանցաւորաց համարելոց առաքեցին առ Ֆաթալի շահն, որ յայնժամ բնակէր հանդերձ զօրօք յԱրտավիլ, ընդ յայտարարութեան զյաղթութենէ իւրեանց²⁶⁹։

Ամիր խան սարտարն ընդ Մեհտի-Ղուլի խանին Ղարաբաղայ ելեալ ի Նախիջևանայ՝ յարեցաւ յԱբբաս-Միրզայն ի Կու[ն]իձոր գեղջ։ Ուրանօր Աբբաս-Միրզայն վասն ծուլութեան, անհոգութեան և թուլութեան Ամիր խան սարտարայ և Մէհտի-Ղուլի խանին, զայրացեալ ի վերայ իւրաքանչիւրոց ի նոցանէ, չուեաց անտի՝ զՄէհտի-Ղուլի խանն ընդ կողմն լեւրանց ընդ մէջ քիւրտ վրանաբնակաց առաքեալ։ Եւ ինքն ընդ զօրաց յարձակեցաւ ի վերայ զօրաց ուսաց՝ եղելոյ յԱւետարանոց գեղջ։

Յառաջ քան զայն, ի կոտորելն զղազախսն²⁷⁰ ի վերայ Երասխ գետոյ, եղբայր Մէհտի-Ղուլի խանին Սիւլէյման բէկն, ի միասին ընդ այլ ազգականաց, որք բնակեալ էին ի Վարանդայ

²⁶⁸ Խոսքը փոխգնդապետ Նազիմկայի (Նազիմով) ջոկատի ոչնչացման մասին է (տե՛ս АКАК, т. VI, ч. II, д. 650, с. 356-357, д. 651, с. 357; Потто В., Геройская оборона крепости Шуши, СПб., 1903, с. 10-13):

²⁶⁹ Աբբաս-Միրզայի այդ հաղթության գրությունը տե՛ս АКАК, т. VI, ч. II, д. 650, с. 356-357: Դաղթանակի լուրը թավրիզում ընդունվել է թնդանոթային համագարկերով։

²⁷⁰ Խոսքը կազակների մասին է։

գաւառակին ապստամբեալ՝ յայտնեաց զնենգութիւն թշնամութեան։ Եւ դեներալ Րէուլթն²⁷¹, որ յայնժամ էր գնդապետ (պօլկովիյ կօմանդիր), աճապարեալ՝ արգելլով բերողաց զծանրոցս իւրեանց, օր յառաջ եմոյժ զզօրս իւր ի բերդն Շուշի։ Զարկեար, Տիլաղարտայ և այլ (թուրք) բնակիչք Դիզաղու և Զիվանչիրու գաւառակացն զծանրոցս զօրացն և զբնակիչս կողմանցն Ամարասայ յաւարի հարին, և զգրաստոս բերողաց զպաշարս վասն զօրաց յափշտակեալ՝ տանէին։

Անտի շահգատայ Աբբաս-Միրզայն ընդ ճանապարհ լեւրինն Քիրսայ (49ա) յարձակիլ կամէր ի վերայ Աւետարանոցայ, այլ իբրև լուաւ զայս դիպուած՝ դարձաւ ի կողմն բերդին։ Եւ եկեալ ի Թօփխանայ անուն տեղին, որ այժմ բանակատեղի շահին անուանի (Շահիւրթի), եհար զբանակն և զառաջինն յարձակեցաւ ի վերայ բերդին՝ մերձեցեալ կարի յոյժ առ պարիսպն կոյս²⁷²։

Այլ ի ներքուստ ի բերդէն կառավարն քաղաքին (կօմենդա[ն]թն) ընդ հայազգի Կանջում աղային Խանդամիրեանց, որ ի նմին ժամանակի էր քաղաքատեսուչ (պօլիցմիստր), ելեալ հանդերձ միով գնդաւ զօրաց ընդդէմ նոցա յարդարեցին զպատերազմ։ Զօրք պարսից յետս ընկրկեցան առանց հասանելոյ ի նպատակ կամաց իւրեանց։ Բայց ոմանք ի հայոց բնակչաց քաղաքին, որք ելեալ էին անտի վասն կերակրոյ և ուտելեաց, ի նմին միջոցի անկան ի ձեռս պարսից։ Եւ հայազգի Սաֆարի իւզբաշին, որ ի գեղջէն Շուշիքենդ, առեալ ընդ ինքեան զբանի մի անձինս ի հայոց, ամրացեալ էր ի Խաղինաղայեայ²⁷³ քա-

²⁷¹ Ռեուտ Իոսիֆ – Շուշիում տեղակայված 42-րդ եգերյան գնդի իրամանատար։

²⁷² Շուշին պաշարվել է 1826 թ. հուլիսի 20-ին (տե՛ս АКАК, т. VI, ч. II, д. 651, с. 357):

²⁷³ Ըստ Դակոբ Զաքարյանի՝ Աղա Մուհամմադ խանի արշավանքի ժամանակ Իրրահիմ խանը այդ անառիկ վայրում է թաքցրել իր գանձերը։ Ըստ երևույթին, այդ պատճառով է Շուշիի մոտակայքում գտնվող այս քարածայրը հետագայում ստացել Խազինաղայա անվանումը (տե՛ս Մաղալեան Ա., Յակոբ Զաքարեանի «Պատմություն գաւառին Արցախու» աշխատությունը, էջ 337):

րաժայռին, որ յարևելից հարաւոյ բերդին, և մնայր անդանօր, որում և յաղթել զօրք պարսից ո՛չ կարացին:

Բայց բազումք ի բնակչաց Ղարաբաղայ, բացի քաղաքացւոց, բէկք և սուլթանք, ի պատճառս Մէհտի-Ղուլի խանին գնացեալ էին առ Աբբաս-Միրզայն և առ յիշեալ խանն, զորոց և զհրամանս կատարէին՝ ստանալով ի կողմանէ շահգատային զթանգազին ընծայս և զպարգևս: (էին առ Աբբաս-Միրզային իբրև գնորդ տէր Սարգիս մետրապօլիտն Հասան-Ջալալեանց և Ջրաբերդու հայազգի Մէլիք-Իվանին Աթաբէկեանց)²⁷⁴: Զօրք պարսից, ի միասին ընդ զօրաց և բնակչաց Ղարաբաղու (իմա՛ զթուրքս), իբր զմատանի պաշարեցին շուրջանակի զքաղաքաւն Շուշուոյ, (49բ) և յիւրաքանչիւր աւուր ո՛չ դադարէին ի պատերազմելոյ և մարտից՝ թափելով ի քաղաքն զկրակ թնդանօթաց:

Խանք Թալիշու ի մասին հեռի լինելոյ անտի զօրաց ուսաց հպատակեցան՝ ընկալեալ ի պարանոց իւրեանց զանուր ծառայութեան պարսից²⁷⁵: Կառավարն Թալիշու՝ Միր-Հասան խանն, զեղբարս իւր առաքեաց առ շահգատայն: Մուստաֆայ խանն Շիրվանու չոգաւ յերկիրն Շիրվան²⁷⁶, առ որ ժողովեալ բնակիչք երկրին հնազանդեցան նմա՝ յամենայնի հպատակեալ: Զօրք պարսից քանի մի անգամ յարուցին անդանօր զպատերազմ, և ի վերջոյ կրաբէն, ժողովեալ զամենայն զզօրս և զզօրավարս, եղեալս ի Շիրուան՝ գնաց յերկիրն Ղուբայի: Եւ

անդանօր Մուստաֆայ խանն նստաւ ի վերայ աթոռոյ խանութեան:

Զօրք և զօրապետք, եղեալք ի հին Շամախի, թողեալ զՇաքի զՇամախի՝ ելին ի Տիխիս²⁷⁷: Հիւսէին խանն՝ որդի Սալիմ խանին, չոգաւ ի Շաքի և անդանօր նստաւ ի վերայ աթոռոյ խանութեան:

Եւ զօրք ուսաց, եղեալք ի Զուրնաբատ, կամեցան մտանել ի Գանձակ և անդուստ անցանել ի Տիխիս, զորմէ բնակիչք Գանձակայ իրազեկ լեալ՝ արգելին և դարձուցին: Ուկիւրլու խանն²⁷⁸ ևս ի Գանձակ հաստատեցաւ ի խան: Ամիր խան սարտարն ընկալաւ զհրաման՝ գնալ ի միասին ընդ զօրս հազար զօրաց և կալով ի քաղաքին ի Գանձակ, ունիլ զգուշութիւն յայնոսիկ ի սահմանսն՝ հաւաքելով զճանօթութիւնս զհանգամանաց զօրացն ուսաց:

Եւ ի կողմանէ Երևանայ Հիւսէին խանն²⁷⁹, ելեալ ի Բամբակ և ի Շօրակէլ, և յետ ի բաց հանելոյ անտի զՍուլիզայ Միրզայն²⁸⁰, զամենայն զզրուսն ուսաց հարթայտակ կործանեալ՝ իշխան եղեն անդանօր: Յորոց և Հասան խանն²⁸¹ (50ա), յարձակեալ ի վերայ գերմանացի (նեմցէ) ազգին, եղելոյն իբրև գաղթական ի ներքոյ Կուչիկ տեղւոյն, որ ի գաւառակին Բօշ-

²⁷⁷ Շաքիից ռուսական երկու վաշտերի՝ Թիֆլիս նահանջելու մասին տես AKAK, Կ. VI, Կ. II, Կ. 661, Կ. 362:

²⁷⁸ Ուկուրլու խանը (ծն. 1781 թ.) Գանձակի Զավաղ խանի ավագ որդին էր (տես AKAK, Կ. VI, Կ. II, Կ. 906):

²⁷⁹ Յուսէին խան Ղաջար – Երևանի վերջին խանը, որն իշխել է 1807–1827 թթ.:

²⁸⁰ Խոսքն իշխան, Փամբակի դիստանցիայի հրամանատար Լ. Սևարսամիձեի (պարսկալեզու աղբյուրներում՝ Սևիգե Սիրգա) մասին է: 1826 թ. հուլիսի 16-ին Յասան խանը 3000-անոց զորքով հարձակվում է Միրաքի վրա ու ստիպում գնդապետ իշխան Սևարսամիձեին Ապարանով նահանջել դեպի Գյումրի, իսկ ռուսներին հետապնդող պարսկական բանակը մտնում է Փոքր Ղարաքիլիսա և սարսափելի ավերածություններ կատարում (տես Յայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին, Գյումրի, 2005, էջ 44):

²⁸¹ Յասան խան – Երևանի Յուսէին խան սարդարի եղբայրը, Երևանի խանության զորքերի հրամանատար:

²⁷⁴ Այդ մասին մանրամասն տես Պոտտո Վ., Ղարաբաղի առաջին կամավորները, Ե., 1974, էջ 51-53, Մաղալյան Ա., Փաստաթղթեր Արցախի գործիչների և Արբաս-Միրզայի 1826 թ. հանդիպման հետևանքների վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2006, N 1, էջ 3-19:

²⁷⁵ Թալիշի Միր-Հասան խանի՝ Կասայան ռազմածովային գնդի պահակակետերի վրա իրականացրած հարձակման մասին տես AKAK, Կ. VI, Կ. II, Կ. 651, Կ. 357-358; Кюркчян А., Русско-иранская война, 1826–1828. Новые концепции современной историографии, Ереван, 1991, Կ. 162-163:

²⁷⁶ Մուսթաֆա խանի Շիրվան գնալու մասին տես AKAK, Կ. VI, Կ. II, Կ. 651, Կ. 357:

չալուի, զաւարի եհար զնոսա և ի նոցանէ զբազումս գերի վա-
րեաց:

Ի միջի ժողովրդեանն կայր ի հռչակի և ի բան բերանոյ
խօսէին, որպէս թէ՛ տէր կուսակալ Երմալովն թողեալ զՏփիսիս՝
կամի երթալ ի Ռուսաստան: Իսկ զհայազգի զարաբաղցի ղենե-
բալ Մատաթովայ²⁸² չէր ի միջի ոչինչ համբաւ կամ լուր²⁸³:
Մինչ այս, մինչ այն պատգամաւոր ոմն եկեալ՝ ասաց. «Երմա-
լովն կայ նստեալ յամենայնի միամիտ և անդորրութեամբ ի
Տփիսիս, և Մատաթովն գայ բազմութեամբ զօրօք հանդերձ ի
Ռուսաստանէ», և ասէին, թէ՛ զօրքն այնոքիկ են ի յընտիր
գնդէ զօրաց Նորին Կայսերական Մեծութեան:

Յետ լսելոյ զհամբաւս զայս Աբբաս-Միրզայն առ զգու-
շուլթեան հրամայեաց որդւոյ իւրում ընտրելոցն ի ժառանգ և
Ամիր խան սարաարին՝ առանց յապաղանաց պատրաստեալ ի
բերդին Գանձակայ զպաշարս զօրաց, զթնդանօթս և զպէսպէս
ոմբազործիս և զբերդն զայն ամբացուցեալ՝ մնալ անդանօր
ամենայն զգուշութեամբ: Եւ սարտ[ար]ին Աբբաս-Միրզայն
իւրով ձեռամբ գրեաց և ասէ.

«Ո՛վ Ամիր խան, փախչել չէ արժան յերեսաց տղայի
ուրուք Չանաղչեցւոյ: Պետրոս բէկն²⁸⁴ է քեռի Մատաթովին,

²⁸² Մաղաթով Վալերիան (Ռոստոմ Մաղաթյան, 1782–1829) – գեներալ-լէյտե-
նանտ, ծնվել է Վարանդա գավառի Ավետարանոց գյուղում: 1816-ին նշանակվել
է Արցախում տեղավորված ռուսական զորքերի հրամանատար, իսկ 1817-ից՝
Ղարաբաղի, Շիրվանի և Շաքիի խանութիւնների զինվորական-նահանգային
կառավարիչ: Նրա զորքերը 1826 թ. աշնանը Արցախը մաքրեցին պարսիկ նվա-
ճողներից (նրա մասին տես Կեանք գեներալ-լէյտենանտ կնետազ Մատաթովին,
Շուշի, 1870, Жизнь генерал-лейтенанта князя Мадатова, СПб., 1874):

²⁸³ Այդ ժամանակ գեմ. Վ. Մաղաթովն իր քայքայված առողջությունը վերականգ-
նելու նպատակով գտնվում էր Կովկասի հանքային ջրերում (տես Մадатова С.,
Князь В. Г. Мадатов, «Русская старина», СПб., 1873, т. VII, N I, с. 86):

²⁸⁴ Մաղաթով Պետրոս – յուզբաշի, Վ. Մաղաթովի քեռին: Արցախի մելիքների
պատվիրակության կազմում 1799 թ. մեկնել է Պետերբուրգ: Պատվիրակության
կազմում էր նաև նրա ազգական պատանի Ռոստոմը՝ ապագա գեներալ Վ. Մա-
ղաթովը:

այլ դու քեռի ես իմ, տե՛ս, նա զբերդն Շուշույ որպիսի՛ եղա-
նակաւ պահպանէ, պահեա՛ և դու զբերդն Գանձակայ»:

Ի մտանել Ամիր խան սարաարայ ի Գանձակ, շահգատայն
զՆազար-Ալի խանն Մարանդեցի ընդ երկուց գնդից սարբազ
զինուորաց առաքեաց ի բերդն Գանձակայ, զի և նոքա գնա-
ցեալ՝ մնասցին անդանօր ի պահպանութիւն բերդին:

Ի սմին միջոցի, քանի մի աւուրբք յետոյ, զիւր զհաւա-
տարիմ Բէջան խանն²⁸⁵ ի միասին ընդ ընծայից և բազմապիսի
յուսադրական (50բ) խոստմանց առաքեաց ի բերդն Շուշի
վասն ինքնակամ անձնատուր լինելոյ և բանալոյ մտից նորա ի
բերդն:

Յետ որոյ առաքեցին զմայեօր Կուլիկին[ն]²⁸⁶ ի բերդէն
առ Աբբաս-Միրզայն, ուրանօր և յետ ի մէջ բերելոյ զբազմա-
պիսի խօսակցութիւնս և զխորհուրդս այսպէս սահմանեցին, զի
զկառավարն բերդաքաղաքի (կօմենտանթ) զմայեօր Չիլայեվն
ընդ միոյ կապիտան աստիճանաւորի տացին ի պատանդ²⁸⁷, և
զմայեօր Կուլիկինն ընդ միում հարիւրապետի ի պարսից կուսէ
առաքեցին գրով առ կուսակալ Երմալովն²⁸⁸՝ առ ի հաւանեցու-
ցանել զնա ի տուչութիւն բերդին:

²⁸⁵ Բեջան կամ Գաջի-Բեջան խանը ծագումով հայ էր Սոմխեթի Դմանիս գյուղից:
Նա 14–15 տարեկան հասակում գերվել է մահմեդականների կողմից և ընծայվել
Աբբաս-Միրզային, որի կողմից մահմեդականացվել է և հետագայում վարել թա-
գաժառանգի սեմեկապանի պաշտոնը: Նասր էդ-Դին շահի (1848–1896) գահա-
կալության սկզբնական շրջանում եղել է Եզդի կառավարիչը (տես Շերմազա-
նեան Գ., Նիւթեր ազգային պատմութեան համար: Երեւելի հայկագույնք ի
Պարսկաստան, Ռոստով (Ղօնի վերայ), 1890, էջ 172–175):

²⁸⁶ Խոսքը մայր Կյուլի ֆոն Կյուլգենաուի մասին է: Նրա և Աբբաս-Միրզայի
բանակցությունների մասին տես **Гржегоржевский И.**, Генерал-лейтенант Клюки-
фон-Клугенау. Очерк военных действий и событий на Кавказе, 1818–1850, «Русская
старина», СПб., 1874, т. XI, с. 144–149; **Потто В.**, указ. соч., с. 25–29:

²⁸⁷ Աբբաս-Միրզան մայր Չելյակին որպէս պատանդ ուղարկում է Թավրիզ, ուր
վերջինս մնում է մինչև պատերազմի ավարտը (տես **Потто В.**, указ. соч., с. 30):

²⁸⁸ Մայր Կյուլի ֆոն Կյուլգենաուի թիֆլիս է մեկնել 1826 թ. օգոստոսի 17-ին
(տես **Гржегоржевский И.**, указ. соч., с. 149):

Յետ որոյ Երմալովն գրեալ էր ի պատասխանագրութեան իւրում, թէ՛ ի լեզուի ռուսաց չի՛ք բառքս «կաբիտ վլասայ»²⁸⁹, որք ի գաղիացւոց լեզու նշանակին տալ զբերդն: Մայեօրն անդանօր մնացեալ՝ զթուղթն առաքեաց ի ձեռն առն միոյ Աբրահամ անուռն ի բանակ զօրացն շահգատայի:

Ուստի պարսիկք վերստին սկիզբն արարին յարձակմանց, բայց ի ձեռս բերել կարացին և ոչինչ: Յիւրաքանչիւրում աւուր առաքելով զարս առ ժողովուրդն Հայոց, եղեալ ի բերդին, Հրաւիրէին և յորդորէին զնոսա ապստամբիլ ի ռուսաց, ի բաց լինիլ ի նոցանէ և տալ ի ձեռս իւրեանց զբերդն: Բայց Հայք առաւել ևս փոյթ յանձին կալեալ՝ միշտ ի գիշերի և ի տունջեան ո՛չ դադարէին ի զգուշաւոր պահպանութենէ պարսպաց և աշտարակաց բերդին:

Որպէս մի անգամ ևս Հայագգի Սարուխան իւզբաշին Խաչենոյ, ըստ հրամանի Մէհտի-Ղուլի խանին եկեալ ի ստորոտս բերդապարսպին, զՀայ բնակիչս բերդին հրաւիրեալ՝ ի վերին երեսս խրատեաց զնոսա տալ զբերդն և յետս կալ ի զգուշաւոր յաշխատալի պահպանութենէ (51ա) նորին և պարսպացն, վասն զի չի՛ք, ասէր, յերեսս երկրի ոք ի ռուսաց կենդանի: Բայց ի լեզու Հայոց այլաբանօրէն քաջալերեալ էր զնոսա, թէ.

«Մի՛ ձանձրանայք յաշխատութիւնս ձեր և մի՛ երկնչիք ի սպառնալեաց սոցա, զի Մատաթովն անտարակոյս ի մօտոյ ունի ի վերայ Հասանիլ»:

Ի թուրքաց ըստ դիպուածոյ գիտակ գոլով լեզուի Հայոց՝ զայնմանէ ի յայտ ածին խանին, վասն որոյ խանն սրտմտեալ ի վերայ յիշատակեալ Սարուխան իւզբաշուն՝ կամեցաւ Հատանել զլեզու նորա, այլ ո՛չ արար²⁹⁰:

²⁸⁹ Ռուսերեն «капитуляция» բառի աղավաղված ձևն է:

²⁹⁰ Սարուխան յուզբաշու այս քայլը ներկայացնող դրվագը բացակայում է Ադիգոզալ-բեկի երկի Բաքվի 1950 թ. հրատարակութան մեջ (հմմտ. Мирза Адиге-заль-бек, указ. соч., с. 120):

Վերջապէս զամենակերպ հնարս և զականահատութիւնս անգամ ընդ պարսպօք բերդին արարեալ և զայլ բազմակերպ ջանս ի մէջ առեալ վասն նուաճելոյ զբերդն Շուշի՝ ոչինչ ի գլուխ հասուցին և պաշարեալ կային շուրջ զքաղաքաւն յամենայն կողմանց:

Մինչ այս, մինչ այն համբաւ պատերազմի Ամիր խան սարտարայ ընդ Մատաթովին, սպանման նորա ինքեան սարտարին ի նմին մարտի և յաղթութեան զօրաց նորա յերեսաց ռուսաց եհաս առ շահգատայն, և եղև պատճառ չունելոյ նորա ի պաշարմանէ բերդին²⁹¹:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՅՍՐ ԴԻՊՈՒԱԾՈՅ Է ՅԵՏԱԳԱՅՍ

Յորժամ Ամիր խան սարտարն ընդ որդւոյ շահգատայի՝ Մհամմատ-Միրզային էր ի Գանձակ, տուեալ եղբօրորդւոյ իւրում Մհամմատ-Չաման խանայ զհազար հեծելազօրս՝ նշանակեաց զնա ի վերայ տեղեաց Չակեամ գետոյ և Հասան-Սիւլեայ մնալ իբրև դէտակն պահապան, զի եթէ ի կողմանէ (51բ) Տըփ-խիսայ գայցեն զօրք՝ տեղեկացեալ զայնմանէ ծանուսցէ ինքեան:

Ի սմին միջոցի եհաս համբաւ, թէ Մատաթովն եկեալ յԱխստաֆայ՝ պարապի անդ ի պատրաստութիւն զօրաց և ժողովէ զայրուծիս: Իրազեկ լեալ Ամիր խան սարտարայ՝ յայտնեաց զայնմանէ մանրամասնաբար տեառն շահգատային, և ասէ.

«Առաքեա՛ ինձ զզօրս և զթնդանօթս, որով պատրաստեցայց ես, ասէ, ի մարտ ընդդէմ Մատաթովայ յելանել ընդառաջ նորա մինչ ի Տփխիս»:

Որում շահգատայն գրեաց զայս բան ի պատասխանի.

²⁹¹ Շուշիի պաշարման ողջ ընթացքում ամրոցի պաշտպաններից գոհվել էր 4, վիրավորվել 12 և անհետ կորել 16 մարդ (տե՛ս Потто В., указ. соч., с. 31):

«Հրամայեցի՛ քեզ գնալ և պահպանել զբերդն Գանձակայ, և անդանօր պարապիլ յամրացուցանել զբերդն և կալ ի զգուշութեան, այլ յորժամ Մատաթովն Հասանիցի գալ ի վերայ քոյ, եկից ե՛ս և տաց նմա պատասխանի՝ յարդարմամբ յաղթական պատերազմի ընդդէմ նորա»:

Ամիր խան սարտարն իբրև լուաւ գայս բան շահգատային՝ զարձոյց զերեսս իւր ի դիմելոյ ի բերդն Գանձակայ, և զչարեալ՝ արհամարհեաց զհրամանաւ շահգատային, արարեալ պատասխանի.

«Ըստ որում ե՛ս եմ սարտար, ուստի և պատերազմիլ ընդդէմ թշնամւոյն Հարկ է ինձ»:

Ոյր աղազաւ գայրացեալ շահգատայն ի վերայ նորա՝ որդւոյ իւրում Մհամմատ-Միրզային գրեաց զանարժան և զանվայել բանս:

Ի սմին պահու այր ոք եկեալ ի կողմանէ Մհամմատ-Ջաման խանին՝ յայտնեաց Ամիր խան սարտարին, թէ՛ Մատաթովն ի յԱխստաֆայ չուեալ՝ եկեալ է ի պատերազմ ընդ յիշեալ խանին, և նա չկարացեալ զդէմ ունիլ նորա ի փախուստ եկեալ՝ կայ յայսկոյս Հասան-Սիւլի միով մղոնաչափ հեռաւորութեամբ: Ամիր խան սարտարն ընդ Մհամմատ-Միրզային և ընդ այլոց խանաց խորհուրդ արար, թէ՛ այսչափ զօրօք և պատրաստութեամբ ընդ Մատաթովայ (52ա) և ընդ զօրաց ուսաց պատերազմիլ ո՛չ կարեմք, ուստի արժան է զայսմանէ [ծանուցել] Հիւսէին սարտարայ, զի նա ի միասին ընդ զօրաց և ժողովոյ իւրոյ ի կողմանէ Կօկչայու, և մեք յայսմ կողմանէ արկցուք ի վերայ, որով գոնէ զգործ ինչ կարասցուք ի գլուխ տանել: Վասն որոյ գրեալ զթուղթ ի վերայ Հիւսէին խան սարտարայ՝ օգնութիւն խնդրէին ի նմանէ, թէ՛.

«Մատաթովն զօրօք ուսաց գայ ի մարտ ընդ մեզ, դուք ընդ զօրաց ձերոց ընդ կողմն լերին փութացարուք, իսկ մեք ընդ այս կողմն փութասցուք ի բառնալ զնա ի միջոյ և բնաջինջ կորուսանել»:

Հիւսէին խան սարտարն պատասխանի ետ և ասէ.

«Հրամայեալ է ինձ ընդ այս կողմն, և գտանին առաջի զօրք վրաց, սմին իրի ո՛չ կարեմ Հասուցանել ձեզ զօգնութիւն ինչ»:

Յետ որոյ զայսմանէ ծանուցին նաև Նազար-Ալի խանին, որ ի նմին ժամանակի երկու Հազար զօրօք Հանդերձ նստեալ կայր ի բերդին Գանձակայ, թէ՛.

«Մատաթովն ընդ զօրաց ուսաց գայ մարտնչիլ ընդ մեզ, մեք ևս ելեալ ընդառաջ նոցա՝ երթամք ահա՛ դէպի Շամքօր, առաքեա՛ զերկու Հազար զօրսն զյանձնեալ քեզ, վասն ընդ մեզ ելանելոյ ի պատերազմ ընդդէմ Մատաթովայ: Զի եթէ մեք, ասէ, յաղթող գտցուք, բերդն Գանձակայ լինել ունի ընդ ձեռամբ և ընդ իշխանութեամբ մերով, իսկ եթէ՛ օ՛ն անդր ընդ Հակառակն պատահեսցի, յայնժամ ընդ յիշատակեալ երկու Հազար զինուորաց և ընդ ամենայն զօրաց դարձցուք ի բերդն Գանձակայ, և մտեալ յայն՝ զգուշասցուք ի պահպանութիւն նորին»:

Իսկ Նազար-Ալի խանն գրեաց նոցա ի պատասխանի, թէ՛.

«Հրամայեալ է ինձ ի միասին ընդ յիշատակեալ զինուորաց իմոց պահպանել զբերդն Գանձակայ, ուստի ո՛չ կարեմ ինքնագլուխ զինուորսն տալ ձեզ ի մարտ»:

(52բ) Վասն որոյ կամք Ամիր խան սարտարայ էին ընդ այնչափ զօրաց և թնդանօթաց, զորս ունէին, որք և էին չորս Հազար զինուոր հետեւելք և հեծեալք ի ջանբազաց²⁹² և ի չարտախչուաց և չորս թնդանօթք, կամ գնալ ի գետեզերեայ ծմակս և ի շամբուտս Կուր գետոյն և պահպանել զինքեանս, և կամ եկեալ յԱյրում լերինս՝ Հնարիւք իմն մնասցեն, մինչև Աբբաս-Միրզայն ընդ զօրաց իւրոց եկեալ՝ պատերազմ յարդարեացէ ընդ ուսաց: Բայց Մհամմատ-Միրզայն չհամաձայնեալ ընդ այս խորհուրդ Ամիր խանայ՝ անընդհատ յորդորէր զնա,

²⁹² Ջանբազ – Աբբաս-Միրզայի և անգլիացիների կազմակերպած կանոնավոր հետևազորը:

թէ. «Գոնէ առ անգամ մի ելեալ ընդառաջ զօրաց ոռւսաց՝ տեսցուք զեղանակ մարտի նոցա», վասն զի նա՝ Մհամմատ-Միրզայն երբէք չէր տեսեալ ական յանդիման զպատերազմ ոռւսաց և զինուորաց նոցա: Վերջապէս սարտարն յակամայս, ի միասին ընդ այնչափ զօրաց և չորից թնդանօթաց, ել ի Գանձակայ դէպի կողմն Շամքօրայ և եկաց օր մի առ եգերբ Շամքօր գետոյն:

Ընդ առաւօտն աւուրն այնորիկ կնեազ Մատաթովն ընդ զօրաց ոռւսաց եկեալ՝ սկիզբն արար պատերազմի յայնկոյս գետոյն Շամքօրայ²⁹³, որում չկարացեալ ընդդիմակաց լինել՝ զօրք պարսից առհասարակ ի փախուստ փութացան: Եւ ինքն՝ Ամիր խան սարտարն ևս ի նմին պատերազմի սպանաւ: Մհամմատ-Միրզայն միայնակ ընդ զօրացն փախուցեալ²⁹⁴՝ եկն ի կողմն Ղարաբաղայ առ Հայր Աբբաս-Միրզայն: Զկնի որոց զօրք ոռւսաց հետապնդեալ մինչ ի սահմանս Գանձակայ՝ զբազումս ի նոցանէ ի սուր սուսերի մաշեցին:

Ի նմին իսկ յայնմ գիշերի, յորում զօրք պարսից փախեան ի Գանձակայ դէպի Ղարաբաղ, Նազար-Ալի խանն ևս առ անչափ երկիւղի զօրօք իւրովք հանդերձ ելեալ ի բերդէն Գանձակայ՝ եկն դէպի Ղարաբաղ: Յայնմ պատերազմի առաւել (53ա) քան հազար անձինք ի սուր սուսերի մաշեցան և ի ձեռս ոռւսաց անկան: Մհամմատ-Միրզայն ընդ մնացեալ զօրացն պարտելոց եկն և եհար զբանակն առ եգերբ Թարթար գետոյն²⁹⁵:

Ի հասանիլն այսր համբաւոյ առ շահատայն՝ չուեալ ի բանակէ իւրմէ, որ առընթեր Շուշի բերդին, դիմեաց յԱղտամ, և անդուստ ինչ-ինչ ի ծանրոցաց իւրոց առաքեալ ի Դավրէժ,

²⁹³ Շամքօրի ճակատամարտը տեղի է ունեցել 1826 թ. սեպտեմբերի 3-ին:

²⁹⁴ Մուհամմեդ-Միրզան այնքան հապճեպ էր փախուստի դիմել, որ չէր հասցրել պարսկական ճամբարից դուրս բերել անգամ իր հետ վերցրած հարեմը (տե՛ս Զյուրքյան Ա., 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Ե., 2000, էջ 51):

²⁹⁵ Աղիզյոզալ-բեկի երկի Բաքվի 1950 թ. հրատարակութայն մեջ սույն գլխի վերոբերյալ ողջ շարադրանքը, ինչպես նաև Շամքօրի ճակատամարտի նկարագրությունը բացակայում է (հմմտ. Мирза Адигезаль-бек, указ. соч., с. 120):

Թողլով զՄեհտի-Ղուլի խանն յԱլիքեհազիզն (Արասպարըու) Ղարաբաղը ինքն փութացաւ դէպի Գանձակ:

Մատաթովն, յետ սպանանելոյ զԱմիր խան սարտարն, եմուտ ի Գանձակ²⁹⁶: Յետ որոյ կուսակալն Պասկեվիչ զօրօք հանդերձ յարեցաւ ի նա²⁹⁷:

Շահատայն Աբբաս-Միրզայն ի հասանիլ ի գետն Թարթար՝ զայրացաւ ի վերայ արանց, եղելոց առ որդւոյ իւրում Մհամմատ-Միրզայի, վասն թողլոյ նոցա զսարտարն իւրեանց և ի փախուստ փութալոյն: Եւ հրամայեաց գերծուլ՝ զմօրուսն Նազար-Ալի խանին և հեծուցեալ զնայ յէջ՝ շրջեցուցանել ընդ ամենայն բանակն, զի ասէր, վասն է՞ր չէ ելեալ հանդերձ զօրօք ընդ տեսչութեամբ իւրով եղելովք յօգնութիւն Ամիր խան սարտարայ և Մհամմատ-Միրզայի յայնպիսի երեւելի դէպս և ինքնազլուիս ելեալ ի բերդէն Գանձակայ՝ փախուցեալ է²⁹⁸: Եւ չուեալ ընդ անթիւ և անհամար բազմութեան՝ եմուտ ի սահմանս Գանձակայ, զծանրոցս թողեալ առ Քիւրակ-չայ գետովն, ինքն առեալ զհեծելազօրսն և զհետևակսն ի Զազալու անուն տեղւոջ, որ ի վեր քան զքաղաքն, զգիշերն անդ ազաւ:

Ընդ առաւօտն վաղ քաջ կուսակալն Պասկեվիչ և զենբարալ Մատաթովն դասաւորեալ զզօրս իւրեանց և յարդարեալ ի դասս դասս՝ եկին մինչև ի մերձակայս շէյխ Նիզամայ անուանի կեօկ-իմամ, և հանդիպեալ զօրացն պարսից՝ յարդարեցին

²⁹⁶ Գեմ. Վ. Մադաթովի զորարանակը Գանձակ է մտել 1826թ. սեպտեմբերի 4-ին (տե՛ս АКАК, т. VI, ч. II, д. 678, с. 374; Присоединение Восточной Армении к России. Сборник документов, т. II, Ереван, 1978, док. № 128, с. 204):

